ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՔԱՐԱՆՁԱՎԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

«Սովետական գրող»
Հրատարակչություն
1979

Բովանդակություն

Գլուխ առաջին
ՏՂԱՆ ՈՒ ՇՈՒՆԸ 3
Գլուխ երկրորդ
ՀՈՒՅՍ ԵՎ ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ 8
Գլուխ երրորդ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՏՂԱՆ 11
Գլուխ չորրորդ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՈՅԱՑԱՎ ՓՈՔՐԻԿ ՄԱՌԱՆԸ 17
Գլուխ հինգերորդ
ԹԵ ԻՆՉ ՕԳՈՒՏ ՏՎԵՑ ԴԱՌԸ ԾՈՒԽԸ 22
Գլուխ վեցերորդ
ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ 29
Գլուխ յոթերորդ
ՆՈՐ ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ 35
Գլուխ ութերորդ
ՀՈՒՅՍ ԵՎ ՀՈՒՍԱԽԱԲՈՒԹՅՈՒՆ 41
Գլուխ իններորդ
ԱՊԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՌԱՊԱՆՔ 46
Գլուխ տասներորդ
ՎԵՐՋԻՆ ՀՈՒՅՍԸ 53

Գլուխ առաջին

ՏՂԱՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Ոչ մի աշխարհագրական քարտեզի վրա դուք չեք գտնի Սոթ գյուղը:

Փոքրիկ գյուղ է Սոթը: Գտնվում է մի մեծ լեռնաշղթայի ամենահեռավոր ծալքերից մեկում: Նրանից վերև բնակավայր չկա: Այնտեղ լեռների բարձր գագաթները ամառ-ձմեռ ծածկված են հավերժական ձյունով, և օգոստոսյան ամենապարզ օրերին անգամ ամպ է լինում նրանց գլխին:

Սոթում ծառ չկա: Ձմեռը ծանր ու խիստ է լինում: Բայց Սոթը գեղեցիկ է գարնանն ու ամռանը: Հենց որ ձյունը հալվում է, սարերի լանջերը ծածկվում են երփներանգ ծաղիկներով: Նրանք դալար են մնամ մինչև ուշ աշուն, մինչև սառը քամիներից փակվում են նրանց կապույտ, կարմիր ու սպիտակ աչիկները:

Սոթը ձորի մեջ է: Բոլոր տներից երևում է լեռնաշխարհի ամենաբարձր գագաթը՝ հավերժական ձյունով ծածկված Ձմրուխտ լեռը: Ոչխարի մեծ հոտեր ունի Սոթի կոլտնտեսությունը: Ձմռանը ոչխարը պահում են գյուղից ոչ շատ հեռու գտնվող Գայլաբնի ձորի հին փարախներում:

Սոթի ոչխարաբուծական ֆերմայի հովիվներից է նաև պատանի Վանիկ Կուխտունցի հայրը: Նա իր հովիվ ընկերների հետ ձմեռը մնում է Գայլաբնի ձորում և հազվադեպ է գյուղ գալիս:

Ամեն շաբաթ օր Վանիկը նրա համար ուտելիք ու փոխնորդ է տանում փարախները:

Վանիկը սովորում է յոթերորդ դասարանում: Կարճահասակ ու պնդակազմ տղա է նա, աչքերը խոշոր են, մազերը՝ կուպրի պես սև: Ամբողջ ամառը նա անց է կացնում հոր հետ և դրա համար էլ իրենց դասարանցիներից ոչ ոք նրա պես լավ չի ճանաչում ձորերի արահետները, սարերի կածանները, արոտներն ու աղբյուրները:

Թեև խաղաղ բնավորության ունի Վանիկը, բայց վա՜յ այն տղային, որ փորձի վիրավորել նրան: Բռնցքակռվի մեջ նրանից վախենում են նույնիսկ իրենից մեծերը:

* * *

Ձմեռ էր, ծանր ձմեռ:

Այդ օրը Կախտունց Վանիկը դպրոցից շուտ վերադարձավ տան: Հայոց լեզվի ուսուցիչը հիվանդացել էր, և դիրեկտորն ստիպված էր եղել աշակերտներին արձակել առաջին երեք դասից հետո: Տուն գալով՝ Վանիկը գրքերը թափեց պատուհանի գոգին ու պատրաստվեց մաքրել իրենց բակի ձյունը: Բայց նոր էր սկսել ձյունը դեն տալ, երբ մայրն ասաց.

— Ձյունը ես կմաքրեմ, Վանի՜կ ջան, դու արի հորդ համար ուտելիք ու փոխնորդ տար ձմեռանոց:

Վանիկն ուրախացավ: Չէ՞ որ ինքը երկու գիշեր մնալու է ձմեռանոցում՝ հովիվների մոտ... Այդ օրը շաբաթ էր, ուրեմն կվերադառնա երկուշաբթի առավոտյան: Դասագրքերը կտանի հետը, դասերը կսովորի ձմեռանոցում ու մի լավ կխաղա նորածին գառների հետ, որոնց գժվելու չափ սիրում է:

Մոր պատվերով նա տաք հագնվեց, ականջակալով գլխարկը դրեց և մեծ ախորժակով սկսեց ուտել մոր արած ձվածեղը: Մայրն ուտելիքի կապոցներն ու հոր փոխնորդը դասավորում էր խուրջինի մեծ-մեծ աչքերում՝ շուտ-շուտ չորս կողմը նայելով, թե չլինի որևէ կարևոր բան հանկարծ մոռանա:

— Գրքերս էլ դիր խուրջինում, մայրի՜կ,— խնդրեց Վանիկը:— Հրեն՝ պատուհանի գոգին են:

— Շալակդ ծանր կլինի, բալա ջան,— ասաց մայրը:— Ախր ես հացից բացի ուրիշ բան էլ եմ դրել խուրջինում: Հերդ ձեռքի լամպ ու նավթ է ուզել, բա չդնե՞մ:

— Դի՜ր, դի՜ր, մայրի՜կ ջան, կտանեմ: Ճամփան հեռու չէ, գրքերս էլ դիր դրանց հետ:

Մայրը կատարեց որդու կամքը և բերանը պարանով կապած խուրջինը տվեց նրա շալակը,

հետո մի ուրիշ, ավելի երկար պարանով խուրջինը կապեց որդու մեջքին, որ չերերա, վայր չընկնի: Ապա երեք բուռ չոր թութ ու ընկույզ լցրեց գրպանները:
— Դե գնա, բալա՛ ջան,— քնքշանքով ասաց նա:— Ճամփից դուրս չգաս, հա՛: Ուշքդ էս կողմ, էն կողմ չգցես: Արևոտ օր է, ճամփան բռնի, գնա...
Թեև Վանիկին դուր չեկան մոր խրատները, սակայն ձայն չհանեց, ուրախ էր, որ գնում է ձմեռանոց: Հետաքրքիր ու հաճելի է գիշերը մնալ այնտեղ:
Հենց որ մթնում է, հովիվները նստում են փարախում վառած կրակի շուրջը և սկսում հին զրույցներ ու հեքիաթներ պատմել... Շները թազնում են դռների մոտ, ոչխարը որոճում է, իսկ նորածին գառները մայում են անմեղ, ասես մանկական ձայնով...
Գլխարկի ականջակալների թելերը ծնոտի տակ հանգուցելով՝ Վանիկը դուրս եկավ տնից, բայց դեռ բակից չէր հեռացել, երբ մայրը ձայն տվեց.
— Վանի՛կ ջան, կարո՞ղ ես հորդ որսի հրացանն էլ տանել: Հերդ ապսպրել է, որ ուղարկեմ, եթե բեռդ ծանր չի, հրացանն էլ տար:
— Բե՛ր, բե՛ր,— ուրախացավ Վանիկը,— կտանեմ, բեռս սկի էլ ծանր չի, կտանե՛մ:
Մայրը հրացանը գցեց որդու ուսը, տասնհինգ–քսան փամփուշտ լցրեց նրա գրպանները և խնդրեց, որ ճանապարհին իզուր տեղը չկրակի:
Վանիկն արդեն դուրս էր եկել գյուղից ու անցել գետի կամուրջը, երբ նկատեց, որ իրենց Ղափլան շունը հետևում է իրեն:
— Դու ինչի՞ ես գալիս,— գոռաց նրա վրա,— էս րոպեին ետ դառ:
Ղափլանը ոտքերի վրա պպզեց ձյան մեջ ու այնպես խղճահարված նայեց Վանիկին, որ կարծես ասում էր. «Ախր ես էլ եմ ուզում գալ ձմեռանոց, ինձ էլ տար»:
Վանիկը նորից գոռաց շան վրա, քացով խփեց նրա կրծքին, որ ետ դառնա, սակայն շունը մեջքի վրա պառկեց, կտրած ականջները կծկեց և առջևի թաթերը պարզեց դեպի տերը: Ոչ մի կերպ չէր ուզում ետ դառնալ: Նույնիսկ չվախեցավ, երբ Վանիկը հրացանն ուղղեց նրա գլխին ու չխկչխկացրեց:
— Դե, ես գնում եմ, ապա փորձիր իմ հետևից գալ, այն ժամանակ փորդ ծխով կլցնեմ,— գոռաց Վանիկն ու հրացանը նորից ուսը գցելով՝ շարունակեց ճանապարհը: Բայց հենց որ մի տասը քայլ հեռացավ, Ղափլանը վեր կացավ, մեջքն ուղղեց, կտրած պոչը կոխեց ոտների արանքն ու դանդաղ հետևեց տղային: Վանիկը բարկացած շուռ եկավ, վազելով հասավ նրան ու հրացանի կոթով մի երկու անգամ խփեց նրա մեջքին:
— Ե՛տ դառ, ասում եմ, անպետքի մեկը, ե՛տ դառ, թե չէ հենց հիմա կսատկացնեմ քեզ...
Նա խփում էր շանը, սակայն Ղափլանը միայն ատամներն էր կրճտացնում և բոլորովին միտք չուներ ետ դառնալու: Մի անգամ էլ նա ատամներն այնպես կրճտացրեց ու այնպես նայեց Վանիկին, որ սա նույնիսկ ահ զգաց:
— Դե գալիս ես, եկ, սատկածի՛ մեկը,— զիջեց ճարահատ տղան:— Որ ֆերմայի շները բուրդդ զզեն, էն ժամանակ կիմանաս...— Մի աքացի էլ տալով նրա մեջքին, Վանիկը շուռ եկավ ու քայլերն արագացրեց:
Ղափլանի աչքերում ուրախ կայծեր երևացին: Ճիշտ է, մի լավ քոթակ կերավ, բայց տիրոջ համառությունը կոտրեց և ահա գնում է նրա հետևից: Շուտով նույնիսկ առաջ ընկավ Վանիկից ու սկսեց հետամուտ լինել քարերի վրա իջած հատուկենտ ագռավներին:
Ձյունը փայլում էր արևի շլացուցիչ լույսից, նրա վրա թեև ոտնահետքեր չէին երևում, բայց Վանիկը լավ գիտեր ճանապարհը: Ահա այսպես մի երկու-երեք կիլոմետր կգնա ձորն ի վեր, հետո կթեքվի ձախ, կանցնի Սև սարի լեռնանցքն ու կիջնի Գայլաբնի ձորը: Տեղ կհասնի կեսօրին:
Շունն ուրախ գնում էր նրա առջևից և երբեմն լիզում ձյան սառած շերտը: Կես ժամ հետո

նրանք արդեն Սև սարի գլխին էին: Բարձունքից մի կախարդական բնապատկեր բացվեց նրանց առջև: Չորս կողմը համատարած ձյուն էր: Կարծես բոլոր սարերն այդտեղ շաքարից լինեին, իսկ ձորերը՝ սառած մածունով լի: Ձյունն այնպես էր փայլատակում, որ Վանիկն ակամա կկոցում էր աչքերը: Շատ լավ երևում էր ոչ միայն Ձմրուխտ սարի ճերմակ բյուրեղի պես փայլատակող գագաթը, այլև նրա ստորոտի Կապուտան լիճը, որը հիմա մի հարթ ու հավասար սառցադաշտ էր դարձել:

Շրջապատում մեռելային լռություն էր: Ո՛չ մի ձայն, ո՛չ մի շարժում չկար: Օդն այնպես խաղաղ էր ու անշարժ, որ ասես նա էլ էր սառել: Վանիկն իր կյանքում երբեք այդպիսի խոր լռության մեջ չէր եղել: Մի պահ նրան թվաց, թե ինքը գտնվում է մի վիթխարի դատարկության մեջ՝ երկրի ու երկնքի արանքում: Այդ սարսափելի լռությունը ահ պատճառեց նրան: Բայց և այնպես նա կլանված նայում էր լեռնաշխարհին, որ ասես մի փոթորկված ծով էր եղել և մի մոգական ուժից կախարդվելով, հանկարծ սառել, քարացել էր: Ոչ մի սև բիծ չէր աղտոտում շրջակայքի մաքուր ճերմակությունը: Ձորալանջերն ու արոտավայրերը, քարակարկառներն ու անհամար գետակները, լիճն ու աղբյուրները թաղվել էին ձյան տակ ու այդպես մրափած կմնան մինչև գարուն:

Վանիկը գնում էր՝ չհասկանալով, թե ինչու է այդ օրն իր սիրտը լցվել մի արտակարգ հպարտությամբ: Շրջակայքի քար լռությունի՞ց էր դա, թե՞ այն բանից, որ ինքը գուցե սոթեցի առաջին պատանին է, որ ձմեռը մեն-մենակ ոտք է դրել Սև սարի կուսական ձյուներին և ասես քայլում է ճերմակ ամպերի վրայով: Նա հիշեց, որ այդ օրը 1956 թվականի փետրվարի տասնյոթն է, և Սև սարը ծովի մակերևույթից բարձր է 5274 մետր:

Երկուսն էլ քայլում էին զվարթ: Անարատ ձյունը հաճույք էր պատճառում: Ղափլանը գնում էր առջևից: Դա մի մեծ, լեռնային գամփռ էր մորթը կարմիր, տեղ-տեղ սև ու սպիտակ խազերով: Երբ Ղափլանը դեռ փոքր քոթոթ էր, Վանիկի հայրը կտրեց նրա ականջներն ու պոչը, որ սուր հոտառություն և լավ լսողության ունենա: Գեղեցիկ շուն էր Ղափլանը: Ահա նա քայլում է գլուխը բարձր, դունչը ցցած: Նրա խելացի աչքերի վերևում երկու սպիտակ պիծակ կա: Դրանք ավելի ահազդու են դարձնում նրան:

Երկու ընկերներն արդեն իջել էին Սև սարից ու հասել լճափի տափարակին, երբ Ղափլանը դունչը տնկեց վեր ու անհանգիստ պտտվեց ձյան մեջ: Վանիկն ուշադրություն չդարձրեց նրա արարքին, բայց երբ շունն սկսեց տարօրինակ ձայնով հաչել, նա զարմացած ու մի քիչ էլ անհանգստացած հարցրեց.

— Ի՞նչ է պատահել, Ղափլա՛ն, էդ ո՞ւմ վրա ես հաչում:

— Հա՛ֆ, հա՛ֆ,— դունչը երկինք ցցած՝ շարունակեց հաչել Ղափլանը:

Վանիկը նայեց չորս կողմը, բայց համատարած ճերմակության վրա ոչ մի կասկածելի բան չնկատելով՝ շարունակեց ճանապարհը: Արդեն մոտեցել էր լճափնյա ժայռերին, երբ նրա աչքերը հանկարծ ձյունափոշով լցվեցին: Նա թևքով սրբեց աչքերը, բայց փոշին լցվեց նաև բերանը, ականջները, քիթը... Քամին երկար սուլեց ականջի տակ: Վանիկն աչքերը մի կերպ բաց արեց և շուրջը նայելով՝ զարհուրեց...

Լեռնաշխարհն ասես եռում էր: Գետնի վրայով վազում էին անթիվ-անհամար ձյունեղեն ալիքներ: Արևը կարմրել էր ու հետզհետե կուլ էր գնում ճերմակ մշուշի մեջ: Վանիկը տեսավ բարձրացող բուքն ու դողաց: Նա արդեն բավականին հեռացել էր Սև սարի լեռնանցքից և հիմա գտնվում էր հենց Ձմրուխտ սարի ստորոտում՝ սառած լճից քիչ հեռու: Գետնի վրայով վազող ձյունի անթիվ ալիքները սարսափեցրին նրան: Պակաս սարսափած չէր նաև շունը: Նա պպզել էր ետևի ոտքերի վրա և դունչը երկինք ցցած՝ ոռնում էր...

Դա մեծ դժբախտության նշան էր:

Վանիկը շուռ եկավ դեպի Սև սարի լեռնանցքը, սակայն մի երկու քայլ հազիվ էր արել, երբ

բուքը մոլեգնեց վայրենի կատաղությամբ: Ամեն ինչ կորավ աչքից: Քամին քրքրում էր պատանու զգեստը, ձյունախեղդ անում նրան:
— Ապե՛ր, հե՛յ...— հուսահատությունից իրեն կորցնելով՝ գոռաց Վանիկը: Բայց նրա ձայնը խեղդվեց քամու խլացուցիչ ոռնոցի մեջ:
Այլևս ոչինչ չէր երևում: Վանիկը խարխափում էր կույրի պես: Ո՞րն է արևելքը, հյուսիսը, ո՞ր կողմն է Սև սարի լեռնանցքը, չգիտեր, և անհնարին էր որոշել: «Կորա՛ծ եմ», — սոսկումով մտածեց նա, լացը խեղդեց կոկորդը:
— Ու—ո՛ւ...— հազարերախ գազանի պես ոռնում էր բաքը՝ ծառս լինելով մինչև երկնքի խորքերը:
Վանիկը քայլում էր, բայց ո՞ր ուղղությամբ, չէր իմանում: Նրան կպած շունը հազիվ էր ոտքերը հանում ձյան միջից: Վանիկը աչքերը չէր կարողանում բաց անել, նույնիսկ չէր տեսնում շանը, որը պոկ չէր գալիս իրենից: «Ամեն կերպ պետք է ոտքի վրա մնամ, աշխատեմ վայր չընկնել, հենց որ ընկա, բուքն իսկույն ինձ կթաղի ձյան տակ»: Այս միտքն էր մեխվել նրա գլխում, ու նա ոտքերն ավելի ամուր էր դնում գետնին՝ վայր չընկնելու համար:
Սակայն նրա ուժերն սպառվում էին. դժվարությամբ էր ոտքերը «հանում ձյան միջից, հազիվ էր կարողանում դիմադրել բքի մոլեգին հարվածներին: Որքան էլ զգույշ էր փոխում քայլերը, այնուամենայնիվ, չիմացավ, թե ինչպես հանկարծ սայթաքեց... Մի պահ զգաց, որ պտտվում է դատարկ տարածության մեջ, հետո թափով ընկավ ինչ-որ փափուկ բանի վրա... Նրան թվաց, թե մեռնում է, ու ահից աչքերը փակեց...

* * *

«Մի՞թե կենդանի եմ,— ինքն իրեն հարցրեց Վանիկը, երբ աչքերը բաց արեց ու իրեն գտավ թանձր խավարի մեջ:— Եթե կենդանի եմ, հապա այս ի՞նչ խավար է, ինչո՞ւ չեմ կարողանում տեղիցս վեր կենալ, ինչո՞ւ չեմ տեսնում ձյունը, սարերը, ձորերը...»
Նրան թվաց, թե ձեռքերը կտրվել են, ուստի շարժեց աջ ձեռքը, հետո՝ ձախը: Ձեռքերն անվնաս էին, ոտքերը՝ նույնպես: Սակայն ինչ-որ ծանրություն ճնշում է մեջքը: Ի՞նչ բան է: Վանիկը ձեռքը տարավ դեպի ուսը: Խուրջինն էր: Ինչ լավ է, որ խուրջինը կապած է եղել մեջքին, թե չէ կընկներ ու կկորչեր: Նա շոշափեց իր չորս կողմը: Մատները դիպան մի խիստ սառը բանի, հասկացավ, որ դա էլ հրացանն է: Այս արդեն շատ լավ է:
Սակայն նրա զարմանքը մեծ եղավ, երբ իր չորս կողմը շոշափելով տեսավ, որ ինքը խրված է ձյունաթմբի մեջ և շուրջը խավար է: Մի՞թե արդեն գիշերը վրա է հասել: Վանիկը նայեց վերև: Ոչ մի աստղ չէր երևում: Միայն մի փոքրիկ կաթնագույն շրջանակ կար գլխավերևում՝ խավարի մեջ, ուրիշ ոչինչ: Վանիկն աչքերը չռած՝ երկար նայեց այդ սպիտակ շրջանակին, բայց չհասկացավ, թե ի՞նչ բան է դա:
Հանկարծ նա զգաց, որ ինքը մի շատ թանկագին բան է կորցրել: Ի՞նչ: Խուրջինն ու հրացանն իր հետ են, բայց ո՞ւր է իր շունը՝ Ղափլանը: Ամեն հնարավոր վտանգ մոռացած Վանիկը կանչեց.
— Ղափլա՛ն, հե՛յ...
Նրա ձայնն այնպես թնդաց, կարծես ինքը մի վիթխարի դատարկ կարասի մեջ լիներ: Նա զարհուրեց սեփական ձայնից, բայց ավելի սարսափելին դրա արձագանքն էր.
— Հե՛ե՛ե՛ե՛յ...
Կարծես ինչ-որ տեղ ժայռ փլվեց կամ հարյուրավոր արծիվներ թափահարեցին իրենց թևերը: Արձագանքը դանդաղ մարեց, ու Վանիկը հենց իր մոտ լսեց շան մեղմիկ ձայնը: Հետո Ղափլանի տաք շունչը դիպավ երեսին: Ղափլանն սկսեց լիզել տիրոջ դեմքը, ձեռքերը: Լիզում էր ու տխուր-տխուր կաղկանձում: Վանիկը գրկեց նրան, համբուրեց թաց դունչն ու շշուկով ասաց.

— Մենք ողջ ենք, Ղափլան ջան, ո՛ղջ...— ասաց ու հանկարծ լաց եղավ:— Ողջ ենք, բայց չգիտեմ որտեղ ենք, Ղափլան, սիրելի՛ս... Դու էլ չգիտե՞ս, թե որտեղ ենք:
Ի՞նչ պատասխան կարող էր տալ անլեզու անասունը: Նա միայն նորից տխուր կաղկանձեց ու լռեց... Երկար ժամանակ այդ անորոշ, ահավոր վիճակում մնալուց հետո, վերջապես, Վանիկը վճռեց պարզել, թե որտեղ են գտնվում իրենք: Չլինի ընկել են մի խոր անդունդ կամ ուղղակի մեռած են... Խավարի մեջ ամեն ինչ առեղծվածային էր: Որտե՞ղ է գտնվում ինքը, ինչո՞ւ է իրեն կպած շանը դողում, այն ի՞նչ կաթնագույն շրջանակ է իր գլխավերևում: Այս հարցերն իրար հետևից ծնվում էին նրա գլխում ու մնում անպատասխան: Շան վիզն ամուր գրկած՝ նա կուչ էր եկել ու անշարժացել: Վախենում էր վեր կենալ, որևէ քայլ անել խավարի մեջ: Ի՞նչ անակնկալի ասես, որ չի հանդիպի...
Այդպես անցավ բավական ժամանակ: Շունն այլևս չէր դողում, այլ իր մարմնի ջերմությամբ տաքացնելով տիրոջ ծնկները՝ ննջում էր: Վանիկը սիրտ առավ ու կամաց ոտքի կանգնեց: Ոչինչ չէր երևում, ոչ մի ձայն չէր լսվում: «Պետք է պարզել, թե որտեղ եմ»,— կատարվածից դեռևս լիովին չսթափված՝ մտածեց Վանիկը: Մի վայրկյան առաջ նրան թվում էր, որ եթե ինքը շարժվի տեղից կամ մի թեթև ձայն հանի, ապա ինչ-որ վատ բան կկատարվի: Բայց ինքն արդեն ոտքի վրա է, ձայն տվեց շանը, սակայն ոչ մի արտակարգ բան չպատահեց: Այդ բանը սրտապնդեց նրան: Ապա հիշելով, որ մայրը խուրջինում լուցկու տուփեր էր տեղավորում, վճռեց խուրջինն իջեցնել մեջքից և լուցկի հանել: Այդպես էլ արեց: Խուրջինի մի աչքի պարանը քանդեց ու ձեռքը ներս կոխեց: Փոքրիկ կապոցները շոշափելով՝ հանեց նավթի թիթեղյա ամանը, որի բերանը մայրն ամուր փակել էր կարտոֆիլով և կապել փալասներով: Հետո հանեց լուցկու մի տուփ ու ձեռքի փոքրիկ լամպը: Լուցկու մի հատիկ վերցնելով ձեռքը, Վանիկը խոր շունչ քաշեց: Տատանվում էր՝ վառե՞լ լուցկին, թե չէ: Կարող է պատահել, որ մթության մեջ վայրի գազաններ լինեն և լույսից արթնանան ու... Սակայն մինչև ե՞րբ կարող է մնալ խավարի մեջ: Ոչ, պետք է լուցկին վառել: Վառեց ու նայեց շուրջը: Առաջին տպավորությունն այն էր, որ ինքն ու իր շունն ընկել են մի վիթխարի քարանձավ: Ուրեմն պետք է նախ և առաջ պարզել, թե դա ինչ քարանձավ է: Իսկ դրա համար պետք է վառել ձեռքի փոքրիկ լամպը:
Հենց որ նա որոշեց լամպը վառել, մի տեսակ վճռականություն ու խիզախության ստացավ: Մթության մեջ շոյեց շան գլուխը և սկսեց հառաչանքով խոսել նրա հետ.
— Ա՜խ, Ղափլա՜ն ջան, տեսնո՞ւմ ես ինչ օրի հասանք, ես ու դու ընկել ենք այս խավար աշխարհը:
Նա շոշափելով բարձրացրեց փոքրիկ լամպի ցանցապատ ապակին, մեջը մի քիչ նավթ լցրեց ու պատրույգը վառեց: Խավարը մի տասը մետրի չափ նահանջեց, ու նա հնարավորություն ունեցավ տնտղել իր շրջապատը:
Այն վայրը, ուր ընկել էին երկու բարեկամները, մթին պատերով մի ստորերկրյա քարանձավ էր: Նրա առաստաղը բարձր էր և հազիվ էր երևում լամպի աղոտ լույսի տակ: Տեսնելով, որ ինքը գտնվում է ստորերկրյա անձավի մեջ, Վանիկը նորից ամբողջ մարմնով սարսռաց: Բայց և այնպես իր մեջ ուժ գտավ ու մի տասը քայլ գնաց խավարում: Լամպի լույսի տակ նա նկատեց, որ անձավի ժայռեղեն պատերը աստիճանաբար հեռանում էին իրարից, և անձավը երկար ու բարձր առաստաղ ունեցող թունելի ձև է ստանում: Ձախ կողմից առաստաղը ավելի բարձր էր, և հենց նրա մեջտեղն էր գտնվում վերևի կլոր անցքը: Դրա միջով անցնող լույսի թույլ շողերը չէին կարողանում ցրել խավարը: Անցքից միայն երբեմն ձյունափոշի էր թափվում ներքև: Վանիկը երկար նայեց այդ անցքին ու մոտավորապես որոշեց, որ դա հատակից բարձր է առնվազն տասը-տասներկու մետր: Հենց այդ անցքի տակ էր գտնվում ձյունի այն կույտը, որի վրա էին ընկել ինքն ու Ղափլանը: Չլիներ այդ ձնակույտը, երկուսն էլ կջախջախվեին:
Այժմ Վանիկի համար պարզ էր, որ ինքն ու Ղափլանը գտնվում են ստորերկրյա մի մեծ

քարանձավում: Նա լամպի պատրույգը իջեցրեց՝ նավթը խնայելու համար, իսկ քիչ հետո առաստաղի անցքից մի հատիկ աստղ նկատեց: Նշանակում է՝ բուքը դադարել է ու օրը մթնել:

Գլուխ երկրորդ

ՀՈՒՅՍ ԵՎ ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Քարանձավը դիտելիս Վանիկը դեռևս լիովին չէր պատկերացնում այն ծանր ու անմխիթար վիճակը, որի մեջ ընկել էր ինքը: Բայց երբ եկավ ու նստեց խուրջինի մոտ, իր ամբողջ ահավորությամբ ըմբռնեց գլխին եկած մեծ դժբախտությունը: «Այստեղ ես կմեռնեմ»,— մտածեց նա, և նրա սիրտն ասես դադարեց բաբախելուց, խոշոր աչքերը լցվեցին արցունքներով: Նա փռվեց գետնին ու անզուսպ հեկեկաց:

Նրա շուրջն անապատային անկենդանություն էր, որը սարսափ էր պատճառում նրան: Լացը կտրելով՝ նա գլուխը բարձրացրեց և ինքն էլ չիմացավ, թե ինչու աղաղակեց.

— Հե՛, հե՛, հե՛ե՛ե՛յ...— նրա ձայնը ալիք-ալիք տարածվեց խավարում: Ինքն իր ձայնին ականջ դնելով՝ սաստիկ զարմացավ, թե ինչու է ձայնը տարածվում հեռուներում: Մի՞թե քարանձավն անեզր է:

Նա զայրույթով հանգցրեց լամպը՝ նորից ընկավ գետնին ու սկսեց թավալվել: Երբ թպրտալուց հոգնեց, մնաց մեջքի վրա պառկած: Նրան թվաց, թե ինքը մեռնում է, թե ինչ-որ անտեսանելի, սուր ճիրաններ են խրվում կոկորդը: Զարհուրելի մի թմրություն իջավ նրա վրա ու միտքը դադարեց գործելուց:

* * *

Այս ի՞նչ է, քնե՞լ է, թե արդեն մեռած է: Մեջքը ցավում է, ոտքերը մրսում են: Եթե մեռած է, հապա ինչո՞ւ է ցավ ու ցուրտ զգում, թևն էլ ահա շարժվում է: Չէ, ուրեմն չի մեռել: Դե ինչո՞ւ մեռնել, պետք է ապրել: Չէ՞ որ կարելի է այս խավար քարանձավում էլ ապրել: Ինքը մենակ չէ, Ղափլանն իր հետ է, խուրջինում ուտելիք կա ու քարանձավում այնքան էլ ցուրտ չէ: Եթե ցուրտ լիներ, ինքը բոլորովին կսառչեր քնած ժամանակ:

— Չէ, մենք չպիտի մեռնենք, Ղափլան,— անսպասելի գոչեց Վանիկն ու ծառս եղավ տեղը:— Չպիտի մեռնենք,— կրկնեց նա:— Մենք կարող ենք երկար դիմանալ և քարանձավից դուրս գալու ելք գտնել: Ես հիմարություն եմ անում, որ անբան վեր եմ ընկել տեղս: Եթե այս ստորերկրյա քարանձավից դուրս գալու ոչ մի ելք էլ չգտնեմ, միևնույն է՝ ես կարող եմ ապրել, դիմանալ մինչև գարուն, մինչև մերոնք բարձրանան սարերը:

Վանիկը վճռեց պարզել, թե ինչ քարանձավի մեջ է ընկել ինքը: Նա լամպը վառեց և սկսեց ուսումնասիրել իր «երկիրը»: Իր կանգնած տեղից մոտեցավ քարանձավի ձախ կողմի պատին ու նրա երկարությամբ գնաց դեպի առաստաղի անցքը: Անցքի տակից անձավի պատը թեքվում էր աջ, ապա դարձյալ աջ ու մի հիսուն քայլ ձգվելուց հետո թեքվում ձախ ու միանում աջ կողմի պատին: Այդ պատերը բարձր էին: Միայն խորքի պատը որոշ խորդուբորդ տեղեր ուներ, մյուսների վրա ոչ մի ցցվածք, ոչ մի խոռոչ չկար: Անձավը դրսի աշխարհի հետ կապվում էր միայն առաստաղի անցքի միջով: Երկար ժամանակ առաստաղի անցքին նայելուց հետո Վանիկը ձեռքը թափ տվեց: Ոչ մի հնար չկար բարձրանալ մինչև այդ անցքը: Ուրիշ բան էր, եթե քարանձավում քար լիներ: Այն դեպքում կարելի էր քարից բուրգ շինել ու նրա վրայով մագլցելով հասնել անցքին: Բայց քարանձավում քար կա՞ արդյոք:

Լամպն առաջ պահելով Վանիկն սկսեց զննել իր «երկրի» հատակը: Սակայն ընդամենը մի երկու չեչաքար գտավ ձնաթմբի մոտ ընկած, որոնք ով գիտե, երբ էին վերևից գլորվել ներքև: Վանիկը համոզվեց, որ այդ ստորգետնյա խոռոչից դուրս գալու ոչ մի ելք չկար: Անձավը նման էր քարե վիթխարի արկղի, որ իր համր պատերով ճնշում էր խեղճ պատանու հոգին:

— Չէ, Ղափլա՛ն ջան, այստեղից դուրս պրծնելու ոչ մի հնար չկա,— հառաչեց տղան՝ իրենից

պոկ չեկող շանը դիմելով:— Երկուսս էլ միասին կկորչենք:
Այնուամենայնիվ, նա սկսեց քայլերով չափել իր տարօրինակ բնակարանի երկարությունն ու լայնությունը: Պարզվեց, որ քարանձավի երկարությունը հարյուր մեկ, իսկ լայնությունը քառասունհինգ քայլ է, հատակը ժայռեղեն է, տեղ-տեղ հողի չոր շերտով: Ոչ մի բույս չկար այնտեղ: Իսկ կենդանի շնչի մասին մտածելը նույնիսկ ավելորդ էր:
«Ախ, եթե մերոնք իմանան, թե որտեղ եմ ես, ծտի թևով կգան, թոկ կկախեն և ինձ կհանեն այս հորից»,— հուսահատ մտածում էր տղան: Բայց նա լավ գիտեր, որ գյուղում ոչ ոքի մտքով չի անցնի, թե ինքն ու իր շունը կարող են ընկած լինել Զմրուխտ սարի փոսերը... Մարդիկ իրեն կորոնեն Գայլաբնի ձորի ճանապարհին: Մինչև գարուն, մինչև ձյուների հալվելն ու կանաչի երևալը ոչ ոք չի բարձրանա Կապուտան լճի ափերը: Վանիկը հասկանում էր, որ ինքն ու իր շունը երկար ժամանակ կմնան անհայտության մեջ և, ով գիտե, գուցե այդտեղ էլ մեռնեն... Դառն արցունքները սրբելով՝ նա նստեց խուրջինի մոտ ու սկսեց ինքն իրեն խոսել:
«Այսօր փետրվարի տասնութն է: Բայց գուցե արդեն տասնի՞ննն է: Կարող է այդպես լինել: Գուցե մի օրից ավելի է, ինչ ես ընկել եմ այստեղ: Թող այդպես լինի, հաշվենք, որ այսօր 1956 թվականի փետրվարի տասնինն է: Ուրեմն մինչև սարերի ձյան հալվելը բավական ժամանակ կա»:
Նա լավ գիտեր, որ իրենց ֆերմաները ձմեռանոցից սար են բարձրանում մայիսի քսանին-քսանմեկին, իսկ եթե գարունը ուշանում է, ապա ամառանոց են գալիս մայիսի վերջերին: Նա հաշվեց ու սարսափեց, մինչև ֆերմաների սար բարձրանալը ինսուներեք օր ժամանակ կար:
«Ինսուներեք օ՛ր...— ահ ու դողով կրկնեց նա:— Արդյոք կարո՞ղ եմ ինսուներեք օր ապրել այս խավարի մեջ: Ասենք խավարի հետ հարմարվեցի, բա սնո՞ւնդ: Խուրջինում եղած ուտեստը կարո՞ղ է ինսուներեք օր հերիքել ինձ ու Ղափլանին: Բացի այդ, մի ուրիշ անակնկալ բան չի՞ պատահի այս խավար աշխարհում»:
Հուսահատությունը նորից համակեց Վանիկին, և նա նորից լաց եղավ: Պառկել էր մեջքի վրա, ու թվում էր, թե այլևս ուժ չի գտնի բարձրանալու: Վերջապես նա չիմացավ, թե ինչպես աչքերը դանդաղ փակվեցին ու ընկղմվեց մշուշապատ ինքնամոռացության մեջ:

* * *

Ե՞րբ արթնացավ, հաջորդ օրվա առավոտյա՞ն, թե գիշերվա կեսին, չիմացավ: Իսկ մի՞թե իրոք արթնացել է: Չէ՞ որ անթափանցելի խավար է շուրջը: Ասենք թե արթնացել է, բայց ինչպե՞ս որոշի առավոտը, երեկոն, գիշերը: Վանիկը ձեռքերը տարածեց և շոշափելով գտավ խուրջինն ու հրացանը՝ իր միակ հարստությունը:
Իր ունեցվածքը մոտ քաշելուց հետո, զգաց, որ շունը կողքին է, մի քիչ սրտապնդվեց ու տեղը նստելով՝ նայեց առաստաղին: Կաթնագույն անցքն այլևս չէր երևում: Երևի դեռ լույսը չի բացվել: Սակայն այդ անցքը այնուհետև ոչ մի անգամ չբացվեց: Վանիկը մարմնի մեջ ցուրտ զգաց, մեջքը կարծես չորացել էր, ոտքերը ընդարմացել էին: Մատները փետացե՞լ են, ի՞նչ է: Նա թափահարեց իրեն ու ճմլկոտաց: Ատամները կափկափեցին, չկարողացավ զսպել անհնազանդ ծնոտը:
— Ե՛... չեղա՛վ: Այսպես ես կցրտահարվեմ,— խոսեց ինքն իրեն ու ծառս եղավ տեղում, սկսեց վազվզել մութ անձավում: Այսպես կարելի է տաքանալ: Հենց որ տաքացավ՝ քաղց զգաց: Հարկավոր է մի բան ուտել: Բայց նախ պետք է կարգի բերել տնտեսությունը: Պետք է ապրել ինսուներեք օր, մի կերպ դիմանալ, փրկվել այս զնդանից: Ուրեմն չպետք է հուսալքվել, պիտի հարմարվել ստեղծված պայմաններին, ապրել մինչև գարնան գալը: Նա նստեց խուրջինի մոտ, ու իրար հետևից զանազան պլաններ սկսեցին ծագել նրա գլխում:
Նախ պետք է պարզել, թե որտե՞ղ է գտնվում իր քարանձավը: Այդ բանն անելու համար նա լամպը վառեց, խուրջինից մի տետրակ հանեց և նրա վրա քիմիական մատիտով նշեց իրենց

գյուղի տեղը: Դա մի անկանոն փոքրիկ շրջանակ էր, որի տակ մանր տառերով գրեց «Սոթ գյուղ»: Ապա գծեց Գայլաբնի ձորն ու գետը: Սև սարը գյուղից հեռու էր չորս կիլոմետր, դա ինքը լավ գիտեր, իսկ Սև սարի լեռնանցքից մինչև Կապուտանի եզերքը երեք կիլոմետր է: Այդ էլ լավ գիտե նա: Անցած ամռանն իրենց դասարանը էքսկուրսիա էր եկել այս կողմի արոտավայրերը և իրենք չափել էին ճանապարհները: Ուրեմն, Սոթից մինչև Կապուտան լճի եզերքը յոթ կիլոմետր է: Մտաբերելով Կապուտանի դրվածքը՝ նա համոզվեց, որ ինքը գտնվում է լճի արևմտյան ափին, հենց այն մասում, որտեղ ժայռեր կան: Դա Զմրուխտ սարի տակն է, դրանցից բացի ուրիշ ժայռեր չկան լճի ափին: Նա մի կլոր գծով նշեց Կապուտան լիճը, իսկ երբ նկարեց նրա ափի ժայռերը, հիշեց Կուխտու առասպելն ու սառը քրտինքը վրա տվեց նրան: Թուքը չորացավ:

Եթե այդ պահին մեկնումեկը նայեր Վանիկին, կկարծեր, թե նա ահից խելագարվում է: Առանց այն էլ նրա խոշոր աչքերը չռվել էին, բերանը սեղմվել էր, քիթը սրվել, իսկ այն ձեռքը, որով պահում էր տետրը, դողում էր: Այդպես նա նման էր այն փոքրիկ երեխային, որ տեսնում է կատաղորեն իր վրա հարձակվող շներին և ահից ոչ կարողանում է ձայն հանել, ոչ էլ տեղից շարժվել:

Զարհուրելի էր Կուխտու առասպելը: Հանգուցյալ պապը պատմում էր, թե շատ հնում, Կապուտան լճի մոտերքի ժայռերի մեջ մի Սարդակերպ հրեշ է ապրելիս եղել: Այդ հրեշն ամեն օր ոչխար ու այծ է գողանալիս եղել, ահագին վնասներ տվել հովիվներին: Պապը պատմում էր նաև, թե ինչպես է իր ապուպապը՝ հովիվ Կուխտին, մտել Սարդակերպ հրեշի քարանձավը, կոխ բռնել հետը, ծանր վերքեր ստացել նրանից, բայց և սպանել այդ չար արարածին:

Գուցե շատ դարեր են անցել Կուխտու ապրած օրերից: Թեև այնուհետև ոչ ոք չի տեսել Սարդակերպ հրեշին, բայց չեն մոռացել նրան ու հիմա էլ ոչ մի հովիվ սիրտ չի անում իր ոչխարը տանել լճափի ժայռերի կողմը: «Կընկնենք Կուխտու փոսը»,— ասում են նրանք:

Իսկ երբ այս կողմերում ոչխար կամ այծ էր կորչում, գյուղացիներն ասում էին թե. «Անպայման ընկել է Կուխտու փոսը»:

Այդ հինավուրց առասպելը հիշելով՝ Վանիկի սիրտը դողաց: «Ես էլ անպայման ընկել եմ Սարդակերպ հրեշի քարանձավը՝ Կուխտու փոսը»,— մտածեց նա ու իսկույն մոռացավ քաղցը:

Թեև նա դպրոցական աչքաբաց պատանի էր ու լավ գիտեր, որ իր պապի պատմածը սոսկ առասպել է, որ աշխարհում ո՛չ մի տեղ ո՛չ մի Սարդակերպ հրեշ չի եղել ու չի լինի, սակայն այդ առասպելը մի ճշմարտություն չի պարունակում: Դա այն էր, որ այս ստորերկրյա քարանձավն ընկնողը ոչ մի հնարքով դուրս գալ չի կարող: Այս էր, որ բոլորովին ուժասպառ արեց Վանիկին, վհատեցրեց նրան...

Վշտից, վախից ու անասելի տառապանքից նրա միտքը բթացել, մարմինը թուլացել էր: Այլևս որևէ բան ուտելու սիրտ չուներ:

Արթնացավ դեմքին քսվող ինչ-որ տաք, լպրծուն բանից: Իսկույն հիշեց Սարդակերպ հրեշին ու ճչաց... Բայց հասկանալով, որ իր դեմքը լիզողը Ղափլանն է, գրկեց նրա գլուխն ու լաց եղավ: Նա լաց էր լինում, իսկ Ղափլանը քնքշանքով լիզում էր նրա երեսը, ձեռքերը: Խելացի անասունն ուզում էր հանգստացնել, հուսադրել իր տիրոջը: Շան այդ արարքը որոշ չափով սրտապնդեց Վանիկին, ու իրեն հավաքելով՝ վառեց իր միակ մխիթարանքը՝ լամպը:

Ամեն ինչ առաջվա պես անփոփոխ էր: Նույն գերեզմանային լռությունն էր: Գոնե մի ճանճ բզզար կամ մի մուկ երևար: Լռությունից ահաբեկված նա ամբողջ ձայնով գոռաց.

— Է՛, հե՛, հե՛յ... .

Նրա ձայնը հարյուրապատկվեց դատարկ քարանձավում, գնաց զարնվեց հեռավոր պատին ու ետ եկավ... «Է՛, հե՛, հե՛յ...»

Այնպես տարօրինակ էր այդ արձագանքը, որ Վանիկը չճանաչեց իր ձայնը: Չճանաչեց

նույնիսկ Ղափլանի հաչոցը, որ այնպիսի արձագանք գտավ, կարծես շների մի ամբողջ ոհմակ է հաչում: Դա նույնիսկ մի քիչ սրտապնդեց նրան:
— Է՜հ, Ղափլա՜ն ջան, շատ դարդ մի՛ անի,— խոսեց նա՝ հոգոց հանելով:— Գետն ընկածը ինչի՞ց է վախենում: Ընկել ենք, պիտի քաշենք: Իսկ մարդակերպ հրեշ ո՛չ կա, ո՛չ էլ եղել է: Պապիս պատմածը հեքիաթ է, սուտ... Տեսնես ո՞վ է հնարել:
Վանիկի մեջ ապրելու այնպիսի ուժ ու կամք առաջացավ, որ նա նույնիսկ մի տեսակ խիզախություն համարեց, որ ինքն ու իր շունը մեն-մենակ գտնվում են ստորերկրյա քարանձավում:
Դեռ փոքրուց նա սիրում էր հազար ու մի գժություններ անել, տուրուդմփոց սարքել հարևան երեխաների հետ: Երբեմն սրտաճաք լինելու չափ վախեցնում էր մորը: Թաքնվում էր կովի մսուրում ու չոր խոտը վրան լցնելով՝ տապ անում: Մայրը անհանգստանում էր, որոնում նրան, լաց լինում, կանչում, հարայ տալիս հարևաններին, բայց Վանիկը երկար ժամանակ դուրս չէր գալիս իր թաքստոցից:
Շատ անգամ նա իր շուրջն էր հավաքում գյուղի պատանիներին ու տանում հեռավոր տեղեր: Սիրում էր գիշերը մնալ դաշտում՝ կարկտի ու անձրևի տակ և սաստիկ բարկանում էր այն տղաների վրա, որոնք սիրտ չէին անում իր հետ գիշերել սարում: Մի գիշեր էլ իրենց հարևան Գևու հետ քիչ էր մնացել գայլերի բաժին դառնային:
Արկածների սիրահար էր Վանիկը: Բայց ոչ մի անգամ նրա մտքով չէր անցել, որ երբևէ ինքը կարող է ընկնել Կուխտու փոսը...
Այժմ նրա միտքն ավելի հստակ էր գործում, վախը տեղի էր տալիս, և նա հետզհետե համակերպվում էր իր անմխիթար վիճակին: Հիմա նրան մի բան էր հետաքրքրում միայն, արդյոք ինքը կարո՞ղ է ինչսուներեք օր ապրել այս քարանձավում: Ներքին մի ձայն պատասխանում էր, որ իհարկե, կարող է դիմանալ մինչև գարուն, եթե չկորցնի արիությունը և պարապ նստելու փոխարեն, վեր կենա, մի բան անի, որևէ ձևով հարմարվի իր նոր ու արտասովոր միջավայրին: Մի բան պարզ էր. եթե մի կերպ կարողանա ապրել մինչև գարուն, այսինքն, եթե կարողանա ինչսուներեք օր դիմանալ, ապա ֆերմայի մարդիկ կբարձրանան այս կողմերի սարերը և ինքը կկարողանա որևէ կերպ նրանց իմաց տալ իր տեղը:
Փրկության միակ միջոցը դա էր: Պետք է դիմանալ մինչև գարնան գալը...

Գլուխ երրորդ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՏՂԱՆ

Հիմա պետք է պարզել, թե ապրուստի ինչ միջոցներ կան խուրջինում: Վանիկը լամպը վառեց, նստեց խուրջինի մոտ ու տետրակներից մեկը բաց անելով՝ մատիտով գրեց.
«Իմ ստորերկրյա «բնակարանում» ապրում ենք ես ու Ղափլանը: Երկու շունչ ենք, երկու ուտող բերան: Այստեղ օդը մաքուր է և այնքան էլ ցուրտ չէ, որ սառչենք, ցրտին կդիմանանք: Իմ «տանը» մի ամբողջ թումբ ձյուն կա. դա կարելի է ջրի տեղ օգտագործել ու յոլա գնալ: Ուտելիք շատ թե քիչ ունեմ»:
Վանիկը մատիտը թղթից քաշեց ու ընկավ մտածմունքի մեջ: «Ի՞նչ ուտելիք ունեմ, որ այդպես պարծենում եմ: Հապա մի խուրջինը բաց անեմ, տեսնեմ, թե ի՞նչ կա մեջը»:
Նա խուրջինի մի աչքը բաց արեց և հիշեց, թե ինչպիսի խնամքով էր մայրը նրա մեջ տեղավորում հոր համար պատրաստած ուտելիքն ու իրերը: «Ախ, սիրելի մամի ջան,— մտովի դիմեց մորը,— եթե դու իմանայիր, թե ինչ դժբախտություն է գալու իմ գլխին, ինձ ֆերմա չէիր ուղարկի: Հիմա դու քո մազերը փետում ես, երեսդ ծվատում ու գոռում. «Գտե՛ք բալիս, գտեք իմ Վանիկի՛ն, իմ մինուճարին»»: Վանիկը պատկերացրեց վշտից գրեթե ցնորված մորը, սաստիկ խղճաց նրան ու լաց եղավ: Բայց շուտով ձայնը կտրեց և փափկասրտության համար իրեն

սաստիկ նախատեց. «Չէ, ո՛չ մի լաց: Ես այլևս լաց չեմ լինի, երդվում եմ մորս արևով, որ լաց չեմ լինի: Լացից ինչ օգուտ»:
Նա խուրջինից հանեց առաջին պատահած կապոցը: Մայրը իր բրդե բարակ շալի մեջ նոր թխած լավաշ էր փաթաթել: Թոնրի ու տաշտի բուրմունքը խփեց Վանիկի գլխին, և նրա բերանի ջուրը գնաց: Երևի երկու օր կա, որ բերանը պատառ չի դրել: Ցանկացավ իսկույն խժռել փափուկ, ծաղկահամ լավաշներից մեկը, բայց մեծ ճիգով զսպեց իրեն ու թուքը կուլ տվեց...
Կապոցը բաց անելիս նկատեց, որ Ղափլանը երկար լեզուն դնչին է քսում ու կարճ պոչով ավլում քարանձավի հատակը:
— Հը՞, քո բերանի ջրերն էլ են գնո՞ւմ, Ղափլա՞ն,— հետաքրքրվեց Վանիկը:— Տեսնում եմ, որ սոված ես, բա՛ն չկա, մի քիչ էլ համբերիր, գործս պրծնեմ, նոր մի բան կուտենք:
Հացի շորը նա փռեց գետնին ու սկսեց լավաշները համրել: Նրա սիրտը թպրտում էր վանդակ ընկած ծտի պես: Տեսնես լավաշները շա՞տ են, թե՞ քիչ: Բայց հույս ուներ, որ շատ կլինեն: Մայրն ամեն անգամ երկու շաբաթվա հաց էր ուղարկում հորը: Իսկ հայրը չուտի, չուտի, էլի օրական երեք լավաշ կուտի: Ուրեմն լավաշները պետք է քառասուն-հիսուն հատ լինեն:
Արդեն քսանվեց հատ համրել է, այս էլ քսանյոթ... երեսուներեք, քառասուն: Քիչ է մնացել: Քառասունմեկ, քառասուներկու... քառասունհինգ: «Քիչ է,— տնքաց Վանիկը,— եթե օրը մի լավաշ ուտեմ, հացը կբավականացնի քառասունհինգ օր, իսկ հետո՞, հը՞, բա հետո՞», — գլուխը բարձրացնելով և մտովի դիմելով չգիտես ում, հարցրեց նա: Հուսահատությունը նորից գրոհեց նրա վրա: «Ուրեմն քառասունհինգ օրից հետո ես հաց չեմ ունենա ու սովից կմեռնեմ: Եթե քառասունհինգ օր հետո մեռնելու եմ, էլ ինչո՞ւ եմ ինքս ինձ տանջում, թող հենց հիմա մեռնեմ-պրծնեմ էլի՛, հենց հիմա»:
Իր սեփական մտքերից նրա սիրտը դողաց, աչքերը լցվեցին: Բայց երբ նայեց Ղափլանի հանգիստ ու խելոք աչքերին, արցունքները չորացան ու ավելի շատ իրեն, քան թե շանը հուսադրելու համար ասաց.
— Տեսնում եմ, որ դու ավելի ճիշտ ես մտածում, Ղափլա՛ն, ինչո՞ւ հույսներս կտրենք: Գոտիներս կսեղմենք ու միասին յոլա կգնանք՝ օրական կես լավաշ ուտելով: Յոլա կգնանք, պրծավ, գնա՛ց: Կես լավաշը ես կբաժանեմ երեք մասի, երկու բաժինը ինձ, մեկը՝ քեզ: Դա ղոչաղ ես, կդիմանաս: Հը՞, կդիմանա՞ս, թե չէ:
Ղափլանը պոչն աշխույժ շարժեց: Երևի ուրախ էր, որ տերը այլևս ախ ու վախ չէր անում ու սկսել էր լուրջ խոսել, մի բան անել:
Վանիկը բաց արեց տետրակի մաքուր երեսն ա մանրիկ ձեռագրով գրեց. «Մեր ապրուստի պաշարը հետևյալն է»: Գրածի տակ գիծ քաշեց ու շարունակեց. «Թոնրի լավաշ— քառասունհինգ հատ: Ա՛խ, եթե հիսնսուն հատ լինե՛ր»,— տրտում ասաց նա: Սակայն եղածն այդ էր: Հացը խնամքով դարսեց շալի մեջ, փաթաթեց ու դրեց մի կողմ: Հերթը հասավ մյուս ուտելիքներին:
Խուրջինից նա հանեց մի ալյումինե տափակ կաթսայիկ, որ տարիներ առաջ հայրն էր բերել ռազմաճակատից: Դա ամուր փակվող, ծալովի կափարիչով կաթսայիկ էր: Վանիկը բարձրացրեց նրա կափարիչն ու տեսավ, որ լիքն է քամած մեղրով: Դա արդեն Վանիկի համար ուղղակի գյուտ էր: Նա մեղր շատ է սիրում: Մի քանի րոպե հիացմունքով նայեց մեղրին, հոտ քաշեց, մատը թաթախելով համը տեսավ և կափարիչն զգուշությամբ փակեց: Միայն սաստիկ ափսոսաց, որ կաթսայիկի պարունակությունը քիչ էր: «Մեղր՝ քամած— մեկ կիլո...», — գրեց տետրակում:
Մեղրից հետո Վանիկը խուրջինից թերթի մեջ փաթաթած շաքար հանեց: Նա գիտեր, որ շունը մեղր չի ուտում, իսկ շաքա՞ր: Հետաքրքիր է՝ Ղափլանը շաքար ուտո՞ւմ է, թե չէ:

Հապա փորձենք: Վանիկը մի փոքրիկ կտոր շաքար նետեց շանը: Սա շաքարը «հա՛ֆ» արավ օդում ու աչքերը ճպճպացնելով՝ նայեց Վանիկին: Կարծես հարցնում էր. «Ուտելի՞ է»:

— Կե՛ր, կե՛ր,— կարգադրեց Վանիկը:— Հիմա այստեղ ճաշակ-մաշակ հարցնող չկա: Ամեն ինչ պետք է ուտել: Նեղն ընկածի համար կորեկի հացը գաթայից էլ լավ է:

Ղափլանը շաքարը ծամեց ու կուլ տվեց: Բայց հենց որ դունչը լիզեց, սկսեց փռշտալ, հազալ, պտտվել տեղը: Նրա այդ տարօրինակ ծամածռություններից Վանիկի ծիծաղը բռնեց և սկսեց քրքջալ:

— Դուրդ եկա՞վ, Ղափլա՛ն,— ծիծաղի միջից հարցրեց նա,— եթե դուրդ եկավ, ուրեմն այդ դեպքում մեղրը՝ ինձ, շաքարը՝ քեզ: Համաձա՞յն ես:

Բայց Ղափլանը ոչ մի կերպ չհայտնեց իր վերաբերմունքը: Վանիկը քրքիջը կտրեց ու շարունակեց իր գործը: Խուրջինում մի կտոր շորի մեջ փաթաթած երկու հավ կար, մեկը եփած, մյուսը հում: Դա արդեն այնքան ուրախացրեց Վանիկին, որ նա քիչ մնաց թռչկոտեր, պարեր: Մեծ բավականությամբ շոշափեց հավերը, հոտ քաշեց ու համոզվեց, որ երկուսն էլ չաղ են, ճարպոտ: «Եփածը կամաց-կամաց կուտեմ,— մտածեց նա,— բա հո՞ւմը: Հումը ո՞նց ուտեմ»:

Այս հարցին հետևեց մի ավելի կարևոր հարց և նա դառնությամբ իմացավ, որ ինքը կրակ անելու ոչ մի միջոց չունի: Իհարկե, խուրջինում մի քանի տուփ լուցկի կա, նավթ էլ, բայց դրանցով ո՛չ ձյուն կարող ես հալեցնել, ո՛չ էլ հում հավը եփել: «Կրակ անելու ոչ մի վառելիք չկա»,— չորս կողմը նայելով, մտածեց Վանիկը և նրա հայացքը կանգ առավ շան վրա: Ղափլանը ագահությամբ նայում էր հավերին: «Ա՛յ դու անդարդի մեկը, միայն քո փորի համար ես մտածո՞ւմ,— գլուխն օրորեց Վանիկը,— դե , իհարկե, կրակը քո ինչի՞ն է պետք: Դու հավը հում էլ կխժռես: Հա՛, հա՛, կխժռե՛ս, եթե տամ:

Դե, լավ, թող քո սրտով լինի, եփած հավը ես կուտեմ, հումը՝ քեզ կտամ: Վճռված է, իսկ հիմա շարունակեմ պարզել, թե է՞լ ինչ ուտելիք կա իմ խուրջինում»:

Բարեբախտաբար մայրը բավականին պաշար էր դրել խուրջինում: Մի հին գուլպայի ճտքերի մեջ տասնչորս հատ պինդ եփած ձու կար: «Լավ է, որ ձվերը եփած են,— ուրախացավ Վանիկը.— թե չէ կջարդվեին, երբ գլորվեցի, ընկա քարանձավի ձյունակույտի վրա»: Ձվերի հետ, գուլպայի ճտքում վեց գլուխ սոխ ու երկու կարմիր պղպեղ էլ կար: Վանիկը պղպեղ չէր սիրում: Լավ կլիներ, որ դրա փոխարեն մի ուրիշ բան լիներ, ասենք՝ երեք հատ եփած կարտոֆիլ: Բայց եղածն այդ էր և մնում էր, որ տետրակում ավելացնի նաև պղպեղը: Ո՞վ գիտե, գուցե մի բանի պետք գա:

Մոմլաթե մի փոքրիկ տոպրակում վեց հատ աղ դրած վարունգ կար: Վանիկի հայրը թթու դրած բանջարեղեն, մանավանդ վարունգ շատ էր սիրում: Վանիկը հիշեց, թե ինչպիսի բավականությամբ էր նա դրանք ուտում՝ անվերջ «պա՛հ, պա՛հ» անելով: Վարունգից հոտ քաշելիս Վանիկը հանկարծ մտաբերեց, որ ձմեռանոց ճանապարհելիս մայրն իր գրպանները չոր թութ ու ընկույզ էր լցրել: Իսկույն ձեռքը տարավ պիջակի ու շալվարի գրպանները: Բայց այնտեղ ընդամենը երկու բուռ չոր թութ ու տասնմեկ ընկույզ էր մնացել. մնացածը թափվել էր ով գիտե որտեղ: Էլի ապրուստ էր... Դրանցով կարելի է յոլա գնալ մի ամբողջ օր: Նա դարձավ շանը.

— Ուրախացիր, է՛, ա՛յ Ղափլան, մի օրվա ապրուստ էլ ճարվեց: Մինչդեռ հոնքերդ այնպես ես կիտել ու տեղդ այնպես թազնել, որ կարծես քու ապերը նոր է մեռել:

Իր սրամտության վրա Վանիկը սրտանց քրքջաց ու ձեռքերը թափահարեց: Ղափլանին դա դուր եկավ, նա գլուխն օրորեց, պոչն ուրախ պտտեց և նույնիսկ գլուխկոնծի տվեց:

Սակայն ուրախությունից քարանձավի բնակիչներին փորձանք պատահեց: Գլուխկոնծի տալիս Ղափլանի կարճ պոչը դիպավ փոքրիկ լամպին ու շուռ տվեց: Լամպն իսկույն հանգավ:

— Վա՛յ, վա՛յ,— ճչաց Վանիկը,— լամպը կոտրեցի՛ր: Տեղիցդ չշարժվես, լսո՞ւմ ես, թե չէ հիմա

նավթի ամանն էլ շուռ կտաս:
Նա իսկույն լուցկի վառեց: Ղափլանը մնացել էր տեղն անշարժ պառկած: Երևի կռահել էր, որ մի վատ բան է պատահել: Վանիկը վերցրեց լամպն ու զննեց... Ապակին ճաքել էր, իսկ մեջը եղած նավթը թափվել շաքարի վրա:
— Այս ի՜նչ արեցիր,— լացակումած գոռաց Վանիկը ու քացով խփեց շանը:
Բարեբախտաբար շաքարից երեք կտոր էր նավթոտվել միայն: Մյուսներն անվնաս էին մնացել: Վանիկը նավթոտ շաքարն իսկույն առանձնացրեց և մի կտոր նետեց շանը: Այս անգամ էլ Ղափլանը շաքարը բռնեց օդում: Բռնեց, բայց իսկույնևեթ վայր գցեց ու գլուխը թափահարելով և երախը ծամածռելով՝ կաղկանձեց: Վանիկը հռհռաց նրա վրա:
— Հիմա կերա՞ր,— կռանալով դեպի շունը՝ ծաղրեց նա,— դա՞ռն է նավթոտ շաքարը: Տեղն է քեզ: Բա ինչո՞ւ գժություն արիր...
Ղափլանը խռովեց ու քաշվեց մի կողմ: Վանիկը ավելի բարկացավ.
— Օհո՜... խռովկանի՜ս նայեցեք: Քեֆիդ կպա՞վ, ի՞նչ է: Դե լավ, արի հաշտվենք...— նա մոտեցավ շանը, շոյեց նրա գլուխն ու նույնիսկ համբուրեց ճակատը:— Դե, ասում եմ, արի հաշտվենք, Ղափլան: Չէ՞ որ մենք միևնույն սև բախտի տերն ենք, միևնույն դառը վիճակի մեջ: Ախր ինչո՞ւ իրարից խռովենք, սիրելի՜ս:
Կամա-ակամա Վանիկն իր հարստության ցուցակի մեջ ուղղում մտցրեց: Տասնմեկ կտոր շաքարի փոխարեն ութ կտոր գրեց: Բայց դա դեռ բոլորը չէր: Այդ դեպքից հետո Ղափլանը կտրականապես հրաժարվեց շաքար ուտելուց: Ինչ զզվելի ուտելիք է այդ շաքար ասածը:
Սննդամթերքի հետ գործը վերջացնելուց հետո Վանիկը որոշեց մի բան ուտել, որից հետո միայն ցուցակագրել խուրջինի մյուս աչքում եղած իրերը: Վանիկը մի ձու վերցրեց, ձեռքը մեկնեց դեպի լավաշի կապոցը, բայց իսկույն ետ քաշեց: «Ես հիմա այնքան էլ սոված չեմ,— ինքն իրեն խոսեց նա:— Իսկ եղած ուտեստի պաշարով ես պետք է իմ ու իմ շան գոյությունը պահպանեմ ուղիղ իննսուներեք օր: Լավ կլինի, որ այսօր առանց մի բան ուտելու յոլա գնամ»:
Նա ձուն դրեց տեղը: Ղափլանը շարունակում էր հեռու մնալ: Դա բարկացրեց Վանիկին, ու նա ձայնը բարձրացրեց.
— Ի՞նչ ես քիթդ կախել, հիմա՜ր: Չէ՞ որ խռովելուց հետո հաշտվել էլ է պետք: Մո՜տ արի,— ասաց, բայց ինքը մոտեցավ շանը ու քնքշանքով սկսեց շոյել նրա գլուխը: Վերջապես շունը մոռացավ վիրավորանքն ու հնազանդ հետևեց տիրոջը:
Վանիկը տետրակի մի առանձին էջի վրա ցուցակագրեց իր ունեցած իրերը: Այնտեղ գրելու շատ բան չկար: Տղայի ամբողջ գույքը բաղկացած էր մի քանի մանր-մունր առարկաներից, ինչպես՝ գորգի գեղեցիկ նախշեր ունեցող խուրջինը, գրպանի փոքրիկ դանակը, այլումինե կաթսայիկը, վեց տուփ լուցկի, մի թիթեղյա նավթաման՝ չորս ու կես լիտր տարողությամբ, (դա արդեն Վանիկը լավ գիտեր, միշտ ինքն էր խանութից նավթ առնում): Դրանցից բացի խուրջինում դրված էր հոր փոխնորդը՝ մի ձեռք սպիտակեղեն, մի բրդյա ջեմպր, մի ջուխտ գուլպա, կոճի թել՝ մի մախաթի ու մի ասեղի հետ: Խուրջինի տակը վուշի հաստ թելի մի մեծ կծիկ էլ կար. «Սա ինչի՞ համար է մայրս դրել խուրջինում,— ինքն իրեն հարցրեց վանիկը՝ կծիկը ձեռքին շուռումուռ տալով:— Հա՜, սա պանրի մոթալները կապելու համար է,— գլխի ընկավ նա:— Ինչքան, ինչքան էլ ամուր է: Թող մնա, մի բանի պետք կգա»,— մտածեց ու կծիկը դրեց խուրջինի մեջ:
Չմրսելու համար Վանիկն իր բլուզի վրա հագավ հոր բրդե ջեմպրն ու գուլպաները, իսկ սպիտակեղենը թողեց խուրջինում:
«Ուրիշ էլ ի՞նչ ունեմ,— եղած իրերը ցուցակագրելուց հետո ինքն իրեն հարցրեց Վանիկը ու նայեց շուրջը,— ըհը՜,— ուրախացավ նա,— բա գրքերս, տետրակներս, մատիտս...»
Դասագրքերից բացի Վանիկի մայրը սխալմամբ խուրջինում էր դրել նաև մի հաստափոր վեպ:

Վանիկը երկար նայեց դրան և հիշեց, որ դա ամռանն իրենց հյուր եկած մորաքրոջ աղջիկն էր բերել քաղաքից, ու ժամերով գետափի քարերին նստած՝ կարդում էր: Տետրակներից միայն երկուսը կային խուրջինում՝ հանրահաշվինն ու հայոց լեզվինը: Դրանք էլ կիսով չափ գրված էին: Ասենք այստեղ Վանիկը ոչ մի տնային աշխատանք չի կատարելու: Նավթը պետք է խիստ խնայողաբար գործածել:

* * *

«Այժմ պետք է որոշել, թե երկուսով օրական ինչքան սննդամթերք պետք է գործածեն, որ եղած ուտելիքը հերիքի հինսուներեք օր: Վանիկն ափսոսանքով հիշեց, որ ինքն այնքան էլ սակավակեր չէ. սիրում է լավ ուտել: Բայց հիմա ինչ կարող ես անել: Պետք է գոտին ձիգ կապել, եղած ուտելիքը բաժանել հինսուներեքի,— ինքն իրեն հարցրեց Վանիկը,— չէ՞ որ արդեն երկու օր է, ինչ գտնվում եմ քարանձավում, ուրեմն իմ ունեցած ուտելիքը պիտի բաժանեմ հինսուն մասի»:

Առանց ժամանակ կորցնելու նա սկսեց լավաշները կիսել: Շուտով զգաց, որ այլևս չի կարողանում զսպել ուտելու պահանջը: Նա կես լավաշ վերցրեց ու որոշեց ուտել նաև կես ձու: Ձուն դանակով կիսեց ու մի մասը դրեց լավաշի եզրին: Լավաշի մի կտոր տվեց շանը, մյուսով ձուն փաթաթեց, կծեց: Բայց հենց որ սկսեց ծամել, զգաց, որ ձուն անալի է:

— Պահո՜...— բերանի պարունակությունը մի կերպ կուլ տալուց հետո՝ դառնությամբ բացականչեց նա:— Ախր ես աղ չունեմ, ա՜ղ...

Թեև հաստատ գիտեր, որ խուրջինում աղ չկա, համենայն դեպս սկսեց քրքրել նրա անկյունները ու փոքրիկ կապոցները: Աղ չկար: Դա նորից հուսահատեցրեց Վանիկին: Նա գիտեր, մեծերից լսել էր, որ մարդ առանց աղ ուտելու երկար չի դիմանում և մեկ—երկու շաբաթ հետո մեռնում է սոսկալի տանջանքներով: Այս հիշելով՝ նրա ձեռքերը թուլացան:

— Աղ չկա, Ղափլա՜ն,— սրտաճմլիկ տխրությամբ դիմեց նա շանը, բայց նորից ինքն իրեն երդվեց լաց չլինել...

Լավաշն ու ձուն մի կերպ ուտելուց հետո նա նայեց մթերքի ցուցակին՝ պարզելու համար, թե իր ունեցվածքից որը կարելի է անալի ուտել, որը՝ ոչ: Հացը, պարզ է, որ աղով չեն ուտում, մեղրը՝ նույնպես, շաքարն էլ: Բայց ձուն ու հավի միսը անալի չի ուտվի: Դե սոխը կարելի է ուտել առանց աղի: Աղ դրած վարունգը... Վանիկի աչքերը շողացին:

— Վարունգը աղ դրած է, ջա՜ն...— գոչեց նա մեծ ոգևորությամբ:— Դու հասկանո՞ւմ ես, Ղափլան, վեց հատ աղ դրած վարունգ ունեմ: Ահա և քեզ աղ: Է՜... քեզ ի՜նչ... ղու ամեն բան անալի ես ուտում: Իսկ ես չեմ կարող, հասկանո՞ւմ ես, ես մարդ եմ: Հիմի ես ձվի հետ մի պատառ վարունգ կկծեմ ու աղի հարցն այսպես կլուծվի...

Սակայն նրա ուրախությունը երկար չտևեց, երբ մտածեց, որ թեև քարանձավը սառն է, բայց և այնպես իր ունեցած հավերն ու ձվերը հինսուն օր չեն դիմանա, կփչանան: Նա ծոծրակը քորեց ու ինքն իրեն հարցրեց. «Իսկ հետաքրքիր է, քանի՞ օր կդիմանան այդ համեղ պատառները»: Բայց որտեղի՞ց նա իմանար այդ դժվարին բանը, ոչ խոհարար էր, ոչ էլ տարիների փորձ ունեցող տանտիրուհի: Մնում էր նախ ուտել ձվերն ու հավերը, հետո մեղրն ու շաքարը:

Ձմռանը սովորաբար Վանիկը անկողին էր մտնում երեկոյան ժամը հինին: Իրենք պատի մի հին ժամացույց ունեին, հենց որ դրա սլաքները հին էին ցույց տալիս, նա պառկում էր քնելու: Սովորաբար արթնանում էր առավոտյան յոթին: «Ուրեմն եթե հիմա իմ քունը տանում է, նշանակում է արդեն երեկոյան ժամը հին է, գուցե մի քիչ ավելի կամ պակաս»,— վճռեց Վանիկն ու գլուխը դնելով խուրջինին՝ պառկեց գետնին: Ղափլանը մեկնվեց նրա կողքին ու անշարժացավ: Նրա շնչառությունը հազիվ էր լսվում: Թեև Վանիկն աշխատում էր շուտ քնել, բայց քունը չէր մոտենում: Ինչ-որ ծանրություն ճնշում էր նրա կուրծքը, իսկ ոտքերը, ասես ծեծած, ցավում էին: Հանկարծ նրան թվաց, թե խավարի մեջ մեկն աննկատելի մոտենում է

իրեն: «Չլինի՞ Կուխտու մարդակերպ հրեշն է, որին գուցե Կուխտին չի սպանել և ահա գալիս է»,— մտածեց նա ու արագ նստելով՝ հրացանը ձեռքն առավ: Սակայն քարանձավում գերեզմանային լռություն էր: Ո՛չ մի ձայն, ո՛չ մի շշուկ, օդն անգամ կարծես կարծրացել էր: Եվ վերջապես որտեղի՞ց պիտի հայտնվի մարդակերպ հրեշը, եթե նույնիսկ կենդանի էլ լինի: Չէ՞ որ քարանձավը դուռ չունի, իսկ առաստաղի անցքը փակվել է. «է՛, ոչ մի հրեշ-մրեշ չկա,– ինքն իրեն հանգստացրեց Վանիկը:– Քնել, ուրիշ ոչինչ»:

Նա գլուխը դրեց խուրջինին ու աչքերը փակեց: Տաքանալու համար մեջքը դեմ արեց Ղափլանի փորին: Քունը հետզհետե հաղթահարեց նրան...

* * *

Խեղճ Վանիկն ի՞նչ իմանար, որ այն, ինչ տեսնում է, երազ է... Ահա ինքը Կապուտանի ափին կանգնած զմայլվում է նրա ջրերի խաղով: Ժայռերի արանքից հանկարծ դուրս է գալիս Կուխտին ու մոտենում իրեն: Աժդահա մարդ է Կուխտին: Հասակը՝ աթարի դեզի չափ, մորուքը՝ ձյութի պես սև, իսկ աչքերը դարբնի քուրայի նման բոց են արձակում: Նրա մեջքին եզան կաշի է փաթաթված, իսկ ուսին լծի մեծության մի թուր ունի:

— Է՛յ, դու ո՞վ ես,— ամպի պես որոտալով, հարցրեց Կուխտին:

Իմանալով, որ Կուխտին իր ապուպապն է, Վանիկը չվախեցավ նրանից ու համարձակ պատասխանեց.

— Ես սոթեցի եմ:

— Ո՞ւմ տղան ես:

— Կուխտունց Հովակիմի:

— Հը՞,— զարմացած հարցրեց հսկան ու կռացավ տղայի վրա:— Ես էլ սոթեցի եմ, իմ անունը Կուխտի է: Այս լճի ափի ժայռերում ապրող մարդակերպ հրեշին ես եմ սպանել, ես... Հասկանո՞ւմ ես: Ամա քու ասած Հովակիմ անունով մարդ չկա մեր գյուղում: Խաբում ես, շան ձագ: Հը՞, կպատժեմ, խաբո՞ւմ ես...

Բնավ չվախենալով նրա սպառնալիքից, որքան կարող էր բարձր ձայնով, Վանիկը պատասխանեց.

— Ախր դու իզուր ես ինձ հայհոյում, պապի՛, ես քո ժառանգն եմ, քո արյունակիցը: Ես էլ գիտեմ, որ դու ես սպանել մարդակերպ հրեշին: Հրե՛ն, այն քարայրին մինչև հիմա էլ քո անունով Կուխտու փոս են ասում: Իմ ազգանունն էլ քո անունից է՝ Կուխտունց Վանիկ: Ես մեր կոլխոզի հովվի տղան եմ:

— Կոլխոզն ո՞վ է,— չհասկանալով տղայի ասածները՝ առաջվա զայրույթով հարցրեց հսկան:

— Կոլխո՞զը,— նեղն ընկավ Վանիկը:— Ախր, ո՛նց ասեմ, կոլխոզը հո մարդ չի, որ ասեմ, թե ով է: Կոլխո՛զը...

— Հո՛, հո՛, հո՛...— քրքջաց հսկան:— Մարդ չի, բա ի՞նչ է: Քու մի մատ տեղով ուզում ես ինձ խաբե՞լ:

Հսկան ուզեց էլի ինչ-որ բան ասել, բայց այդ պահին լսվեց մի զարհուրելի ձայն: Կուխտին գլուխը բարձրացրեց, ականջները սրեց ու իր լծաչափ թուրը օդում տնկելով՝ նայեց հեռուն: Քարայրի կողմից երևաց մարդակերպ հրեշը՝ երկար թաթերով, օձերի նմանող ծամերով ու մի մեծ, ահռելի բերանով: Վանիկը ահից կծկվեց: Իսկ Կուխտին զիլ ձայնով գոռաց.

— Հե՛յ-հե՛յ... դու կենդանացե՞լ ես, չար դև: Կա՛ց, հրես գալիս եմ քո հոգին առնելու:— Կուխտին նետվեց դեպի մարդակերպ հրեշը և նրանց կռվից երկինք ու գետին դղրդացին...

* * *

Վանիկը ծառս եղավ տեղում ու ճչաց: Զարհուրելի երազ էր: Ղափլանը սկսեց հաչել: Մի՞թե շունը մարդակերպ հրեշի վրա է հաչում: Խավարի մեջ ոչինչ չէր երևում: Բայց կարծես մեկը ծանր-ծանր քայլում է մթության մեջ: Ինչ-որ թրմփոց լսվեց հեռվում: Մի՞թե մարդակերպ հրեշն

է կենդանացել...
Ղափլանը շարունակում էր հաչել: Նրա ձայնից քարանձավի կամարները թնդում էին: Վանիկը մի կերպ հավաքեց իր արիությունը, հրացանի մեջ մի փամփուշտ դրեց ու կրակեց...
Խավարը պատռվեց կրակի բոցից: Քարանձավի պատն ասես փուլ եկավ: Ինչ-որ տեղ հող թափվեց: Շունչը պահած, աչքերը չռած ու տեղը քար կտրած Վանիկը սպասում էր, թե ինչ պիտի պատահի... Սպասեց մի ժամ, երկու ժամ, բայց ոչ մի արտակարգ բան չպատահեց: Շունն այլևս չէր հաչում, նորից մեռելային լռություն էր:
Հետզհետե Վանիկը հասկացավ, որ ինքը մարդակերպ հրեշին ու Կուխտուն տեսել է երազում: Շուտով երազի պատճառած վախը բոլորովին անցավ, ու նա ծարավ զգաց: Լամպը վառեց, մոտեցավ ձյունաթմբին, մի մեծ ձնագնդի շինեց, տաքացրեց բռան մեջ ու սկսեց ծծել:
Դեռևս քաղց չէր զգում: Այդպես էր նաև տանը, արթնանալուց մի երկու ժամ հետո էր միայն ախորժակը բացվում: Նրա հաշվով այդ օրը փետրվարի քսանն էր: Լավ է, որ դեպի գարուն են գնում, իսկ եթե ինքը քարանձավի մեջ ընկներ նոյեմբերին կամ դեկտեմբերին, այն ժամանակ փրկության ոչ մի հույս չէր ունենա, կկորչեր...
«Իսկ մի՞թե հիմա չեմ կորչի,— մտածեց նա.— ո՛չ, չե՛մ կորչի, հիմարություն է այդ մասին մտածելը: Ես կդիմանամ ամեն տեսակ դժվարության և կսպասեմ մինչև գարուն»:
Ձյունը կերավ: Ծարավը կոտրվեց: Հիմա հարկավոր է լվացվել: Ջուր չկա, բայց թարմանալու համար կարելի է ձյունով շփել դեմքը, ծոծրակը, ձեռքերը: Այդպես անելուց հետո նա լամպը հանգցրեց ու ձեռքերը թիկունքին ծալած՝ սկսեց ետ ու առաջ քայլել քարանձավում: Քայլում էր պատի տակով, որպեսզի մթության մեջ հանկարծ չտրորի ուտելիքն ու խուրջինը: Քարանձավի մի ծայրից մյուսը հասնելու համար հարյուր մեկ քայլ էր կատարում, ապա շեշտակի շուռ էր գալիս ու նորից քայլում:
Շուտով նա ձանձրացավ քայլելուց ու սկսեց բարձրաձայն արտասանել իր իմացած ոտանավորները: Ափսո՜ս, որ քիչ ոտանավոր գիտեր: Ֆիզիկական աշխարհագրության մեծ սեր ունենալով, նա ուշադրություն չէր դարձրել ոտանավորներ սովորելուն: Բայց փոխարենը պատմվածքներ շատ էր կարդացել: Հենց հիմա կարող է «Գիքորը» ծայրից-ծայր արտասանել: Եվ նա սկսեց բարձրաձայն արտասանել՝ «Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել...»
Արտասանում էր՝ լիովին պատկերացնելով Գիքորի վիճակը: Երբ հասավ այն տեղին, ուր բազազ Արտեմն անխղճորեն ծեծում է Գիքորին՝ լացը եկավ: Սաստիկ խղճահարվեց դժբախտ Գիքորի համար: Իր անմխիթար վիճակը մոռացած՝ երկար ժամանակ նա մտածում էր Գիքորի մասին...
Այնուամենայնիվ, Վանիկն այդ առավոտ այնքան էլ վատ չէր տրամադրված: Նա լուցկի վառեց, մոտեցավ խուրջինին, որից քիչ հեռու պառկել էր Ղափլանը, և լամպը վառելով՝ ասաց.
— Ղափլա՛ն, արի նախաճաշենք:

Գլուխ չորրորդ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՈՅԱՑԱՎ ՓՈՔՐԻԿ ՄԱՌԱՆԸ

Առավոտվա բաժինն ուտելուց հետո Վանիկը որոշեց քնելու և իր ունեցվածքը պահելու որոշ հարմարություններ ստեղծել: Դրա համար նա մի անգամ էլ մանրակրկիտ զննեց քարանձավը: Օթևանի համար ընտրեց քարանձավի ձախակողմյան անկյունը: Այդտեղ հատակը մի քիչ բարձր էր ու թախտի ձև ուներ: Բացի դրանից, այդ «բնակարանը» հեռու էր ձյունաթմբից և ավելի չոր էր: «Ամենահարմար տեղը սա է»,— մտածեց Վանիկը և գնաց ուտելիքն ու իրերը տեղափոխելու նոր «տունը»: Սակայն ամեն տուն, լինի հարուստ, թե աղքատ, քնելու համար որոշ հարմարություններ է ունենում՝ բարձ, անկողին, թախտ կամ մահճակալ: Այդ ամենից, իհարկե, զուրկ էր Վանիկը: Ինչ արած, պետք է առանց անկողնի յոլա գնալ: Հովիվները մի

մեզարով կամ մի յափնջով են ամբողջ ամառն անց կացնում սարերում: Իսկ ինքը տաք է հագնված, բացի այդ, բամբակալից բաճկոն ունի, դրանց մեջ ցուրտ չի զգա:
Իսկ քնելիս տակը գցելու համար կարող է օգտագործել հաստ թելերից գործած, գորգի պես նախշուն խուրջինը: Էլ ինչո՞ւ տրտնջալ: Սարում ապրող ո՞ր հովիվն է այսքան բարիքներ ունենում հետը: «Անկողին» ստեղծելու համար նախ և առաջ պետք է խուրջինը քանդել և նրանից կարպետի պես մի բան շինել:
Գրպանի փոքրիկ դանակով Վանիկը քանդեց խուրջինի կարերը, կտորները փռեց գետնին և կարպետի ձև տվեց: Խուրջինը նոր էր, մայրն էր մի տարի առաջ գործել, այնպես որ, եթե նրա կտորները կպցնի իրար, մի կարգին կարպետ կստացվի:
— Է՛... Ղափլան ջան, հիմա էլ կար ու ձև պիտի անեմ, հնար չկա,— գլուխն օրորեց տղան,— ասենք քեզ ի՞նչ... դա քեզ համար հանգիստ թազնել ես, ո՛չ գող կա, որ վրան հաչես, ո՛չ էլ գայլ է մոտենում մեզ, որ հետը կոխ բռնես: Դու հիմա անբան արարած ես, իսկ ես ստիպված եմ մախաթը ձեռքս վերցնել ու դերձակության անել:
Միամոր զավակ լինելով, Վանիկն իր կյանքում ոչ մի տնային գործ չէր արել: Մայրը չէր թողել, որ նա նույնիսկ կարի իր կտրած կոճակը: Ուստի դժվարությամբ թելեց մախաթը, մի կերպ միացրեց խուրջինի կտորները և դեռ երկու կար չէր արել, երբ մատը ծակեց: Ոչ այնքան ցավից, որքան անզորությունից բարկացավ, մատն արագ կոխեց բերանն ու առաջին անգամ մտքում նախատեց մորը, որ իրեն չի վարժեցրել տնային գործերի: «Եթե երբևէ ազատվեմ այս դժոխքից ու վերադառնամ տուն, ապա խմոր հունցելն էլ պիտի սովորեմ,— ինքն իրեն վճռեց Վանիկը:— Պապս լավ էր ասում, թե՝ «Շան հաչալն իմանալն էլ արհեստ է»:
Երկար չարչարանքից հետո միայն նա կարողացավ խուրջինի կտորները կարել, իրար կպցնել ու կարպետի պես մի բան շինել: Իր հաշվով այդ գործի համար նա կորցրեց մի ամբողջ օր ևս: Ուրեմն մի օր էլ ապրեց ստորգետնյա մթին աշխարհում: Ա՜խ, որտե՞ղ ես, գարուն...
Աշխատանքով տարված նա մոռացել էր քաղցը, բայց երբ կարպետը պատրաստեց, զգաց, որ սովից գլուխը թմրել է: Պետք է մի բան ուտել: Սակայն մինչև ուտելը որոշեց փորձել, թե ինչպիսի անկողին է ստեղծել իր համար: Նա կարպետը փռեց քարե «թախտին», չեչաքարերից մեկը դրեց բարձի տեղ, մեկնվեց կարպետի վրա ու մոր շալը գլխին քաշեց: «Կարծես թե բանի նման է,— խոսեց ինքն իրեն:— Ա՜խ, եթե մի խուրձ խոտ լիներ, այն ժամանակ ինձ համար փափուկ տեղ կսարքեի ու դեռ իմ շան տակը գցելու բան էլ կունենայի»:
Այդ օրվա մի ճոթ հացն ու կես ձուն Վանիկը կերավ մեծ հաճույքով: Որպեսզի ձվի անալիությունից չզզվի, աղ դրած վարունգներից մեկը վերցրեց ու ատամով ծայրը ծակելով՝ նրա միջի աղաջրից մի փոքր ծծե՛ց... Ապա հում հավի մի թևը կտրելով դարձավ շանը.
— Սա էլ քո բաժինն է, Ղափլան: Տե՛ս, չխռովե՛ս, հա՛... Տանը լինեինք, ամբողջ հավը կտայի քեզ, բայց ինքդ էլ գիտես մեր ծանր վիճակը: Սրանով յոլա գնա: Քիչ չէ, ոսկորներն էլ կուտես: Հետո էլ՝ դանդաղ կեր, իսկույն կուլ չտաս: Դանդաղ կեր, որ ախորժակդ շուտ փակվի:
Բայց Ղափլանը չլսեց տիրոջը, հավի թևը հափշտակեց ու մի ակնթարթում խժռեց: Ճաշն ավարտեցին: Վանիկին թվաց, թե կշտացել է, սակայն զգաց, որ աչքը հացի վրա է: «Վերջացավ,– ինքն իրեն հանգստացրեց նա:— Այսքանն էլ բավական է, հո շալակով քա՞ր չեմ կրել, որ շատ ուտեմ: Հրես պարապ վեր ընկած եմ: Իսկ հիմա պետք է քնել»: Նա պառկեց իր նոր «անկողնում»: Նրա հաշվով լուսանում էր փետրվարի քսաներկուսը:

* * *

Արթնացավ կուշտ քնած: Լամպը վառեց ու հիշեց գիշերվա երազը:
...Իրենց գյուղի ամբողջ բնակչությունը եկել էր Զմրուխտ սարի փեշերը և փնտրում էր իրեն: Մարդիկ բարձրաձայն կանչում էին միմյանց, հարայ տալիս: Ինքն էլ էր կանչում, գոռում, բայց իրեն փնտրողները չէին լսում իր ձայնը և ի վերջո բոլորը դատարկաձեռն վերադարձան գյուղ...

Վերհիշելով երազը՝ Վանիկը մտածեց, որ համագյուղացիներն իրոք կարող են գալ այս կողմերն ու որոնել իրեն: Նա վեր կացավ, գնաց կանգնեց առաստաղի անցքի տակ ու որքան ձայն ուներ, կանչեց.

— Է՛, հե՛, հե՛յ...

Կանչեց ու սպասեց: Հետո շանն էլ հասկացրեց, որ հաչի: Ղափլանի ձայնը զրնգաց քարանձավում: Թեև առաստաղի անցքը փակվել էր, բայց Վանիկը համոզված էր, որ իր կամ շան ձայնը կարող է դուրս գալ անցքից և եթե մոտակայքում իրոք իրեն որոնում են, հասնել նրանց: Թեև նրա գոռգոռոցն ու շան հաչելը ոչ մի արդյունք չտվեցին, այնուամենայնիվ, Վանիկը որոշեց ամեն օր մի քանի անգամ կանգնել առաստաղի անցքի տակ ու «Հե՛յ, հե՛յ» կանչել:

Ետ գալով ու նստելով իր «թախտին»՝ նա հոր շապիկը պարկ շինեց և իր ուտելիքը դասավորեց նրա մեջ:

Այդ օրը երկու բարեկամները ճաշեցին հանգիստ ու լուռ: Վանիկը Ղափլանի բաժինը միանգամից չտվեց: Հավի միսն ու հացը մաս-մաս կտրում էր ու նետելով նրան՝ ասում.

— Կամաց-կամաց կեր, որ ուշ քաղցածանաս: Այ, տես, թե ես ոնց եմ ուտում:— Եվ կես ձու մեջը փաթաթած լավաշի բրդուճը նա ծամում էր զարմանալի դանդաղ: Իհարկե, կարող էր միանգամից կուլ տալ ամբողջ բրդուճը, բայց հաճելի է, եթե բերանումդ բան կա ու ձեռքիդ պատառը դեռ չի վերջացել:

Վանիկն ուտում էր դանդաղ, այնինչ Ղափլանն արդեն լափել-պրծել էր իր բաժինը և հիմա աչքերը լայն բաց արած՝ նայում էր տիրոջ ձեռքին... Վանիկը խղճահարվեց: Պարզ է, Ղափլանը չի կշտացել: Տան պահած-շահած շուն է, քչով ինչպե՞ս բավարարվի: Ամեն առավոտ մայրը կովի կաթ է լցնում քարե սանդը, մի երկու լավաշ բրդում մեջն ու շանը կանչում, որ գա լափի: Ղափլանն ախորժակով լափում էր համով կաթնաբրդոշը, կշտանում և պատի տակ պառկած՝ տռզած փորը դեմ անում արևին: Սարից տուն գալիս հայրը Ղափլանի համար միշտ միս էր բերում: Մի խոսքով, Ղափլանը գյուղում փառավոր կյանք էր վարում: Իսկ այստեղ խեղճի աչքը միշտ Վանիկի ձեռքին է: Նրա տառապանքը տեսնելով՝ Վանիկի սիրտը մղկտաց: Նա փաթաթվեց շանը ու քնքշանքով ասաց.

— Ախր, սիրելի՛ Ղափլան, ձեռքիցս այդքան է գալիս: Համբերի՛ր, ճար չունենք: Դու էլ որ հոնքերդ կախ ես գցում, բե ես ո՞ր ջուրն ընկնեմ:

Հաջորդ օրը (որ Վանիկի համար պայմանական էր), երբ նա «մառանի» հոգսով էր զբաղված, հանկարծ նրա գլուխը մի տարօրինակ կասկած մտավ: Չլինի՞ սովից ստիպված Ղափլանը գողություն անի... Այդ կասկածը հետզհետե խորացավ նրա սրտում: Մթերքը փրկելու համար նա պարկը կախեց քարանձավի անկյունի բարձր ցցաքարերից մեկից: Պարկն այնքան բարձր էր, որ ինքը ոտքերի թաթերի վրա ձգվելով՝ հազիվ էր ձեռքերը հասցնում: Հիմա Ղափլանը ինչ էլ անի, չի կարող դունչը հասցնել «մառան-պարկին»,— մտածեց նա: Բայց շուտով նրա խիղճն սկսեց տանջել: Ախր ինչպե՞ս է ինքը կասկածում իր հավատարիմ բարեկամին, որի հետ գրեթե միասին էին մեծացել ու հիմա էլ միևնույն դժբախտ վիճակի մեջ են: «Բայց մի՞թե ես միայն Ղափլանի պատճառով պարենի պարկը կախեցի ժայռից,— փորձեց ինքն իրեն արդարացնել նա:— Չէ՞ որ ուրիշ վտանգ էլ կարող է սպառնալ մեր ուտեստին: Ո՞վ գիտե, գուցե գետնի տակ առնետներ ու մկներ կան, և մեկ էլ տեսար հայտնվեցին ու եղած պաշարը ոչնչացրեցին»:

— Չէ, Ղափլա՛ն, դու բոլորովին անհոգ մնա,— շանը շոյեց Վանիկը,— ես քո նկատմամբ մազաչափ կասկած չունեմ: Անտեր մկներն ու առնետներն են անհանգստացնում ինձ: Դու էլ գիտես, որ այդ անիծվածները հոտ են առնում և կարող են մտնել «մեր տուն» ու գողություն անել: Զգուշությունը լավ բան է: Հիմա արդեն կարող ենք հանգիստ քնել, դե ուրեմն արի լամպը հանգցնենք ու ես քեզ համար հեքիաթ պատմեմ:

Նա հանգցրեց լամպն ու սկսեց.
— Լինում է, չի լինում...
Բայց դեռ հեքիաթի կեսին չհասած՝ քունը տարավ, և մոր շալի մեջ շուլալվելով՝ աչքերը փակեց...
Այդ գիշեր նա ոչ մի երազ չտեսավ:
Արթնացավ ուշ: Նույն խավարն էր ու նույն մեռելային լռությունը: Լամպը չվառեց: Շալը վրայից դեն նետեց ու վեր կացավ:
Այդ օրը նրա հաշվով փետրվարի քսանչորսն էր: Ա՜խ, այս ինչ դանդաղ են անցնում օրերը: Հիմա դեռ փետրվարն է, իսկ ո՞ւր է գիժ մարտը, անձրևոտ ապրիլն ու փրկարար մայիսը: Դրանք հեռու են, հեռո՜ւ... Դեռ ինչքա՜ն ժամանակ կա... Բայց ավելի լավ է այդ մասին չմտածել, թե չէ նորից կարող է հուսահատվել: Իսկ հուսահատությունը զզվելի բան է:
Հապա ի՞նչ անել, ինչի՞ մասին մտածել: Հո չես կարող աչքերդ բաց պահել ու ոչինչ չմտածել: Պետք է մի որևէ բանով զբաղվել: Ինչո՞վ: «Չի լինի՞, մի վեր կենամ, տեսնեմ կրակ անելու համար ինչ կարելի է գտնել»,— մտածեց Վանիկը, և այդ միտքը մի փոքր ոգևորեց նրան: Նա լամպը վառեց ու վեր կացավ: Իր հետազոտությունն սկսեց «մառանի» մոտից: Քայլ առ քայլ գնալով դեպի ձյունաթումբը՝ նա ուշադիր զննում էր քարանձավը: Բայց ամենուրեք նույն լերկ հատակն էր, միայն տեղ-տեղ մանր, ասես մաղած ավազի բարակ շերտեր կային: Ուրիշ ոչինչ: Իսկ ով չգիտի, որ վառելու համար ավազը անպետք նյութ է:
Իր «տիրապետության» բոլոր անկյունները մանրամասն հետազոտելով՝ Վանիկը կանգ առավ քարանձավի «շքամուտքի»՝ առաստաղի անցքի տակ, որի միջով վերևից ցած էին ընկել ինքն ու շունը: Մի երկու վայրկյան փակված անցքի կողմը նայելուց հետո նա պպզեց ձյունաթմբի մոտ՝ գետինը զննելու համար: Շուտով նա ձյան մեջ ցցված ցողուններ նկատեց: Դրանցից մեկը հանեց ու տեսավ, որ դա փռնդադու հաստ ցողուն է: Այս նորությունը սաստիկ ուրախացրեց Վանիկին: Նա գիտեր, որ փռնդադին յուղոտ բույս լինելով՝ լավ է վառվում, հովիվների կանայք սարում նրանով կաթ են տաքացնում: «Քամին է ցողունները թափել այստեղ»,— մտածեց Վանիկն ու լամպը կողքին դնելով՝ սկսեց ցողունները ձյան տակից հանել: Որքան ձյունը այս ու այն կողմ էր տալիս, այնքան ավելի շատ ցողուններ էին դուրս գալիս: Շուտով սմքած, չորացած խոտի մի մեծ կուտակ էլ հանեց ձյան տակից:
Մի կես ժամ հետո Վանիկը ձյունաթմբի տակից բավական ցողուն ու խոտ էր հանել արդեն: Հանկարծ նրա ձեռքն ինչ-որ կոշտ բանի դիպավ: Կռացավ ու ձյան տակ դիակի նման մի բան նկատելով՝ ձեռքը սարսափած ետ քաշեց...
«Մարդակեր հրեշի կմա՞խքն է...»,— կայծակեց նրա գլխում ու ահից սառած մնաց տեղում: Երանի՜ թե ինքը լսած չլիներ այդ զարհուրելի առասպելը: Ինչո՞ւ հիշեց: Ինչո՞ւ դա համառորեն դուրս չի գալիս իր գլխից: Մի՞թե անվերջ պիտի մտաբերի այդ սուտ մարդակերպ հրեշին ու ապրի ծանր կասկածների մեջ: Վանիկն աշխատում էր մոռանալ մարդակերպ հրեշին, այնինչ Ղափլանը պոչն աշխույժ թափահարելով՝ գլուխը խոթել էր ձյան տակ: Քիչ հետո նա սկսեց ինչ-որ սև բան դուրս քաշել ձյան տակից: Վանիկը հետաքրքրությամբ նայում էր նրան: Շունը ձյան տակից մի դիակ հանեց: Վանիկը աչքերը տրորեց, լամպի պատրույգը մի քիչ էլ բարձրացրեց և ուշադիր նայեց դիակին: Նայեց ու նրա շունչը հետզհետե ետ եկավ: Ղափլանը ձյան տակից հանել էր մի սովորական ոչխարի դիակ՝ կարճ կոտոշներով ու արդեն խոր ընկած աչքերով:
— Վա՛յ, չսատկե՛ս դու, Ղափլա՛ն,— մի քանի րոպե տևած սարսափից հետո այնպես քրքջաց Վանիկը, որ իր ավարով զբաղված շունը նույնիսկ զարմացած նայեց նրան:
— Ախր դու ո՞նց իմացար, որ ձյան տակ ոչխարի դիակ կա, հը՞, Ղափլան,— քիչ առաջվա ահուդողը մոռացած՝ ուրախ գոչեց նա և համարձակ նայեց դիակին:
Ոչխարի դիակի մեծ մասը փտել էր: Նրա վրա ամբողջական էին մնացել միայն ողնաշարը,

ոտքերն ու գլուխը: Մյուս մասերը քայքայվել էին:
— Ափսո՜ս,— գլուխը տարուբերեց Վանիկը:— Երևում է, որ այս ոչխարը աշնանն է ընկել Կուխտու փոսը և մինչև ձմռան գալը կիսով չափ փտել է, թե չէ ահագին հարստություն կունենայի:
Ոչխարի դիակը մի կողմ դնելուց հետո Վանիկն ավելի եռանդով սկսեց այս ու այն կողմ տալ թմբի ձյունը: Ո՞վ իմանա, գուցե մի ավելի պիտանի բան գտնի նրա տակ: Սակայն ձյան տակից միայն մի եզան հին կմախք գտնվեց, ուրիշ ոչինչ: Ըստ երևույթին այդ եզը վաղուց էր ընկել Կուխտու փոսը: Նրա ոսկորները գրեթե փտել էին, իսկ եղջյուրները՝ փափկել:
Ինչևիցե, իր ու Ղափլանի այդ օրվա հայտնագործությունից Վանիկը սաստիկ գոհ մնաց: Ամենից շատ նրան ուրախացնում էր խոտի ու ցողունների փոքրիկ պաշարը: Նա դրանք գրկեց, բերեց իր «բնակարանը»: Հետո գնաց ոչխարի դիակի հետևից: Ղափլանը թազնել էր նրա մոտ ու կրծում էր ողնաշարը:
— Համե՞ղ է, Ղափլա՛ն,— շան մոտ պպզելով՝ հարցրեց Վանիկը:
Շունն ուրախ մռլտաց: Ոչխարի ողնաշարի վրա ահագին միս կար: Դրանից էլ լավ բա՞ն: Ղափլանը կուշտ կուտի, իսկ ինքը ուտեստից նրան բաժին չի հանի: Բայց շունն ագահությունից կարող է եղած միսը ամբողջովին ուտել: Պետք է մի մասը պահել հաջորդ օրվա համար:
— Դե, հերի՛ք է, Ղափլա՛ն, հեռո՛ւ կաց,— կարգադրեց Վանիկը,— ինչքան կերել ես՝ բավական է, մնացածն էլ թող մնա, էգուց, մյուս օրը կուտես:— Վանիկը բռնեց նրա վզից, որ ետ քաշի, սակայն Ղափլանը չարությամբ մռռաց:
— Ինչի՞ ես մռռում, անկո՛ւշտ,— նեղացավ Վանիկը,— մսի մի մասն էլ որ պահես՝ չի՞ լինի,— գոռաց նա, բայց սիրտ չարեց քացով խփել շանը: Գիտեր, որ եթե ուտելիս ձեռք տաս սոված շանը, կարող է փեշդ պատռել:
— Դե, որքան ուզում ես լափի, զխկտվի,— մի պահ շիվար կանգնելուց հետո նեղացած գոչեց նա ու վերադարձավ «տուն»:
Բայց նա իզուր բարկացավ իր ընկերոջ վրա: Շունը ոչխարի դիակը հետևից քարշ տալով բերեց գցեց Վանիկի ոտքերի տակ:
— Թերմացքն էլ ինձ համար ես բերե՞լ,— նեղացած հարցրեց Վանիկը,— շնորհակա՛լ եմ... Ամբողջ ողնաշարը կերել ես, չոր ոտքերն ու գլուխն ինձ համար բերե՞լ: Չեմ ուզում, դրանք էլ կարող ես լափել, ծակաչքի մեկը:
Բայց այս անգամ էլ Վանիկն անիրավացի էր: Ղափլանը ոչխարի ողնաշարից միայն մի կտոր էր կերել, իսկ մեծ մասը մնում էր: «Շունն էլ է խնայողություն անում»,— մտածեց Վանիկը ու նորից զղջաց, որ անտեղի բարկանում է նրա վրա:
Հիմա արդեն ունեցվածքին մի նոր բան էլ ավելացավ: Թեև ինքը սատկած միս չի ուտի, բայց ոչխարի դիակը մի քանի օր կբավականացնի Ղափլանին: Իսկ խոտն ու ցողունը կրակի համար պետք կգա: Փոնդադու ցողունն ու խոտը չորացնելու համար Վանիկը շաղ տվեց քարանձավի հատակին: Թեև արև չկար ու քարանձավը խավար էր, բայց խոտ է, մի քանի օր հետո կչորանա:
Փետրվարի քսանհինգին Վանիկը իր ուտեստից բաժին չհանեց Ղափլանին: Նա դանակով կտրեց ոչխարի մի ոտքը ու գցեց շան առաջ: Ղափլանը հանգիստ պառկեց և ոչխարի ոտքը առջևի թաթերի մեջ պահելով՝ սկսեց ախորժակով կրծել:
Փետրվարի քսանվեցն անցավ առանց որևէ նորության: Սակայն այդ օրը մի տարօրինակ տխրություն էր համակել Վանիկին: Երեսը ձյունով շփելուց հետո նա նստեց կարպետի վրա, ծնկները գրկեց և ընկավ տխուր մտքերի մեջ: Ոչ մի բան անելու սիրտ չուներ, նույնիսկ ողջ օրը չխոսեց Ղափլանի հետ: Միայն մի երկու անգամ գնաց, կանգնեց անցքի տակ ու «Հե՛յ, հե՛յ»

կանչեց: Ղափլանն էլ իր հերթին մի քանի բերան հաչեց ու լռեց:
Տխուր օր էր: Ոչ «Գիքորը» արտասանելու տրամադրություն կար, ոչ էլ երգելու սիրտ ուներ: Այդ օրը նա սովորականից ուշ քնեց: Այդպես անցավ փետրվարի քսանյոթը ևս:

Գլուխ հինգերորդ

ԹԵ ԻՆՉ ՕԳՈՒՏ ՏՎԵՑ ԴԱՌԸ ԾՈՒԽԸ

Մարտի առաջին օրը ևս անցկացրեց կատարյալ անգործության մեջ. Է ի՞նչ գործ կար, որ ծուլանում էր, չէր անում: Իր «թագավորության» ամեն մի սանտիմետրն արդեն հինգ անգամ ուսումնասիրել, վերջացրել էր: Ուտելիքը մասերի էր բաժանել ու դասավորել պարկում, կախել ժայռից: Ուրիշ էլ ի՞նչ կա, որ նրանով զբաղվի: Այնքան նավթ չունի, որ լամպը ժամերով վառի ու կարդա մորաքրոջ աղջկա թողած հաստափոր գիրքը:
Ի՜նչ զզվելի բան է անգործությունը: Մի կողմից ձանձրույթն է հոգի հանում, մյուս կողմից մեկ էլ տեսար վիատության օձն իր գլուխը հանեց, և մարդ քիչ է մնում հուսահատությունից լաց լինի ու թավալվի գետնին:
Այդ օրը պարկից պակասեց մարտի մեկի բրդուճը: Թեև Վանիկը իր բաժինը կերավ շատ դանդաղ, բերանի պատառը երկար ծամելով, բայց դարձյալ չկշտացավ: Հենց այդ չկշտանալն էր, որ ամենից շատ հուսահատեցնում էր նրան: Նա զգում էր, որ կիսաքաղց մնալուց ոսկորներն արդեն սով են ընկնում: Այժմ շատ հաճախ էր մտաբերում այն կերակուրները, որ մայրը զոռով ուտեցնում էր իրեն: Բոլոր համադամ կերակուրներից ամենից ավելի սիրտը խաշած կարտոֆիլ էր ուզում: «Ա՜խ, եթե մի մեծ աման տաք-տաք կարտոֆիլ լիներ, ոնց կուտեի»,— մտածում էր նա:
Թեև մարտի մեկի բաժնից մի փշուր էլ չէր մնացել, սակայն նրա մեջ մի անզուսպ ցանկություն առաջացավ՝ ուտել մարտի երկուսի բաժինը ևս: Բայց սեփական քաղցի դեմ երկար կռվելուց հետո կտրականապես հրաժարվեց այդ մտքից: «Վատ կսովորեմ»,— խստորեն դատապարտեց ինքն իրեն և այդ օրը ևս մի կերպ մթնացնելու համար (թեև նրա բոլոր օրերը մութ էին), նա սկսեց մեղմիկ երգել: Երգում էր հորից սովորած երկարածոր հորովելները: Նրա ձայնը տխուր զնգում էր դատարկ քարանձավում: Ղափլանը մեջքն ուռցրեց ու մի երկու բերան հաչեց: Երևի կարծեց թե իր տերը սովորականի պես «Հե՛յ, հե՛յ» է անում: Նրա ձայնը հազիվ էր դուրս գալիս փորից:
— Խե՜ղճ Ղափլան,— շան գլուխը գրկելով՝ կարեկցանքով խոսեց Վանիկը,— տեսնում եմ, որ դու էլ ես սոված, նույնիսկ ոչխարի դիակը չկշտացրեց քեզ: Ախր ես էլ քո օրին եմ, սիրելիս, երևի ես ու դու կիսաքաղց մնալուց այնքան լղարենք, որ տեղներիցս անգամ շարժվել չկարողանանք: Իհարկե, հենց հիմա մենք կարող ենք մի լավ կշտանալ, չէ՞ որ ահագին պաշար ունենք՝ ձու, հավ, միս, հաց, մեղր, ընկույզ... Բայց դրանցով մենք կուշտ կլինենք միայն մի քանի օր: Իսկ հետո հո ավազ չենք ուտելու: Ավելի լավ է կես—քաղցած, կես կուշտ ապրենք մինչև գարուն, քան թե մի քանի օր կուշտ մնալուց հետո մեռնենք, պրծնենք:
Նա այդ օրն էլ մոտեցավ առաստաղի անցքին ու մի քանի անգամ «Հե՛յ, հե՛յ» գոռաց: Դրա համար ահագին ճիգ գործադրեց: Ձայնը դժվարությամբ էր դուրս գալիս, մարմինը ցնցվում էր, փորը կպչում մեջքին, գլուխը՝ տմբտմբում: Ուժերը խնայելու համար նա որոշեց քիչ «Հե՛յ, հե՛յ» կանչել: «Հիմա արդեն «Հե՛յ–հե՛յ»–ն էլ չի օգնի, «Հո՛յ–հո՛յ»–ն էլ,— մտածեց նա:— Մերոնք ինձ արդեն վաղուց կորած—մեռած են համարում ու անտեղի որոնումներից ձեռք են քաշել»:
Մարտի երկուսին Վանիկն անսովոր դող զգաց: Մրսում էր: Այդ բանը վախեցրեց նրան: Չլինի՞ թե հանկարծ հիվանդանա: Ուստի որոշեց խոտն ու ցողունը վառել: Գոնե մի քանի րոպե կրակ կունենա, կտաքանա, կուրախանա նրա հեղհեղուկ ցոլքերը տեսնելուց: Նա լուցկին վառեց ու մոտեցրեց խոտի կույտին: Նախ վառվեցին փռնդադու բարակ, մոմանման փշիկները, հետո

թանձր, սպիտակավուն ծուխ բարձրացավ... Վանիկը ձեռքերը դեմ արեց ծխին, մատները տաքացան: Շուտով խռիվը միանգամից բռնկվեց վարդագույն բոցերով, ծուխը սաստկացավ: Լսվում էր կրակի աշխույժ ձայնը ու Վանիկի սիրտը տաքանում էր դրանից: Սակայն երբ նայեց ելնող ծխի հաստ սյանը, մի կասկածելի միտք ծագեց նրա գլխում: Չէ՞ որ իր քարանձավի անցք-երդիկը փակվել է, ուրեմն ծուխը որտեղի՞ց պիտի դուրս գա: Այս բանը վախեցրեց տղային: Թեև քարանձավը մեծ էր, սակայն խոտի ու ցողունի արձակած ծուխն էլ ահագին էր: Այդ ծուխը կարող է լցվել ամբողջ քարանձավը և իրեն էլ, Ղափլանին էլ խեղդամահ անել: Այդ բանից զգուշանալով, Վանիկն ուզեց կրակն իսկույն հանգցնել: Սակայն երբ նայեց ծխի սյանը, բոցի լույսի տակ տեսավ, որ ծուխը չի բարձրանում մինչև քարանձավի առաստաղը, այլ կես ճանապարհին թեքվում է դեպի ձախ ու զարմանալի արագությամբ գնամ, կորչում ինչ-որ տեղ: Կարծես պատը ծծում էր ծխի քուլաները:

«Մի՞թե այս քարանձավը մի ուրիշ անցք էլ ունի»,— խիստ զարմացավ Վանիկը և վազեց այն ուղղությամբ, որտեղ կորչում էր ծուխը:

Խոտն արդեն այնպես էր բռնկվել, որ քարանձավում ամեն ինչ երևում էր: Հասնելով իր «բնակարանի» ձախ պատին, Վանիկը նկատեց, որ ծխի սյունը մտնում է պատի անկյունն ու արագ կորչում այնտեղ: «Այստեղ անցք կա»,— մտածեց նա ու զարմացավ, թե ինչպես է, որ մինչև հիմա չի նկատել դա: Իհարկե, չէր կարող նկատել, քանի որ անցքը գտնվում էր ժայռապատ) անկյունում, գետնից մոտ երեք մետր բարձր և լամպի լույսը չէր հասնում նրան:

Այս նոր հայտնությունը հույսեր ներշնչեց Վանիկին: Նրա միտքն սկսեց գործել զարմանալի հստակ ու արագ: Առաջին որոշումն այն էր, որ պետք է բարձրանալ մինչև այդ տարօրինակ «ծխնելույզն» ու իմանալ, թե ի՞նչ անցք է դա և ո՞ւր է տանում:

Մի բան պարզ էր. եթե ծուխն այդ անհայտ անցքի միջով «վազում է» դեպի ինչ-որ տեղ, նշանակում է իր «տան»–քարանձավը հարաբերություն ունի արտաքին աշխարհի հետ: «Այնտեղ կարող է փրկության ելք լինել»,— ոգևորված մտածեց Վանիկը՝ շարունակելով նայել անցքին, որի միջով արագ կորչում էր ծխի հաստ սյունը: Անցք ունեցող ժայռապատը թեք էր: Նրա վրա բազմաթիվ մանր փոսեր ու ցցվածքներ կային: Դրանք մի տեսակ սանդուղք էին կազմում, որոնց վրայով հեշտությամբ կարելի էր բարձրանալ մինչև հանելուկային անցքը: Առանց երկար մտածելու, Վանիկն արագ մագլցեց պատը, սակայն դեռ անցքին չհասած՝ կրակը մարեց ու քարանձավը նորից ընկղմվեց խավարի մեջ: Վանիկը ցած իջավ և կրակի թույլ ցոլքերի ուղղությամբ գնաց նստեց նրա մոտ:

«Անպայման պետք է հետազոտել այդ անցքը»,— վճռեց նա,— գուցե դա հասնում է մինչև գետնի երեսը կամ դուրս է գալիս մի ուրիշ քարանձավ: Երկու դեպքում էլ պետք է պարզել հանելուկը»:

Վանիկը վճռեց Ղափլանի հետ հենց հիմա գնալ դեպի անցքից այն կողմը գտնվող անհայտ վայրը: Նա իսկույն վեր կացավ, հրացանը գցեց ուսը և լամպը վերցնելով՝ շանը ձայն տվեց.

— Դե գնանք, Ղափլան, գնանք տեսնենք, թե այն կողմն ինչ կա, ինչ հոր բախտ է սպասում մեզ:

Առանց մեծ դժվարության նա ու Ղափլանը բարձրացան ժայռի բնական սանդուղքներով ու հասան խորհրդավոր անցքին: Վանիկը գլուխը խոթեց նրա մեջ և օդի սառը հոսանք զգաց երեսին: Նրան թվաց, թե ջրի հոտ կպավ քթին: Լամպը բարձրացրեց, փորի վրա առաջ սողաց և ուշադիր նայեց դիմացը: Սակայն լամպի լույսը հալվում էր դատարկ տարածության մեջ և անցքի գորշ պատերից բացի ուրիշ բան չէր երևում: Այդ խորհրդավոր խավարից Վանիկի սիրտն ահ ընկավ: «Չլինի՞ թե ես գտնվում եմ ստորերկրյա անդունդի եզերքին»,— մտածեց նա: Բայց շուտով չորս կողմը շոշափելով կարողացավ պարզել, որ անցքի եզերքից սկսած ժայռապատը թեքությամբ իջնում է ներքև: Նա հրացանը տնկելով՝ սկսեց դես ու դեն շարժել: Հրացանը ոչ մի բանի դեմ չառավ: «Ուրեմն այստեղ էլ իմ քարանձավի պես առաստաղը բարձր

է»,– եզրակացրեց Վանիկը և սիրտ անելով՝ հետույքի վրա սողալով՝ մի քիչ առաջ գնաց: Այդպես սողալով նա բոլորովին դուրս եկավ անցքից և լամպի լույսի տակ պարզ նկատեց ներքև իջնող ժայռի մի մասը: Նրա գլխում մի նոր, ավելի խիզախ միտք ծագեց՝ ժայռի լանջով իջնել ներքև ու պարզել, թե ինչ կա այդ նոր խավարի մեջ:

Նա արդեն հաշտվել էր իր վիճակի հետ: Ինչ էլ պատահելու լինի, չպետք է հուսահատվել: Պետք է ուսումնասիրել այս «նոր աշխարհը»: Դրա համար հարկավոր է վերադառնալ «տուն» և որոշ պատրաստության տեսնել:

Վերադառնալով «տուն», նա երկու բրդուճ ուտելիք կոխեց ծոցը, գրպանները լցրեց մեծ-մեծ խճաքարերով ու Ղափլանի հետ նորից բարձրացավ մինչև հանելուկային անցքը: Առաջվա պես սողեսող անցավ նրա միջով և նստեց այնտեղ, որտեղ նստած էր քիչ առաջ: Ղափլանը ոչ մի վայրկյան չէր հեռանում նրանից: Ի՞նչ էր կռահում այդ խելացի կենդանին, դժվար էր իմանալ:

Լամպն առաջվա պես լուսավորում էր ընդամենը մի փոքրիկ տարածություն, որից այն կողմ թանձր խավար էր՝ լուռ, սարսափ առաջացնող խավար: Վանիկը հարմար նստեց ու գրպանից մի խճաքար հանելով, նետեց ներքև, իրենից ոչ շատ հեռու: Քարը զնգոցով կպավ ինչ-որ կոշտ բանի:

«Ահա, ուրեմն այս նոր քարանձավի հատակը խոր չէ»,– քարի ձայնից եզրակացրեց Վանիկը և մի նոր քար էլ նետեց ներքև, բայց այս անգամ ավելի հեռու: Նորից լսվեց նույն չխկոցը: «Այս քարանձավի հատակն էլ է ժայռեղեն»,– քարի ձայնից եզրակացրեց Վանիկը: Իր մոտ եղած բոլոր քարերը նա նետեց առաջ, երբեմն աջ, երբեմն ձախ, երբեմն էլ իր հաշվով շատ հեռու: Քարերը զնգում էին ժայռի հատակին դիպչելով: Այլևս ոչ մի կասկած չկար, որ դիմացը մի նոր, ստորերկրյա քարանձավ է:

Վանիկը սողաց դեպի ներքև... Իջնում էր մեծ զգուշությամբ, հանգամանորեն շոշափելով շրջակայքը... Շուտով նա ոտքի տակ ավազ զգաց ու կանգ առավ: «Չլինի՞ թե դուրս եմ եկել Կապուտան լճի ափը»,– կայծակեց նրա գլխում այս միտքը և նրա սիրտը ուրախությունից տրոփեց: Բայց այդ ուրախությունը անժամանակ էր: Հաջորդ վայրկյանին նա հասկացավ, որ բոլորովին էլ լճափին չէ, այլապես կտեսներ շրջակայքը, գոնե կերևար երկինքը, մի աստղ, մի պատառ ամպ, ձյունի մի շերտ:

Ամենից հավանականն այն է, որ գտնվում էր ստորգետնյա մի նոր քարանձավում: Ուրեմն պիտի քայլել առաջ: Նա կռացավ, տեսավ, որ այստեղ էլ հատակը նույնն է, ինչպես իր «բնակարանինը» և սրտապնդվեց: Բայց երբ մի հինգ քայլ գնաց, ոտքերն ավազի մեջ ընկան: Հետզհետե ավազի շերտը հաստացավ, այնպես, որ ներբանները թաղվում էին նրա մեջ: Վանիկը զգում էր, որ ինքը քայլում է մի վիթխարի, բնական թունելի միջով: Այդ բանը միանգամայն պարզ դարձավ, երբ քայլելիս սկսեց հաճախակի դեմ առնել աջ կամ ձախ կողմերից ձգվող ժայռի լանջերին: Այս քարանձավի զուգահեռ պատերն իրար ավելի մոտ էին, քան իր «բնակարանինը»:

Վանիկը մի հարյուր քայլ հազիվ էր անցել, երբ կանգ առավ: «Արդյոք շարունակե՞մ ճանապարհս: Չլինի՞ հանկարծ մոլորվեմ ու այլևս չգտնեմ իմ «բնակարանը»,– մտածեց նա: Եվ իրոք, ի՞նչ իմանար, թե որտեղ է ինքը և ուր է գնում: Գուցե այս քարանձավը ուրիշ բաժանմունքներ էլ ունի և ինքը նրանց մեջ ընկնելով բոլորովին կմոլորվի: Ի՞նչ անել, շարունակե՞լ ճանապարհը, թե ետ դառնալ՝ որևէ արդյունքի չհասած:

Այս տարակուսանքի մեջ էր նա, երբ իր կողքին կանգնած Ղափլանը հանկարծ մռռաց, մի երկու բերան հաչեց ու պոկվելով տեղից՝ նետվեց առաջ: Շան արարքը սաստիկ տարօրինակ թվաց Վանիկին: Նա այնպես վախեցավ, որ չիմացավ, թե ինչ անի: Նրան թվաց, թե շունը փախչում է՝ իրենց հետևից ինչ-որ մեծ վտանգ զգալով: Այս կասկածից նրա ծնոտը թուլացավ

ու ատամները սկսեցին չխկչխկալ: Նրա սարսափն այնքան մեծ էր, որ այլևս անընդունակ էր թեկուզ հրացանն ուսից իջեցնելու:
— Ղափլա՛ն, հե՛յ...— երկար կարկամած մնալուց հետո՝ ահուդողով կանչեց նա:
Ղափլանը հաչոցով պատասխանեց տիրոջը: Նրա ձայնը գալիս էր շատ հեռվից: Բայց պարզվեց, որ շունը ոչ թե Վանիկի կանչին էր արձագանքում, այլ այնտեղ կատաղորեն հաչում էր ինչ-որ մեկի վրա: Բոլոր ուժերը հավաքելով՝ Վանիկը հրացանն իջեցրեց ուսից ու պատրաստվեց կրակելու...
«Այն ի՞նչ գազանի է հանդիպել Ղափլանը, որի վրա հաչում է այնպես կատաղած»,— մտածեց Վանիկը, բայց ոչինչ կռահել չկարողացավ: Շունը շարունակում էր կատաղորեն հաչել: Թվում էր, թե նա գզվում է ինչ-որ գազանի հետ: Ի՞նչ անել, գնա՞լ շան հետևից, թե՞ ետ դառնալ ու փախչել... Փախչե՞լ, դժբախտության մեջ թողնե՞լ իր միակ ընկերոջը: Վանիկը փորձեց գնալ շան հետևից, բայց ոտքերը չշարժվեցին:
Դժվար էր ասել, թե որքան մնաց այդպես ահից քարացած, անշարժ վիճակում, երբ զգաց, որ շունը ուրախ քսվում էր ոտքերին: Դրանից նրա լեզուն բացվեց:
— Ո՞ւր էիր, Ղափլան,— տեղում չոքելով՝ հազիվ կարողացավ հարցնել Վանիկը:
— Հա՛ֆ, հա՛ֆ,— դեպի քարանձավի խորքերը նայելով՝ չարացած հաչեց շունը:
Կասկած չկար, որ այդ թունելաձև քարանձավի հեռավոր խորքում մի մեծ վտանգ կա: Վանիկն արագ կանգնեց տեղը, երկար ականջ դրեց խավարին, և հանկարծ շուռ գալով, փախավ... Այնպես էր փախչում, որ մի երկու անգամ ուսը կպցրեց թունելի պատին: Հարբածի պես մի կողմից մյուսն էր ընկնում: Բայց որքան էլ խելակորույս լիներ, ոչ մի քայլ չէր հեռանամ իր առջևից վազող շնից: Շանը չէր կորցնի այն ճանապարհը, որով եկել էին:
Արագ մագլցելով ժայռը, նա հասավ երկու քարանձավն իրար կապող անցքին ա շան հետ շնչակտուր ընկավ իր «տունը»:
«Պրծա, պրծա՛,— ինքն իրեն խոսեց նա,— ով գիտե ինչ փորձանքից պրծա»:

* * *

Մարտի երեքը Վանիկի համար անցավ ծանր ու տանջալի: Երեկ հարևան քարանձավում ապրած սարսափը նրան այնպես էր ընկճել, որ ամբողջ օրը մնաց «անկողնու» վրա ընկած: «Ի՞նչ կար այդ խորհրդավոր «նոր աշխարհում», որ շունն այնպես կատաղորեն հաչում էր:— Անվերջ մտածում էր նա:— Շունն ինչո՞ւ վազեց առաջ, ո՞ւմ հետ էր կռվում: Իսկ հետո ինչո՞ւ հպարտ-հպարտ ետ եկավ»: Այս ու նման բազմաթիվ հարցեր տանջում էին նրա միտքը ու մնում անպատասխան:
Իհարկե, Կուխտու մարդակերպ հրեշը ո՛չ եղել է, ո՛չ էլ կա, մի անգամ ընդմիշտ պետք է հասկանալ այդ բանը: Հիմարություն կլինի մտածել, որ «նոր աշխարհում» մարդ չի բնակվում, մանավանդ որ Ղափլանը մարդահաչ չէր տալիս: Ուրեմն այնտեղ ինչ-որ գազան է ապրում: Այն էլ այնպիսի գազան, որից Ղափլանն սկզբում վախեցել է, իսկ հետո համարձակ կոխ բռնել հետը: Վանիկը զննեց Ղափլանի մարմինը, սակայն ոչ մի վերք կամ չանգռվածք չգտավ նրա վրա:
— Ախր ի՞նչ կար այնտեղ, Ղափլա՛ն, հը՞,— հարցրեց նա ու ձեռքը մեկնեց հարևան քարանձավի կողմը:— Ո՞ւմ վրա էիր հաչում...
— Մը՛ռռռ...— նայելով տիրոջ ցույց տված կողմը՝ ատամները կրճտացրեց շունն ու կարճ պոչը չարությամբ շարժեց: Դե արի ու այդ «մը՞ռռ»–ից մի բան եզրակացրու:
Այդ դեպքից հետո Վանիկի հանգիստը կորավ, ու նա ընկավ անտանելի կասկածների մեջ: Ինչպե՞ս կարող էր անհոգ ապրել, երբ գտնվում էր մի այնպիսի վտանգավոր հարևանի մոտ, որից նույնիսկ սրտոտ Ղափլանն է վախեցել: Հարևան քարանձավից սպասվող վտանգի առաջն առնելու համար նա վճռեց փակել նորահայտ անցքը: Զարմանալի է մարդու բանը,

երեկ Վանիկը անսահման ուրախացել էր, որ մի նոր անցք է հայտնաբերել իր քարանձավում, իսկ հիմա վախենում է այդ անցքից և իր կյանքիս սպառնացող ամենամեծ վտանգը այնտեղից սպասում: Այո, պետք է անցքը փակել:
Այդ օրը Վանիկը երեսը ձյունով չշփեց, այսինքն չլվացվեց, սովորական «Հե՛յ-հե՛յ»-ը չկանչեց: Սաստիկ գրգռված էր, անհանգիստ: Հակառակի պես ուտելու պահանջն ավելի էր սաստկացել: Առանց երկար մտածելու նա մոտեցավ «մառանին» ու պարկից հանեց մարտի երեքի բաժինը, սակայն դրանից բան չտվեց շանը:
— Հրեն ոչխարի գլխի վրա դեռ ուտելու ահագին բան է մնում, Ղափլա՛ն,— ասաց նա,— գնա՛ լափիր, յոլա գնա...
Օրվա բաժինը խժռեց գրեթե առանց ծամելու: Ա՛խ, եթե եփած կարտոֆիլ լիներ: Շունը մաքրազարդեց ոչխարի գլուխը: Վանիկը գանգը տնտղեց: Մսի ոչ մի թել այլևս չէր մնացել նրա վրա: Բայց գանգը դեռ ծանր էր: Հասկանալի է, միջին ուտելու բան կա: Վանիկը քարով այն ջարդեց, երկու կես արեց, ուղեղը հանեց միջից ու գցեց շան առաջ: Նայելով, թե Ղափլանն ինչպես է լափում ուղեղը, ինքն էլ ուտելու այնպիսի անզուսպ ցանկություն ունեցավ, որ նույնիսկ լիզեց ուղեղոտ մատները: Բայց զզվեց ու սկսեց անվերջ թքել:
Ղափլանը մեծ բավականությամբ կերավ ոչխարի ուղեղը և ետևի ոտքերի վրա պպզելով՝ սկսեց դունչը լիզել:
— Դու իմ ուղեղն էլ այդպիսի ախորժակով կլափես,— չգիտես ինչու հանկարծ ասաց Վանիկն ու նրա գլխում մի ահավոր միտք ծագեց: Նրան թվաց, թե երբ այլևս ուտելու բան չունենան, Ղափլանը կհարձակվի իր վրա ու իրեն կծվատի:
Այս անսպասելի մտքից Վանիկը փշաքաղվեց և աչքերը չռած՝ նայեց մառանի պարկին: Ուտելիքը պակասում էր: Թեև կիսաքաղց էր ապրում, այնուամենայնիվ, պակասում էր: Գուցե ինքն իր հաշիվներում սխալվել, և օրական ոչ թե մեկ, այլ երեք բաժին է ուտում: Ի՜նչ իմանաս: Ո՛չ ժամացույց կա, ո՛չ էլ արևի լույսն է տեսնում, որ ցերեկն ու գիշերը տարբերի իրարից: Բայց փաստն այն էր, որ շուտով պարենը կվերջանա և ինքն ու շունը բոլորովին սոված կմնան: Իհարկե, ինքը մի երկու-երեք օր կարող է համբերել ու մեռնել տեղը պառկած: Իսկ Ղափլանը կհամբերի՞: «Չի համբերի, - ինքն իր հարցին պատասխանեց նա:— Այո՛, չի համբերի»: Թեև Ղափլանը ոչխարի մի ամբողջ ուղեղ էր լափել, բայց ահա տեղը նստել է խռոված, նրա կաշին ծալծլվել է, քնձռնել, մազերը բիզ—բիզ էին կանգնել, իսկ փորը կպել էր մեջքին:
Կարծես զգալով, որ իր տերը մի վատ բան է մտածում իր մասին, Ղափլանը վեր կացավ, մեջքն ուռեցրեց ու ետևի թաթերին պպզելով՝ ոռնաց...
Այնպես խորհրդավոր ու զարհուրելի էր նրա ոռնոցը, որ Վանիկի շունչը կտրվեց, թուքը չորացավ: Նա լսել էր, որ երկար ժամանակ սոված մնալուց շները կատաղում են ու սկսում ոռնալ... Այդ բանը բոլորովին սարսափեցրեց Վանիկին, և նա սկսեց ավելի շատ վախենալ իր շնից, քան հարևան քարանձավում ապրող անհայտ գազանից: «Չլինի՞ հանկարծ կատաղի ու երբ քնած լինեմ, ինձ ուտի»,— մտածեց նա և դա ժխտող ուրիշ ոչ մի միտք չմտավ նրա գլուխը:
— Է՜, հե՜, հե՞յ...— հուսահատությունից ու սարսափից խելագարի պես գոռաց նա ու մի քանի քայլ հեռացավ շան մոտից: Ապա ակնապիշ նայելով շանը՝ լացակումած բղավեց.
— Կուտե՛ս ինձ, կուտե՞ս:
Նա նետվեց դեպի ուտեստի պարկը: Ձեռն ընկած ուտելիքի բաժինը հանեց այնտեղից ո՛ւ նետեց շան առաջ:
— Կե՛ր, կե՛ր,— խեղդված ձայնով գոռաց նա,— կե՛ր, որ չկատաղես, ինձ չուտես: Դե, լափի՛ր, զխկտվի՛ր...
Բայց իզուր էր նա կոկորդը պատռում: Շունը դադարել էր ոռնալուց ու զարմացած նայում էր տիրոջը: Նա նույնիսկ դունչը չմեկնեց իր առաջ ընկած հացին:

— Չե՞ս ուտում, հա՞...— նրա վերաբերմունքից ավելի սարսափած՝ գոչեց Վանիկը:— Ուրեմն իմ տվածը չե՞ս ուզում ուտել: Սպասում ես, որ ես քնեմ, հետո հարձակվես վրաս ու ինձ լափե՞ս:
Վանիկը թուլացած տարածվեց գետնին ու սկսեց հեկեկալ... Այդ պահից սկսած Ղափլանի վրա ունեցած կասկածը սաստկացավ նրա մեջ: Այժմ ուրիշ բանի մասին չէր մտածում: Օրվա բոլոր զբաղմունքները մոռացած՝ նա միայն հետևում էր շանը: Ամեն վայրկյան նրան թվում էր, թե Ղափլանն իրեն ուտելու է:
Մարտի հինգի բաժինը կերավ մենակ, Ղափլանին ոչինչ չտվեց, թեև շունը՝ աչքը նրա ձեռքին, սպասում էր ու միայն շրթունքները լիզում: Վանիկի մեջ մի սոսկալի ատելություն էր առաջացել դեպի շունը, և նա որոշեց շղթայել իր բարեկամին: Մոթալ կապելու պարանի կծիկը քանդեց, օղ շինեց ու գցեց Ղափլանի վիզը: Հետո նրան կապեց ժայռի ցցվածքին և մի ուժեղ աքացի տալով խեղճի կռնակին՝ վերադարձավ իր տեղը: Ամբողջ օրը շունը ձայն չհանեց, իսկ մյուս օրը, երբ Վանիկը ոչնչացնում էր մարտի վեցի բաժինը, շունն սկսեց ծառս-ծառս լինել տեղում, թոկը ձիգ տալ, և որ ավելի սարսափելի էր՝ ոռնալ, անվերջ ոռնալ...
Մարտի յոթին Վանիկի մեջ մի ավելի դաժան միտք ծագեց՝ սպանել Ղափլանին: Ղափլանն այդ օրը ոռնում էր սրտամորմոք ու աղաղակող ձայնով: Վանիկը լավ էր հասկանում, որ ինքը դիմում է մի ստոր դավաճանության, բայց ուրիշ ելք չուներ: Կյանքը կորցնելու, շան բաժին դառնալու ահավոր գիտակցությունը նրան դրդում էր դիմել այդ դաժան քայլին:
«Շուտով իմ ուտեստի պաշարը կվերջանա,— մտածում էր նա,— հացի վերջին փշուրը կսպառվի, և սովից կատաղած Ղափլանն ինձ կուտի: Շուտով ես էլ, ինքն էլ սատկելու ենք: Ավելի լավ է թող առաջ ինքը սատկի»:
Ինչ անում, չէր անում Վանիկը, չէր կարողանում գլխից հանել Ղափլանի նկատմամբ ծագած հանցավոր միտքը: Վայրկյան առ վայրկյան մոտենում էր այն պահը, որ պիտի սպաներ շանը: Հակառակի պես շունն այդ օրը քիչ ոռնաց ու երեկոյան դեմ ձայնը բոլորովին կտրեց: Վանիկը մոտեցավ նրան ու մի լուցկի վառեց: Շունը կարծես չլսեց տիրոջ ոտնաձայնը: Ոչ մի շարժում չարավ, չդիմավորեց նրան, պառկել էր գլուխը թաթերին, աչքերը փակ: «Սատկում է,– մտածեց Վանիկը:— Դե, իհարկե կսատկի, երեք օր բան չի կերել»: Վանիկը խղճաց շանը, ցանկացավ գուրգուրել նրան, կապն արձակել, կերակրել, բայց անիծված կասկածը դարձյալ սկսեց ուղեղը ծակել: «Եթե չսատկի, անպայման ինձ կուտի»,— ինքն իրեն ասաց նա ու հիշեց հանգուցյալ պապի խոսքերը. «Շան հետ ախպերացիր, սակայն փայտը ձեռքիցդ մի գցիր»: Ափսոս է Ղափլանը, բայց ինչ արած: Սովից կկատաղի ու կհարձակվի ինձ վրա: Առայժմ նրանից ոչ մի վտանգ չկա: Նա ամուր կապված է ժայռին: Ինչո՞ւ մի փամփուշտ էլ փչացնեմ, իմ ձեռքով սպանեմ իմ ընկերոջը: Թող ինքն իրեն սատկի»: Վանիկը տխուր նայեց անշարժ մեկնված շանը ու հառաչելով ետ եկավ:
Այդ գիշեր համեմատաբար հանգիստ քնեց: Այլևս Ղափլանից ահ չուներ: Շունն անշարժ պառկած սատկում էր: Վանիկը հանկարծ փղձկաց և սկսեց անձայն լաց լինել: Ախ, ինչ դաժան է ինքը, ինչո՞ւ է թողնում, որ Ղափլանը սատկի, ինչո՞ւ չի կերակրում նրան, հաց տալիս: Ինչո՞ւ: Միթե ինքը քի՞չ է սիրում իր շանը: Սիրում է, շատ է սիրում: Բայց ի՞նչ կարող է անել: Չէ՞ որ իր պաշարը սպառվում է, իսկ վերևի երդիկ-անցքի ձյունը դեռ հալելու միտք չունի: Իրե՞ն փրկի, թե՞ շանը...
Երկար տառապելուց հետո նա բաց արեց իր տետրերից մեկն ու գրեց.
— Ով ինձ գտնի մեռած կամ կենդանի և իմանա իմ դառն պատմությունը, կամ թե մի կերպ կռահի, որ ես եմ սովամահ արել իմ շանը, ապա թող չմեղադրի ինձ: Ես ուրիշ ճար չունեմ: Ես ուզում եմ ապրել: Իսկ որպեսզի ապրեմ, պետք է Ղափլանը սատկի: Կամ՝ նա, կամ՝ ես: Գուցե մայրս իր սրտի հեռավոր անկյունում հույս ունի, թե մի օր ես կհայտնվեմ մեր տանը: Գուցե իր հույսը չի կորցրել նաև հայրս: Եթե ես ողջ մնամ, կուրախացնեմ իմ դժբախտ ծնողներին:

Մեղադրեցեք ինձ, բայց արդար, ուրիշ ելք չկա»:
Տետրակը դրեց խուրջինում ու պառկեց այն համոզմամբ, որ առավոտյան լաց կլինի Ղափլանի դիակի վրա ու նրան կթաղի ավազի մեջ: Գիշերվա կեսին նա բռնվեց տենդով: Անվերջ շուռումուռ էր գալիս տեղը, սոսկալի երազներ էր տեսնում: Մի երկու անգամ նստեց և ուշքն ահով լարեց դեպի այն կողմը, ուր սատկում էր Ղափլանը: Սակայն պատի տակից ձայն չէր լսվում: Մի անգամ էլ նա քնից արթնացավ երեսին քսվող ինչ-որ տաք, լպրծուն բանից: Ամբողջ գիշեր խիստ գրգռված վիճակում լինելով՝ նա այնպես վախեցավ այդ տաք բանից, որ քիչ մնաց սրտաճաք լինի: Ահից գոռաց ու ձեռքերը կարկառեց առաջ: Մատները մտան ինչ-որ մեկի երախը: Հասկանալով, որ երեսը լիզողը Ղափլանն է, ճչաց լեղաճաք.
— Ինձ մի՛ մոտենա, Ղափլան, հեռո՛ւ կաց:
Նա մեջքը հենեց ժայռին ու սպասեց... Բայց Ղափլանը չմոտեցավ նրան: Տեղը պպզած՝ աչքերը չռած նայում էր իր տիրոջը: Վանիկը միայն նկատում էր նրա աչքերի ֆոսֆորագույն կրակը...
Որքա՞ն մնաց այդ վիճակում, չէր կտրող որոշել: Միայն զարմանում էր, թե ինչպե՞ս է, որ ուշքը չի կորցրել և դեռ կենդանի է: Բայց թեև կենդանի էր, սակայն մի բան անելու կամ մտածելու ուժ չէր մնացել նրա մեջ: Մեջքը հենել էր ժայռին, ձեռքերը առաջ պարզել ու ահից քարացած՝ նայում էր իր դիմացը փայլատակող աչքերին: Նա ամեն վայրկյան սպասում էր, որ Ղափլանը կհարձակվի իր վրա, և ինքը ուժ չի ունենա դիմադրելու նրան:
Վերջապես տեսնելով, որ շունը հապաղում է, Վանիկի շունչը տեղը եկավ ու դողացող ձեռքերով լամպը վառեց: Լույսը նրան սրտապնդեց, գիտակցությունը տեղը բերեց: «Գուցե Ղափլանը երբեք էլ մտադիր չի եղել ինձ ուտել»,— եղավ առաջին միտքը, բայց երբ նկատեց, որ Ղափլանը կրծելով կտրել է իր կապը, ցնցվեց:
«Եթե իրոք ինձ ուտելու միտք չունի, ապա ինչո՞ւ է թոկը կրծել կտրել,— նորից մտածեց Վանիկը:— Այո՛, այո՛, միտքը ծուռ է, ուզում է ինձ ուտել: Ահա, տեսեք, թե ինչպես է մեջքն ուռցրել, դունչը տնկել: Երախը նույնիսկ բաց է, իսկ աչքերին նայել չի լինում: Նրանք լիքն են գազանային չարությամբ»:
Ուրիշ ելք չկա, պետք է առանց հետաձգելու սատկեցնել Ղափլանին: Ավելի լավ չէ՞ սովից մեռնել, քան թե շան բաժին դառնալ:
Այս հաստատ վճիռը կայացնելուց հետո, Վանիկը սողեսող մոտեցավ ու առանց աչքը Ղափլանից կտրելու՝ հրացանը վերցրեց: Նրա մարմինը դող ընկավ, ատամները չխկչխկացին: Կյանքում առաջին անգամ էր փորձ անում որևէ շունչ-արարած սպանել: Այնինչ իր գլխին կախված վերահաս վտանգին անտեղյակ Ղափլանը շարունակում էր հետաքրքրությամբ նայել տիրոջը:
Վանիկը հրացանը պարզեց դեպի նա, մատը դրեց ձգանին՝ որ քաշի, սակայն շան աչքերում մի այնպիսի թախիծ ու այնպիսի բարություն նկատեց, որ հրացանն իջեցրեց ու տնքաց՝ ահեղ մտքերի ծանրությունից...
Նա նստեց սաստիկ լարումից թուլացած, քիչ էր մնում ուշաթափվի: Չգիտեր ինչ աներ: Հանկարծ շունը ականջները խլշեց, մի ակնթարթ նայեց դեպի անցքը ու տեղից պոկ գալով՝ կայծակի պես թռավ, անհետացավ նրա մեջ:
Շան այդ արարքից Վանիկը բոլորովին շշկլվեց: Ո՞ւր գնաց շունը: Ինչո՞ւ փախավ: Մի՞թե կռահեց, որ ինքը դավաճանել է նրան, ու վեհանձնաբար փախավ, հեռացավ ապերախտ ընկերոջից: Վանիկն այրող ամոթ զգաց: Անզորությունից, դավադիր լինելու ծանր մտքից ու իր դաժան բախտից զզված՝ նա լաց եղավ: Լաց էր լինում բարձրաձայն: Երբեմն դառնում էր դեպի հարևան քարանձավը ու լացակումած գոռում.
— Ղափլա՞ն, հե՛յ...

Ոչ մի պատասխան:
Տանջալի մտքեր սկսեցին պաշարել Վանիկին: Ամենից շատ նրան ցավ էր պատճառում խղճի խայթը. «Ղափլանին սպանելու ստոր միտքը որտեղի՞ց մտավ գլուխս,— ինքն իրեն հարցնում էր նա:— Ես հիմա՞ր էի, խե՞նթ էի: Երբեք էլ Ղափլանը չէր ուզում ինձ ուտել: Այդ բանը ես եմ հիմարի պես հնարել: Ես ապերախտ եմ, խոզ եմ, ես, ես... Ես դավաճան եմ, իսկ Ղափլանն ինձ երբեք չի դավաճանել, երբե՛ք...»
Երկար ժամանակ անցավ, բայց Ղափլանը չերևաց: Վանիկի անհանգստությունը փոխվեց տագնապի: Նա ավելի ու ավելի էր համոզվում, որ շունը բոլորովին իրեն վնաս տալու մտադրություն չուներ: Եթե այդպիսի միտք ունենար, ուրեմն անհապաղ կհարձակվեր իր վրա, երբ ինքը ահից մի բուռ դարձած՝ կուչ էր եկել պատի տակ ու աղաչում էր նրան՝ խնայել իրեն: Բացի այդ, շունն իրեն կուտեր, երբ ինքը քնած էր, և փոխանակ քնքշությամբ իր երեսը լիզելու (այդ քնքշանքը նոր միայն հասկացավ Վանիկը), միանգամից կբռներ իր կոկորդից ու կխեղդեր...
Այս տանջալի մտքերի մեջ էր Վանիկը, երբ Ղափլանը հայտնվեց և ուրախ-ուրախ մոտեցավ նրան: Նրա բերանում մի սպիտակ բան կար: Վանիկը աչքերը չռած նայեց դրան և ուրախությունից ճչաց: Ինչպե՞ս չուրախանար, ինչպե՞ս չճչար: Ղափլանի երախում մի բավականին մեծ ձուկ կար...
Շունը ձուկը դրեց գետնին ու գլուխը հպարտ բռնած՝ զվարթ նայեց տիրոջը: Այդ զարմանալի նորությունից Վանիկն իսկույն մոռացավ Ղափլանի նկատմամբ իր ունեցած կասկածները և մի անհուն սիրով փաթաթվելով նրան՝ հազար ու մի խոսքով սկսեց ներողություն խնդրել: Նա կարոտով համբուրում էր շան նիհար վիզը, կտրած ականջները, դունչը: Այդպես մորը համբուրում է անտառում մոլորված երեխան, երբ մայրը, երկար չարչարվելուց հետո, ի վերջո գտնում է նրան:

Գլուխ վեցերորդ

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՆՈՐ ԱՇԽԱՐՀ

Վանիկը շանը բաց թողեց գրկից ու գետնից վերցրեց նրա բերած ձուկը: Դա մի մեծ կարմրախայտ էր՝ մանր, ոսկեգույն պիտակներով: Վանիկը ձեռքի մեջ շուռումուռ էր տալիս ձուկը, հոտ քաշում, շոշափում և ոչ մի կերպ չէր հավատում իր աչքերին: Ղափլանը ուրախ թափահարում էր գլուխն ու ծմրկոտալով կարծես ինչ-որ բան էր ուզում հասկացնել տիրոջը: Ըստ երևույթին ձուկը մի քանի օր առաջ է ջրից հանվել: Գլուխն արդեն սկսել էր թեթևակի հոտել, կաշին ծալծլվել էր: Համենայն դեպս կարելի էր մեծ ախորժակով ուտել, եթե հնարավոր լիներ դա եփել: Չնայած Վանիկը որևէ բան եփելու միջոց չուներ, այնուամենայնիվ, բնավ չնվազեց նրա ոգևորությունը: Այժմ նրա համար պարզ էր, որ մոտակայքում, ինչ-որ տեղ, ջուր կա ու այդ ջրի մեջ էլ ձկներ են ապրում: Սա արդեն մի այնպիսի հայտնություն էր, որին Վանիկը երբեք չէր սպասում և որը նրա խավար կյանքի մեջ մոտալուտ փրկության մի նոր ու մեծ հույս առաջացրեց:
Որտեղի՞ց է Ղափլանը ձուկ գտել: Ահա այն հարցը, որ ծառացավ Վանիկի առջև: Նա մոռացել էր անցած երկու օրվա տանջանքն ու դառը հուսահատությունը և միայն մտածում էր լուծել ձկան հանելուկը: Բայց դա անհնարին էր՝ առանց նորից հարևան քարանձավը գնալու: Մի բան կասկածից դուրս էր. Ղափլանը ձուկը բերել էր «նոր աշխարհից», որից Վանիկն այնքան սարսափում էր, և նույնիսկ վճռել էր փակել այնտեղ տանող անցքը:
Վանիկը ձուկը դրեց շան առաջ ու քնքշանքով ասաց.
— Կե՛ր, Ղափլա՛ն ջան, ձուկը կեր: Դու իմաստուն շուն ես: Ես հազար անգամ ներողություն եմ խնդրում, որ քեզ վիրավորել եմ, նույնիսկ հրացան քաշել վրադ: Բայց արի անցյալը չհիշենք:

Դու ձուկ կեր, լավ սնունդ է:
Բայց Ղափլանը ձուկը չկերավ, գետնից զգուշությամբ վերցրեց ու իր շնային սովորության համաձայն՝ տարավ, թաղեց ավազի մեջ: «Ուրեմն շունս այնտեղ ձուկ շատ է կերել,— եզրակացրեց Վանիկը,— կշտացել է և հիմա պաշար է պահում նեղ օրվա համար: Այդ արդեն լավ է, լա՛վ...» Քարանձավ ընկնելուց հետո նա առաջին անգամ սրտանց ծիծաղեց:
Նա արդեն չէր սարսափում հարևան քարանձավից: Պարզ է, այնտեղ մի առանձին վտանգ չկա, թե չէ Ղափլանը երկու անգամ չէր գնա, գնալուց էլ ետ չէր գա: Պետք է անպայման Ղափլանի հետ գնալ այդ քարանձավի խորքերը և հայտնաբերել այն հրաշալի վայրը, որտեղ ջուր ու ձուկ կա:
Նա լամպը նավթ լցրեց, երեք բաժին ուտելիք դրեց գրպանը և մոթալ կապելու թոկի կծիկը բաց անելով՝ փաթաթեց մեջքին: Ո՞վ գիտե, կարող է այդ թոկը պետք գալ: Ապա լամպի պատրույգը բարձրացրեց, հրացանը գցեց ուսը և շան հետ ուղևորվեց դեպի «նոր աշխարհ»:
Մտան մութ անցքը և զգուշությամբ իջան «նոր աշխարհի» հատակը: Սակայն մի քսան քայլ հազիվ էին կատարել, երբ կանգ առան... Նորից մի մեծ ահ մտավ Վանիկի սիրտը: Առաջվա կասկածն սկսեց տանջել: Ո՞վ գիտե ինչ ճանապարհ է բռնել ինքը, ինչպե՞ս իմանա, թե ո՞ւր է գնում այս խավարի մեջ: Արդյոք մի դժբախտություն չի՞ պատահի այստեղ: Եղավ մի պահ, որ նա որոշեց ետ դառնալ, նույնիսկ ձայն տվեց իրենից մի քիչ առաջ ընկած շանը, բայց հետո զղջաց: «Ինչո՞ւ վերադառնամ,— մտածեց նա:— Ահա Ղափլանն ուրախ է, նշանակում է մի առանձին վտանգ չկա: «Հին աշխարհն» արդեն զզվեցրել է ինձ: Եթե շուտափույթ միջոցներ չգտնեմ իմ գոյությունը պահպանելու համար, ապա իմ ունեցած սննդամթերքը կվերջանա, ու ես կմեռնեմ... Ուրեմն միևնո՞ւյն չէ, թե որտեղ եմ մեռնելու, հի՞ն, թե՞ նոր քարանձավում: Պետք է լիովին վստահել Ղափլանին, ուր ուզում է, թող տանի: Հետո՝ ինչո՞ւ վախենամ, չէ՞ որ հրացան ունեմ և վտանգի դեպքում կարող եմ պաշտպանվել»:
Այս սրտապնդող մտքից հետո Վանիկը համարձակ հետևեց շանը: Գնամ էին խճի վրայով, բայց քիչ հետո խիճը վերջացավ ու սկսվեց մանր, ասես մաղած ավազը: Շուտով Վանիկի ոտքերն սկսեցին խրվել–կոշտացած տիղմի մեջ: Նա կռացավ, նայեց գետնին: Տիղմի չորացած, բայց բավականին հաստ շերտից եզրակացրեց, որ այստեղ հաճախ ջուր է կուտակվում: «Ուրեմն այս քարանձավը արտաքին աշխարհի հետ կապ ունի»,— մտածեց Վանիկն ու ասես մի նոր ուժ ստացավ դրանից: Մոտալուտ փրկության հույսը ամրապնդվեց նրա սրտում, և նա համարձակ շարունակեց իր ճանապարհը: Թեև նրա ճտքերը խրվում էին տիղմի մեջ, բայց նա գնում էր արտակարգ ոգևորությամբ և շարունակ նայում չորս կողմը: Դիմացը թանձր խավարն էր, որի մեջ լամպը հազիվ էր լույսի մի փոքրիկ շրջանակ գծում: Աջ ու ձախ կողմերի ժայռի մեջ զանազան տձև խոռոչներ ու ցցվածքներ կային:
Շուտով նա սկսեց զարմանալ, թե ինչու են այդքան երկար գնում: Կարծես թունելը վերջ չունի: Նա սկսեց համրել իր քայլերը: Մեկ, երկու, հինգ, երեսուն, հարյուր... Ոչ մի փոփոխություն: Նույն խավարն էր և լամպի նույն փոքրիկ լուսաշրջանը:
Վեց հարյուր հիսունմեկ քայլի վրա Ղափլանը կանգ առավ ու սկսեց հոտոտել գետինը: Վանիկի ոտքերի տակ այլևս տիղմ չկար, հատակը չոր էր: Այստեղ նա ձկան մնացորդներ ու կմախքներ նկատեց: Նրա ուրախությանը սահման չկար: Չէ՞ որ մինչ այդ սովամահության վտանգը անվերջ կախված էր նրա գլխին: Իսկ այժմ վերջապես նա ընկել էր մի այնպիսի վայր, ուր կենդանության հետք կար և իր ու իր շան համար կարելի էր ուտելիք հայթհայթել: Ուրախությունից նրա աչքերը թացացան:
Շուտով նրա ականջին մի տարօրինակ ձայն հասավ: Այդ ձայնը Ղափլանն ավելի շուտ էր լսել և գլուխը բարձրացրած՝ անհանգիստ ականջ էր դնում: Ձայնը նորից կրկնվեց ու Ղափլանը սկսեց հաչել՝ ոչ այն է մարդու, ոչ այն է գազանի վրա:

Վանիկի սիրտը նորից ահ ընկավ: Սակայն դա այն ահը չէր, որ զգացել էր առաջին անգամ, երբ ոտք էր դրել «նոր աշխարհը»: Ղափլանը երկյուղի ոչ մի նշան ցույց չէր տալիս: Ընդհակառակը, այնպիսի դիրքով էր կանգնել ու այնպես խիզախ էր հաչում, որ կարծես ահա կնետվի առաջ ու կհարձակվի այդ խորհրդավոր ձայն հանող արարածի վրա:
Վանիկը երկար ականջ դրեց այդ ձայնին, որ նման էր փակ շենքում խողովակից թափվող ջրի ձայնին, ու վճռեց անպայման պարզել, թե ինչ բան է դա: Նա լամպը կախեց վզից, հրացանը մարտի բռնեց ու համարձակ շարունակեց ճանապարհը: Մի տասը րոպե նրանք քայլեցին առանց որևէ նոր արկածի:
Հանկարծ Վանիկը հոսող ջրի ձայն լսեց ու կանգ առավ:
Մի՞թե իրոք ջրի ձայն է լսում, թե՞ դա սոսկ իր երևակայության պատրանքն է: Բայց ջրի ձայնն այնպես պարզ էր լսվում, որ չէր կարելի շփոթել ուրիշ բանի հետ: Ձյուն ուտելուց Վանիկն արդեն զզվել էր, ուստի այնպիսի ծարավ զգաց, որ այլևս ոչ մի ուժ չէր կարող նրան ետ պահել իր ճանապարհից: Մոտ մի հարյուր քայլ էլ գնալուց հետո նրա առջև բացվեց մի զարմանալի տեսարան:
Թունել-քարանձավի ձախ կողմի ժայռի միջից մի ջրառատ գետակ էր դուրս գալիս ու հանդարտ հոսելով մտնում աջ կողմի պատի մեջ եղած լայն խոռոչը: Ջրի ձայնը հենց այդ խոռոչից էր գալիս, որտեղ ըստ երևույթին գետակը թափվում էր ցած ու գնում ով գիտի, ինչ ուղղությամբ:
Ծարավն այնքան ուժեղ էր, որ Վանիկը լամպը ցած դնելով՝ փռվեց ավազի վրա և քիթ ու մռութը կոխեց ջրի մեջ: Երբ ծարավը հագեցրել էր, զգաց, որ այդ ջուրն իր համով միանգամայն նման է Կապուտանի ջրերին:
«Անպայման այս ջուրը գալիս է Կապուտանից,— նստելով ավազի վրա՝ եզրակացրեց նա:— Ձուկն էլ այնտեղից է»:
Նա վեր կացավ, լամպը վերցրեց ու մոտենալով գետակի ակունքին՝ երկար նայեց այն խոռոչին, որտեղից դուրս էր գալիս ջուրը: Դա մի խոր ու լայն անցք էր՝ ամբողջովին ջրով լցված: Մյուս խոռոչը, որտեղով ջուրը նորից մտնում էր գետնի տակ, ավելի ցածր էր ու նեղ, դրա պատճառով էր ջուրն այնտեղ աղմկում:
Մեծ էր Վանիկի ցնծությունը: Այստեղ՝ այս նոր աշխարհը հին աշխարհի պես լուռ ու մեռած չէր. այստեղ զուլալ ջուր կար ու ջրի մեջ՝ ձկներ: Այսինքն այստեղ, խմելիքից բացի, ուտելիք էլ կար թե իր, թե Ղափլանի համար: Վերջապես այստեղ օդն ավելի մաքուր էր ու գետինն ավելի չոր: Առանց երկար-բարակ մտածելու, Վանիկը վճռեց հին բնակարանից տեղափոխվել «նոր աշխարհ»: Բայց մինչև, տեղափոխվելը ցանկացավ պարզել, թե այս քարանձավը որքան է պիտանի ու ապահով իր կյանքի համար:
Այդ բանն սկսեց գետակից, որի խորությունը չափելու համար հետը վերցրած բարակ պարանի ծայրին մի քար կապեց ու կախեց ջրի մեջ: Նրա զարմանքը մեծ եղավ, երբ պարզվեց, որ գետակը մոտ երեք մետր խորություն ունի: Դա վշտացրեց նրան: Նշանակում է ինքը չի կարող անցնել գետակի մյուս կողմը, լողալ չգիտե: Իսկ առանց ջուրն անցնելու անհնարին էր պարզել, թե ինչ կա այնտեղ: Լողալ չիմացող մարդն ինչպե՞ս կարող է անցնել ջուրը, երբ նրա լայնությունը հինգ-վեց մետր է: Նա սկսեց քարեր նետել մյուս ափը: Դրանք զնգոցով կպչում էին քարեղեն զանգվածին, բայց Վանիկը չկարողացավ պարզել, քարերը զարնվում էին թունելը սահմանափակող պատի՞ն, թե հատակին:
Մյուս ափն անցնելու գործը թողնելով վաղվան՝ նա վճռեց իր ունեցվածքը տեղափոխել «նոր աշխարհը»: Ղափլանը չպչպացնելով խժռում էր ավազի մեջ ընկած ձկները:
«Ո՞վ է այդ ձկները հանել գետակից,— մտածեց Վանիկը ու նորից մի մութ կասկած սողոսկեց նրա սիրտը:— Ձուկն ինքն իրեն չի ընկել ցամաք, պարզ է: Ուրեմն այստեղ մի խորհրդավոր

կենդանի կա, որը գետակից ձուկ է բռնում, և որի հետ երեկ կռվում էր Ղափլանը: Ա՛խ, Ղափլա՛ն, Ղափլա՛ն, ինչո՞ւ դու լեզու չունես, որ պատմես քո տեսածը, լուծես այս տարօրինակ առեղծվածը»:

Մարտի իննին ու տասին Վանիկը մի քանի անգամ գնաց իր հին «բնակարանն» ու բոլոր իրերը տեղափոխեց: Նա իր համար նոր բնակատեղ ընտրեց գետակից ոչ հեռու, ժայռի տակ, որտեղ ավազը չոր էր ու ժայռը ցցվածքներ ուներ՝ «մառանի» պարկը կախելու համար: Բայց այս նոր բնակարանն էլ խավար էր հնի պես:

Մարտի տասնմեկին Վանիկը համեմատաբար կուշտ էր: Արդեն մի քանի օր էր, ինչ ունեցվածքից բաժին չէր տալիս Ղափլանին: Այդ երեկո քնեց կուշտ ու արթնացավ բարձր տրամադրությամբ: Մութ աշխարհին ընկնելուց հետո նա առաջին անգամ լվացվեց մեծագույն հաճույքով: Ուտելուց հետո սկսեց գետակի մյուս ափն անցնելու հնար մտածել: Ինքն էլ չգիտեր, թե ինչու համոզված էր, որ գետակի մյուս կողմին ոչ միայն կյանքի ավելի լավ պայմաններ կլինեն, այլև ելք կլինի դեպի լույս աշխարհ: Սակայն ինչքան ուղեղը տանջում էր, ջուրն անցնելու ոչ մի միջոց չէր գտնում: Ամբողջ հինգ օր նա անցկացրեց առանց որևէ նորության: Այդ օրերի ընթացքում միայն մի բան էր մտահոգում նրան, անցնել գետակը և հետազոտել մյուս ափը: Բայց գետակը այնքան խոր էր ու լայն, որ լամպի լույսը հազիվ էր հասնում մյուս ափի ավազին: Այդ օրերին նա իրեն սաստիկ նախատում էր, որ ոչ մի կերպ լողալ չի սովորել: Ինչ գործ ասես, որ նա չգիտեր: Սարում հոր հետ ղըռըխով ոչխար էր խուզում, այծ էր կթում, գիտեր եզ պայտել, վար անել, նույնիսկ սովորել էր ջահել արջառներ ամորձատել: Սակայն լողալ չէր իմանում: Իհարկե, ինքը լողալ էլ սովորած կլիներ, եթե մայրը սրտաճաք լինելու չափ չվախենար դրանից: Վանիկի փոքրիկ քույրը խեղդվել էր ջրում, այդ պատճառով էլ նրա մայրը աղաչել-պաղատել էր որդուն՝ երբեք չմտնել ջրի մեջ: Վանիկը կատարել է մոր խնդրանքը և մնացել առանց լողալ իմանալու: Գետ կամ լիճ տեսնելով միշտ հիշում էր մոր աղաչանքներն ու պապի ասածները՝ «Ջրի ու կրակի հետ չեն խաղա, որդիս»:

Հիմա նա ափսոսում էր, որ լսել էր մորը և լողալ չէր սովորել: Բայց դատարկ ափսոսանքով գործը գլուխ չես բերի: Պետք է որևէ հնար գտնել և անցնել գետակի մյուս ափը: Վանիկի ողջ միտքն աշխատում էր միայն այդ ուղղությամբ: Այդ օրն էլ նա պառկեց առանց որևէ արդյունքի: Նրա հաշվով լուսանում էր մարտի տասնմեկը: Մարտի տասի բաժին հացն արդեն չկար պարկի մեջ: Նոր էր աչքը կպցրել, երբ արթնացավ Ղափլանի կատաղի հաչոցից: Շան հաչոցի հետ լսվում էր նաև ջրի մեղմ ճողփյուն: Մեկը լողում էր գետակում: Շուտով լսվեց մի տարօրինակ կոկորդային ձայն: Կարծես խոզ էր խռնչում:

Վանիկն իսկույն վառեց լամպը և ջրի մեջ աղվեսի նմանվող մի շիկավուն կենդանի տեսավ: Տարօրինակ կենդանին իսկույն սուզվեց: Շունն ավելի բարկացած հաչեց: Վանիկի քունը փախավ, կարգին վախեցել էր ջրային գազանի երևալուց: Ի՞նչ գազան էր դա, որ նման էր աղվեսի, բայց խոզի պես խռնչում էր ու ձկան պես լողում: Այս հարցը ծանր քարի պես նստեց տղայի գլխում: Նա սկսեց մեկ առ մեկ մտաբերել, թե ինչ կենդանիներ են ապրում ջրի մեջ: Շուտով հիշեց, որ ձկներից, գորտերից ու ջրային թռչուններից բացի լեռնաշխարհի մեծ գետերում ու լճերում ապրում են նաև ջրշներ...

— Ըհը...— ուրախացավ նա:— Նշանակում է այդ շիկավուն, խռնչացող կենդանին ջրշուն է: Չէ՞ որ ուրիշ կենդանի չի ապրում մեր լճում:

Այդ բանը նա լավ գիտեր: Նա հիշեց, թե ինչպես մի անգամ իրենց հարևան որսկանը մի սպանված ջրշուն էր բերել գյուղ: Այդ նույն որսկանը պատմում էր, որ ջրշները երբեմն դուրս են գալիս լճից ու թափառում նրա ափերին: Վանիկը լավ գիտեր, որ ջրշան մորթին խիստ թանկ է, միսն էլ համեղ:

Այս ամենը հիշելուց հետո նրա մեջ ջրշանն սպանելու անզուսպ ցանկություն առաջացավ:

Բայց գազանը մի անգամ էլ կերևա՞, թե շնից ու լույսից վախենալով՝ այլևս չի հայտնվի այս կողմերում:
Այլևս քնելու ցանկություն չկար: Տեղը նստած՝ երկար ժամանակ նա չէր մոռանում ջրշանը: Երանի թե ջրշունը մի անգամ էլ երևա, ինքն անպայման կսպանի նրան: Միսը կտա Ղափլանին, իսկ մորթին կգցի կարպետի վրա՝ տեղը տաքացնելու համար:
Գետակում հաճույքով լվացվելուց հետո նա լամպը վառեց ու մոտեցավ ջրին, նորից սկսեց միջոց փնտրել մյուս ափն անցնելու համար: Կարմրախայտ ձկները լողում էին ուղղակի ջրի երեսին: Մեկը նույնիսկ նետվեց դեպի լամպի լույսը: Ջրի մեջ անթիվ, անհամար կարմրախայտեր կային: Բայց Վանիկը չէր կարող բռնել այդ խլվլտացող սատանաներին, այ, թեկուզ այն փոքրիկին, որ գլուխը ջրից դուրս էր հանել ու բերանը բացախուփ անելով՝ զարմացած նայում է լամպի լույսին: Ոչ մի կերպ չես կարող բռնել անիծվածին: Ոչ կարթ կա, ոչ ցանց, իսկ չարաճճիները գայթակղում են ուշաթափ անելու չափ: Լողում են հենց Վանիկի ոտքերի տակ, սուզվում ու նորից երևում: Ղափլանը լեզուն հանած դունչն է լիզում: Պարզ է, թարմ ձուկ տեսնելով՝ նրա բերանի ջրերը վազում են: Կարծես մեր երկու քարանձավաբնակներին կատաղեցնելու և խելքահան անելու համար էին ձկներն ավելի մեծաքանակ ու ավելի հաճախ երևում ջրի երեսին:
— Տեսնո՞ւմ ես, Ղափլա՛ն,— խոսեց Վանիկը,— լամպի լույսն է գժվեցնում այս ոսկեգույններին:
Նա բարկացած փչեց, հանգցրեց լամպը ու եկավ իր տեղը: «Ինչո՞ւ անտեղի նավթ փչացնեմ: Հերն անիծած, թող կորչեն բոլոր կարմրախայտերը»:
Մարտի տասներկուսին ջրշունը նորից երևաց: Վանիկը քնած չէր և խավարի մեջ նստած՝ տխուր մտածմունքների մեջ էր ընկել: Հենց որ ջրշան խռնչոցը լսվեց, Ղափլանը վեր կացավ: Սակայն Վանիկը բռնեց նրան ու հասկացրեց, որ տապ անի: Ջրշունը չմփչմփացնելով լողում էր: Երբեմն ինչ-որ բան էր շրխկոցով ընկնում ավազին: Կարծես ջրշունը քար էր նետում ափ: Շուտով նրա ձայնը մոտեցավ: Առանց լամպը վառելու (վախենում էր, որ լույսից ջրշունը խրտնի), Վանիկը վերցրեց հրացանը, և ուղղելով ջրից եկող ձայնի կողմը՝ կրակեց...
Ջուրը շատրվանի պես ցատկեց վեր, հետո լսվեց ջրշան շտապ հեռանալու ձայնը: Վանիկն իսկույն վառեց լամպը, բայց ջրշունը չկար: Գնդակը չէր կպել:
Թեև Վանիկը չէր կարողացել սպանել ջրշանը, բայց ջրի մեջ կատարած նրա կրակոցը շշմեցուցիչ արդյունք էր տվել: Ջրի երեսը պատված էր մեծ ու մանր ձկներով: Գետակի մեջ կրակած գնդակից կարմրախայտերը խլացել էին ու այժմ անզոր օրորվում էին դանդաղ հոսող ջրի երեսին: Վանիկը մեկնվեց ավազի վրա ու ձեռքերը պարզեց դեպի անշնչացած ձկները: Թեև դրանք շատ էին, բայց նրան հաջողվեց բռնել միայն չորս հատ: Մյուսները ջուրը տարավ ստորգետնյա խոռոչը:
Իր առաջին որսից սաստիկ ոգևորված՝ Վանիկն սկսեց թռչկոտել, նույնիսկ գլուխկոնծի տվեց փափուկ ավազի վրա: Ինչպե՜ս չուրախանա... ինքը չորս ձուկ ունի, այն էլ ի՜նչ ձկներ... չաղ-չաղ, թարմ կարմրախայտեր: Բացի այդ, նա գտավ այն միջոցը, որով կարելի էր ձուկ որսալ: Բավական է, որ մի փամփուշտ կրակի ջրի մեջ, ու նրա երեսն իսկույն կծածկվի խլացած ձկներով...
Բայց մենակ դա չէր. երբ Վանիկը իր բռնած ձկները տանում էր «տուն», ոտքի տակ, ավազի վրա ընկած նոր ձկներ տեսավ: Դրանք դեռ ողջ էին ու անզոր թպրտում էին՝ բերանները բացուխուփ անելով: Այդ բանը խիստ զարմացրեց տղային: «Մի՞թե այս ձկները ջրշունն է նետել ափ...»,— հարցրեց ինքն իրեն, նայեց շանը ու հիշեց Ղափլանի՝ հին «բնակարան» բերած ձուկը: Հանելուկը պարզվեց: Մեծերից լսել էր, որ ջրշունը ձուկը բռնում, նետում է ափ և միայն մի երկու օր հետո ջրից դուրս գալիս ու լափում: «Փտած ձուկը ջրշան սիրած կերակուրն է»,— ասում էին որսորդները:

Այժմ արդեն պարզ էր, թե որտեղից էր Ղափլանի բերած ձուկը և ի՞նչ էր ջրի միջից դուրս շպրտում ջրշունը: Վանիկը հինգ ձուկ գտավ ավազի մեջ: Այժմ նա ինը ձուկ ուներ: Եթե դրանցից մեկը եփի, մի ամբողջ օր կուշտ կմնա:
Բայց ինչպե՞ս եփի:
Ղափլանի քեֆին քեֆ չէր հասնի, նա ձուկը հում էլ է ուտում: Վանիկը ջոկեց ամենափոքր կարմրախայտն ու տվեց նրան: Ղափլանը նստեց ու իսկույն ձուկը խժռեց: Դա մի ծանր պահ էր Վանիկի համար: Նա իր կյանքում առաջին անգամ նախանձեց շանը: Երանի՜ թե ինքն էլ կարողանար ձուկը հում ուտել, այն ժամանակ կրակի կարիք չէր ունենա: Իսկ հիմա ահա կանգնել է, ոսկեգույն ձկները բռնել ձեռքում ու մնացել շվարած: Ինչպե՞ս եփի այդ անուշիկներին:
Ձուկը կարող է մաքրել, կտրտել, լցնել կաթսայիկը, բայց ինչո՞վ կրակ անի: Այս «նոր աշխարհը» ևս հարուստ է միայն քարով ու ավազով: Վանիկին համակած բուռն ուրախությունը փոխվեց դառն հուսահատության: Նա նույնիսկ ցանկացավ ջուրը նետել ձեռքում պահած ձկները, բայց ձեռքը չգնաց:
Երբ նա ձկները դնում էր մառանի քարերին, հիշեց, որ ինքը մի քանի գիրք ու երկու տետր ունի: Դա նրան նորից ուրախություն պատճառեց: Չէ՞ որ թուղթը հիանալի վառվում է: Վանիկը նետվեց դեպի իր «տեղաշորը», որի մոտ ընկած էին դասագրքերն ու մորաքրոջ աղջկա հաստափոր վեպը: Դե, իհարկե, դրանք ահագին վառելանյութ են: Համենայն դեպս դրանցով կարող է ձուկ եփել: Նա կաթսայիկը բաց արեց, մեղրից հոտ քաշեց: Հետո մի քանի կտոր լավաշ հանեց տոպրակից, փռեց մի սանդանման քարի վրա ու մեղրը թափեց հացի վրա: Ապա լավաշների ծայրերը հավաքեց, միացրեց իրար: Մեղրն այդպես չի փչանա, ծոր չի տա:
Կաթսայիկը մեծ չէր, նրա մեջ հազիվ կարելի էր երկու ձուկ տեղավորել: Համենայն դեպս վիատվելու ոչինչ չկա: Վանիկը կաթսայիկը մաքրեց, ձկներից երկուսի փորը պատռեց, լվաց ու մանր կտրատելով՝ տեղավորեց ամանի մեջ: Հետո մի քիչ ջուր լցրեց ռ պատի տակ մի փոքրիկ օջախ շինեց: Երբ օջախը պատրաստ էր, նա որոշեց առաջինը զոհել մորաքրոջ աղջկա հաստափոր գիրքը: Պոկեց գրքի կազմը, թղթերն առանձնացրեց ու մեկ–մեկ դնելով կաթսայիկի տակ՝ վառեց: Քարանձավը լուսավորվեց: Ղափլանն աչքերը ճպճպացրեց ու կրակից հեռացավ: Առաջին թերթերն իսկույն վառվեցին ու միայն նրանց սև մոխիրը մնաց կաթսայիկի տակ: Վանիկը վառեց երկրորդ թերթիկը, երրորդը... Նա աշխատում էր կրակը թեժ պահել, որ կաթսայիկը շիկանա ու ջուրը շուտ եռա: Աչքերը լայն բացած՝ նա նայում էր, թե գոլորշի չի՞ բարձրանում արդյոք: Սակայն ահագին թուղթ էր վառվել, բայց դեռևս գոլորշի չկար: Ահա վառվում է հիսուներեքերորդ թերթը: Անիծվա՜ծ թերթեր, ինչքա՜ն էլ արագ են վառվում, կարծես բենզինոտ լինեն... Գոնե մի քիչ ուշ հանգչեին: Հիսունվեցերորդ թերթը վառելիս կաթսայիկի բերանից գոլորշի դուրս եկավ:
— Ըհը՜, Ղափլա՜ն, հիմա ջուրը կեռա,— ուրախ գոչեց Վանիկն ու նրա բերանի ջրերը նորից վազեցին:
Բայց գրքից նոր թերթեր պոկելիս նրա սիրտը քամվում էր: Առանց այն էլ չնչին վառելիք ունի և երկու ձուկ եփելու համար ահագին թուղթ է վատնում: Վանիկն ուշ գլխի ընկավ, որ ջուրը շուտ եռացնելու համար պետք է ամանի բերանը փակել: Կաթսայիկի կափարիչը փակեց ու սպասեց... Համբերությունն սպառվում էր, շուտ-շուտ վերցնում էր կափարիչն ու ագահությամբ նայում ձկներին: Իննսունիններորդ թերթը վառելուց հետո ջուրը եռաց: Վանիկն ուրախությունից խենթացավ: Երանելի ժպիտը չէր հեռանում նրա դեմքից: Նա գիտեր, որ կարմրախայտը շուտ է եփվում և հենց որ ջուրը եռում է, ձկան աչքերը սպիտակում են: Նորից քսան թերթ վառեց: Հիմա պետք է ստուգել՝ ձկան աչքերը սպիտակե՞լ են, թե ոչ: Նա լամպը վառեց, մի ձեռքով բարձր պահեց ամանի վրա, մյուսով բռնեց ձկան պոչի կտորն ու ամանից

հանելով՝ գցեց ավազին... Ձուկն եփել էր: Վանիկի մեջ երգելու անզուսպ ցանկություն առաջացավ: Ինչո՞ւ չերգել: Չէ՞ որ ինքը մի ման լիքը եփած կարմրախայտ ունի և մորաքրոջ աղջկա գրքի կեսից ավելին դեռ մնում է: Մնում են նաև դասագրքերն ու երկու տետրակը: Նշանակում է դեռ մի քանի անգամ կարող է ձուկ եփել:

Նա վճռեց առաջին տաք կերակուրն ուտել պատշաճ հանդիսավորությամբ: Դրա համար մոր շալը փռեց կարպետի վրա, աղ դրած վարունգներից մեկը հանեց կապոցից, մի սխտոր կտրտեց և միայն մի ձեռքի չափ հաց վերցնելով՝ սկսեց իր ճաշը: Հում ձկներից մեկը նա տվել էր Ղափլանին: Կուշտ ու կուռ կերած շանը թազնել էր «սեղանի» մոտ և իր համար ննջում էր:

Ի՜նչ սքանչելի բան է եփած կարմրախայտը: Ուտվում է ոնց որ մեղրի հետ խառնած կարագ: Ո՛չ փուշ ունի, որ բերանդ ծակի, ո՛չ էլ ոսկոր է բկիդ դեմ ընկնում: Նրա համեղ պատառներն առանց հացի էլ կարելի է ուտել: Միայն ափսո՜ս, որ վարունգի աղը լիովին չի հագեցնում: Ա՜խ, եթե մի կտոր աղ լինե՜ր...

Թեև Վանիկը միայն մի ձուկ կերավ, բայց այնպես կշտացավ, որ այլևս ուտելու ախորժակ չմնաց: Եփած ձկան մյուս կտորները նա փաթաթեց լավաշի մեջ ու դրեց քարին՝ վաղվա համար: Այդ օրը նրա ամենակուշտ օրն էր: Մի լավ ջուր խմելուց հետո նա նորից սկսեց գետակի մյուս ափն անցնելու համար հնար որոնել: Կարող է պատահել, որ մյուս ափին վառելիք գտնվի կամ (երանի՜ թե այդպես լիներ) այնտեղ գուցե լույս աշխարհ դուրս գալու ելք կա:

Պետք է լամպը նորից վառել: Վանիկը թափ տվեց նավթի ամանը ու ցավով տեսավ, որ նրա միջի նավթն արդեն կիսվել է... Ի՜նչ ծանր բան կլինի, եթե նավթը վերջանա: Այն ժամանակ ինքն ի՞նչ պիտի անի խավարի մեջ: Չէ՞ որ գարունը դեռ հեռու է: Ուրեմն ինչ գնով էլ լինի, պետք է անցնել գետակը և ուսումնասիրել նրա մյուս ափը:

«Մեկն էլ չկա, որ անխելք գլուխս ծեծի,— ինքն իրեն նախատում էր Վանիկը:— Ամեն բան սովորեցի, բացի լողալուց: Մորիցս թաքուն կսովորեի ու վերջացավ: Եթե լողալ իմանայի, հիմա կարող էի ազատ անցնել մյուս ափը»:

Գլուխ յոթերորդ
ՆՈՐ ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ

Բայց ինչպե՞ս անցներ մյուս ափը:

Այս հարցի վրա Վանիկն ապարդյուն կորցրեց երեք օր: Նա արդեն հուսահատվել էր ու վճռեց ձեռք քաշել գետակն անցնելու մտքից, երբ մի անգամ նկատեց, որ դիմացի ափին քարի բազմաթիվ ցցվածքներ են երևում: Լամպի պատրույգը բարձրացրեց և մյուս ափին երկար նայելուց հետո համոզվեց, որ դրանք իսկապես ցցվածքներ են, ինչպիսիք լինում են մեծ խճուղիների եզերքներին: Նրա մեջ մի նոր միտք ծագեց: Կարելի է թոկը օղակ անել և նետել մյուս ափը՝ օղակ գցել այդ ցցվածքներից մեկնումեկին: Իհարկե, դա հնարավոր բան է: Այդ ձևով կարելի է ջրի վրայով ճոպանուղի գցել ու նրանից կախվելով՝ անցնել մյուս ափը:

Բայց դրա համար երկար պարան է հարկավոր: Իր ունեցածը խուրջինի պարանն էր և մոթալ կապելու թոկը, որ եթե երկտակես, հինգ մետրից ավելի չի լինի: Երկուսը միասին հազիվ վեց-յոթ մետր լինեն, իսկ ճոպանուղու համար առնվազն տասը մետր թոկ է պետք:

Եվ նորից տանջող «ինչ անելը» մեխվեց տղայի գլխում: Ամբողջ օրն անցկացրեց ապարդյուն որոնումների մեջ: Քնեց ընկճված ու տխուր: Արթնացավ սովորականից շուտ: Լամպը վառեց, նայեց շանը: Սա գլուխը դրել էր առջևի թաթերին ու, մեկ-մեկ աչքը կիսաբաց անելով և տիրոջը նայելով, ննջում էր:

«Անհոգ ու անդարդ արարա՜ծ»,— շան մասին մտածեց Վանիկը և նույնիսկ մտքում բարկացավ

նրա վրա: Ահա ինքը տանջվում է՝ գետակն անցնելու մի հնար որոնելուց, իսկ նա անփույթ ննջում է... Ասես գյուղում լինի, իրենց տանը:
Վանիկը վեր կացավ, մոր շալն ու խուրջինը վերցրեց ավազի վրայից և թափ տալով՝ գցեց ցցաքարերի վրա: «Իսկ եթե խուրջինի թելերը քանդեմ, նրանից չի՞ կարելի պարան հյուսել»— հանկարծ այս միտքը ծագեց նրա գլխում, ու նրա հուսահատությունը նորից տեղի տվեց ոգևորության: Նա վերցրեց խուրջինի կտորներից մեկը ու նստելով լամպի մոտ՝ սկսեց ծայրը քանդել: Թելերը բավականին հաստ ու ամուր էին: Ահա նրանք հեշտությամբ քանդվում են, խճճվում ավազի վրա:
Վանիկն աշխատում էր արագ, առանց ձանձրանալու: Գլուխը կախ գցելու հետևանքով՝ վիզը մի թեթև ցավում էր: Բայց դա ի՞նչ ցավ է որ, կտանի, միայն թե կարողանա անցնել գետակի մյուս կողմը...
Կարպետի հինգ կտորից երկուսը քանդեց ու սկսեց պարան հյուսել: Այդ բանը այնքան էլ դժվար չէր: Գյուղում նա պարսատիկներ էր գործում իր և ընկերների համար: Բացի այդ, ամեն տարի ձմռանն օգնում էր մորը՝ հարդ կապելու թոկ գործելիս: Եղած թելերը պետք է ոլորել, երեք հաստ ճյուղ անել, հետո այդ ճյուղերը հյուսել այնպես, ինչպես մայրերն իրենց փոքրիկ աղջիկների մազերն են հյուսում: Այդ ձևով ուզածդ պարանը կարող ես գործել:
Այդ գործի համար թեև նա մի ամբողջ օր կորցրեց, բայց մոտ հինգ մետր երկարությամբ մի ամուր պարան հյուսեց: Ապա դրան միացրեց խուրջինի ու մոթալ կապելու թոկը և ստացվեց տասը-տասնմեկ մետրանոց մի երկար պարան: Դա արդեն բավական էր ճոպանուղու համար:
Ուշադիր դիտելով մյուս ափի ցցաքարերը՝ նա վճռեց պարանի ծայրը օղակ դարձնել և նետելով մյուս ափ՝ աշխատել այդ օղակը գցել ցցվածքներից մեկնումեկին: Հետո թոկի մյուս ծայրը կկապի «մառանի» մոտ եղած ժայռացցին ու պարանից կախվելով՝ կանցնի մյուս ափը:
— Ի՞նչ ես ասում, Ղափլա՜ն, այս բանը գլուխ կգա՞, թե ոչ,— հարցրեց նա ու շուռ եկավ դեպի շունը:
Սակայն, սովորականի պես, Ղափլանն իր կողքին չէր: Նա մի հինգ քայլ հեռացել էր ու գետափին կանգնած, կարճ պոչը տնկած և մեջքը տարօրինակ ուռցրած՝ ուշադիր նայում էր ջրին: Դա զարմացրեց Վանիկին, և նա հիշեց վաղուց չերևացող ջրշանը: Անշուշտ Ղափլանը ջրի մեջ նկատել է նրան: Վանիկն իսկույն վերցրեց հրացանը, մոտեցավ Ղափլանին ու ինքն էլ սկսեց ուշադիր նայել ջրին: Շուտով նկատեց, որ ափից մի քիչ հեռու ջուրը ալեկոծվում է: «Ջրշունն է»,— շունչը պահած՝ եզրակացրեց Վանիկը և հրացանն առաջ պարզեց: Շունն ու տղան մի քանի րոպե մնացին քարացած, բայց ահա վերջապես ջրի միջից գազանը գլուխը ցցեց ու լողաց դեպի ափ... Նույն վայրկյանին հրացանը որոտաց...
Լամպը հանգավ: Խավարի մեջ լսվում էր ջրշան խռխռոցը ու Ղափլանի ուրախ ձայնը: Վանիկն իսկույն լամպը վառեց և հրացանը նորից ուղղեց դեպի գետակը: Բայց այլևս կրակելու հարկ չկար: Ափին կանգնած Ղափլանը բռնել էր ջրշան երկար ականջից ու քարշ տալով՝ ջրից հանում էր:
Ջրշունը վնգստում էր հոգեվարքի մեջ: Վանիկը օգնեց շանը, և երկուսով որսը հանեցին ջրից: Հենց որ ջրշունը գցեցին ավազի վրա, սա մի քանի անգամ ցնցվեց ու շունչը փչեց: Գնդակը կպել էր նրա գլխին, ձախ ականջից մի քիչ ներքև:
Իր տեսքով ու մեծությամբ ջրշունը մի երկայնամարմին արարած էր, բավականին նման դաշտային աղվեսի: Աղվեսի պես սրածայր ականջներ ու երկար դունչ ուներ: Բայց նրա ոտքերը կարճ էին, իսկ մատները պատած էին լողամորթով: Ջրշան մուգ գորշ մարմինը ամբողջովին ծածկված էր կարճ ու խիտ մազերով: Պոչը շատ փոքր էր, հազիվ երեք-չորս սանտիմետր:
Վանիկը կռացավ որսի վրա, շուռումուռ տվեց ու զարմացավ նրա չաղությունից:

— Տեսնո՞ւմ ես, Ղափլան ջան, քանի գնում, այնքան նոր միջոցներ ենք գտնում մեր ապրուստի համար: Այս ջրշան միսը էլի մի տասը-տասնհինգ կիլո կլինի ու մի երկու շաբաթ ես ու դու կուտենք:
Նա դանակով սկսեց որսը քերթել: Շուտով պարզվեց, որ ինքը վատ մսագործ է: Մեծ դժվարությամբ էր կարողանում ճարպոտ ջրշան մորթին հանել: Այդ գործի համար նա կորցրեց մի ամբողջ օր: Նրա շորերը, դեմքն ու ձեռքերն արյունոտվեցին, անսովոր աշխատանքից քրտնեց: Մեկը չկար, որ օգներ իրեն, բռներ քերթված մորթու ծայրը, ետ քաշեր:
Մինչև քունը տանելը նա ամբողջովին քերթեց ջրշունը: Հոգնել էր, ուստի որոշեց մի բան ուտել ու իսկույն քնել: Ջրշան ետևի ոտքի փափուկ տեղից մի կտոր կտրեց ու տվեց Ղափլանին: Մի փոքրիկ կտոր էլ իր համար կտրեց. «Չփորձե՞մ մի քիչ հում միս կրծել, մինչև նոր կրակ անելը... Ի՞նչ կլինի: Հապա փորձեմ»: Նա տաք մսի կտորը դրեց բերանը: Մսից ձկան համ էր գալիս, բացի այդ թթվաշ էր՝ նապաստակի մսի պես: Վանիկը միսը երկար ծամեց, բայց սիրտ չարեց կուլ տալ ու բերանի պարունակությունը մի կողմ թքեց:
Քնից արթնացավ սովորականից շուտ: Գլխում ծանրություն էր զգում: Դրանից մի տարօրինակ ահ մտավ սիրտը: Հանկարծ չհիվանդանա ու այլևս վեր չկենա տեղից... Մշտական խավարի մեջ մնալով մարդու մարմինը կարող է նույնիսկ որդնոտել ու փտել: Այս կասկածը նրան ստիպեց շտապեցնել գետակն անցնելու գործը: Բայց հեշտ է որոշել, հապա փորձիր մտնել ջուրը, երբ լողալ չգիտես: Վանիկը հիշեց հանգուցյալ պապի խրատները. «Կարկուտի տակ ընկածը անձրևից չի վախենա, որդիս: Մարդ արարածը ամեն ինչ կարող է անել»:
Ի՞նչ անել, թոկը նետելու համար վառե՞լ լամպը, թե՞ այդ օրը անցկացնել մթության մեջ: Բայց ավելի լավ է նավթը խնայել՝ սև օրվա համար: Կարելի է մորաքրոջ աղջկա գրքից մի երկու թերթ պոկել, մի հատիկ լուցկի զոհել ու մի քիչ լույս ստեղծել, որպեսզի որոշի այն ուղղությունը, ուր պիտի նետի պարանը: Իսկ հետո մթության մեջ էլ կարելի է օղակը նետել, սպասել, թե երբ է նա ընկնում ցցաքարերից մեկնումեկի վիզը:
Երբ Վանիկը գրքից պոկած թերթերը վառեց ու կանգնեց ջրի եզերքին, նկատեց, որ մյուս ափի ցցաքարերն ավելի շատ են, քան կարծել էր առաջ: Դրանցից մի քանիսը երկու-երեք մետր բարձրություն ունեին: Դա մի քիչ հուսադրեց նրան: Երկար պարանը փաթաթեց, օղակը բռնեց աջ ձեռքով ու մի երկու անգամ թափահարելուց հետո, նետեց...
Սրտի թրթռոցով նա քաշեց պարանը: Բայց ավաղ, պարանի օղակը չէր ընկել ցցաքարին: «Վնաս չունի,— ինքն իրեն հուսադրեց Վանիկը:— Ո՞ր գործն է հեշտությամբ գլուխ գալիս, որ սա գա: Նորից կփորձեմ»:
Պարանն ընկել էր ջուրն ու թրջվելով՝ ծանրացել: Վանիկը հավաքեց նրա ծայրերն ու նորից նետեց... «Արդյոք բարձր ցցաքարի ուղղությամբ եմ նետո՞ւմ»,— մտածեց նա և, մորաքրոջ աղջկա գրքից մի թերթ պոկելով՝ վառեց: Այո, թոկը ճիշտ է նետել, սակայն օղակը այս անգամ էլ չի ընկել ցցաքարին: Պետք է երրորդ անգամ նետել: Այս անգամ նա սկսեց խոսել պարանի հետ:
— Ա՛խ, պարա՛ն ջան, մի՞թե դու չես տեսնում, որ ես տառապում եմ այս խավար աշխարհում: Հարկավոր է, որ ես անպայման անցնեմ մյուս ափը: Ի՞նչ կլինի, սիրելի՛ս, որ մի քիչ լայն բացվես, մի քիչ նեղության քաշես ու ընկնես ցցաքարերից մեկնումեկի վրա:
Օղակը վրիպում էր... Ամեն անգամ ջուրն ընկած պարանը բռնելիս Վանիկի մատները մրսում էին, և նա ստիպված էր լինում ձեռքերը շուտ-շուտ դնել ծոցը:
Արդեն քսաներեք անգամ նետել էր պարանը: Ձեռքերը հոգնեցին: Թեկուզ ջարդվեն, միևնույն է, պետք է օղակը նետել:
Վանիկը նույնիսկ սկսեց զարմանալ իր կամքի վրա: Ինքը երբեք այդպիսի համառություն չի

ունեցել: Դպրոցում, եթե թվաբանական խնդիրը հենց սկզբից չէր լուծվում, ապա նա գրիչն ու տետրակը դեն էր գցում ու այլևս գլուխ չէր տրաքացնում անիծված խնդրի վրա: Բայց հիմա պայմաններն ուրիշ էին: Հիմա նա հասկանում էր, որ խնդիրը վերաբերվում է իր գոյությանը և չէր կարող ձեռք քաշել սկսած գործից:
Ահա արդեն վաթսուներեքերորդ անգամն է, որ պարանը նետում է: Արդեն սկսել է ձանձրանալ, նույնիսկ քրտնել: Սակայն հոգնածությունը քաջաբար վանում է իրենից, ատամները սեղմում ու ձեռքերը մեքենայորեն շարժելով՝ պարանը նորից նետում...
Զարմանալի էր նաև այն, որ նա չէր բարկանում որևէ մեկի վրա: Տանը, երբ մի գործ էր անում ու արածը վատ էր ստացվում, ապա դրանում անպայման որևէ մեղավոր էր գտնում և իր ամբողջ բարկությունը թափում նրա գլխին: Բարկանում էր մոր վրա, եթե չէր իմանում, թե որտեղ է ինքը դրել իր դասագիրքը: Բարկանում էր կացնի դեմ, երբ նրանով դժվարանում էր փայտ ջարդել: Բարկանում էր իրենց էշի վրա, երբ սա սաստիկ համառում էր խոտատեղ տանող կածանի նեղ, երերուն կամուրջն անցնելիս: Տանն ամեն ինչի վրա բարկանում էր: Իսկ հիմա ոչ միայն չէր բարկանում, այլ համբերությամբ խոսում էր պարանի հետ, խնդրում, – աղաչում նրան, որ վերջապես ընկնի ցցաքարին:
– Ա՜խ, պարա՜ն ջան, դե վերջապես ընկիր ցցաքարին, էլի՜...–ասում էր նա: Կարծես պարանը մարդ էր, կհասկանար իրեն:
Այլևս ձեռքերը շարժելու ուժ չկար: Քաղցն էլ մի կողմից էր տանջում: Հուսահատությունից Վանիկը տնքաց, պարանը վայր գցեց և մոտենալով կարպետին՝ թուլացած ընկավ նրա վրա: Օրվա բաժին ուտելիքը ոչնչացրեց մի երկու վայրկյանում: Մի կտոր ջրշան միս տվեց Ղափլանին և քնեց ամբողջ օրը քար ջարդած մարդու պես: Նրա ձեռքերը ցավում էին, մեջքը երկտակվում, բայց և այնպես երկար քնեց: Երբ արթնացավ, զգաց, որ գլուխը ցավում է:
«Ի՞նչ անեմ, ձուկ որսա՞մ, թե ջրշան միսը եփեմ,– հարցրեց ինքն իրեն:– Գուցե ջրշան միսը դժվար է եփվում, այդ դեպքում ես անտեղի վառելիք կփչացնեմ»: Բայց վերջապես պետք է փորձել: Նա կաթսայիկը դրեց օջախին, նրա մեջ մսի մանր կտորներ լցրեց, մի քիչ էլ ջուր ածեց վրան, վառեց գրքից պոկած թերթերն ու սպասեց... Որտեղի՞ց նա կարող էր իմանալ, որ ջրշան միսն էլ ձկան պես շուտ է եփվում: Ոչ մի անգամ չէր փորձել: Երբ կաթսայիկի ջուրն սկսեց եռալ, նա սոխի մի կտոր մանրեց ու լցրեց մսի վրա: Չկարողացավ երկար համբերել, դանակի ծայրով մի կտոր միս հանեց եռացող ջրից ու գցեց բերանը: Լեզվի ծայրը վառելով, նա միսը բերանում շուռումուռ տվեց ու սկսեց ծամել: Ա՜յ քեզ հրաշք... Միսն արդեն եփվել էր և նրանից ճրագուի ու սոխի համ էր գալիս:
Վանիկը կաթսան իսկույն վերցրեց օջախի վրայից, դրեց մի կողմ ու բաց արեց այն տոպրակը, որտեղ պահում էր վերջին երկու վարունգը: Դրանք թեև սմքել էին, սակայն նրանց մեջ դեռ աղաջուր կար: Վանիկը ատամով ծակեց դրանցից մեկի ծայրն ու աղաջուրը ծծելով՝ մի քանի կտոր միս գցեց բերանը:
Կշտացավ ինչպես վարկն է: Ղափլանն էլ էր կշտացել և հիմա քնել էր «մառանի» մոտ պառկած: Վանիկի քունն էլ էր տանում: Պետք է քնել՝ առավոտը պարանի հետ նորից տանջվելու համար:
Մարտի քսանը, քսանմեկն ու քսաներեքը ևս անցան տառապանքով:
Մինչև ուժասպառ լինելը պարանը նետեց, բայց դարձյալ անօգուտ: Մի կտոր լավաշի հետ կերավ ջրշան մսի մյուս մասը, որ երկու օր առաջ էր եփել: Շանը կերակրեց ու ջարդված մարմնով ընկավ կարպետի վրա:
Արդեն մարտի քսանչորսն էր: Ամբողջ օրը Վանիկը չհեռացավ ջրափից ու երեք հարյուր քսանհինգ անգամ պարանը նետեց: Նետում էր՝ առանց հույսը վարելու: Հետո հաց կերավ, մի ընկույզ ջարդեց, կճպեց ու մեծ հաճույքով խժռեց յուղալի միջուկը: Թեև քնելու ժամանակն էր,

բայց որոշեց այդ օրը ուշ պառկել: Չէ՞ որ դեռ ուժ ունի, առնվազն հարյուր անգամ էլ կարող է նետել հույսի պարանը: Եվ նա ուժերը հավաքեց ու պարանը նետեց... Նետեց, բայց չշտապեց ետ քաշել: Ինչո՞ւ շուտ հուսախաբվել, թող մի երկու րոպե, երկու վայրկյան էլ հույսով մնա: Նա նստեց ավազին, շփեց երկար ժամանակ խավարի մեջ մնալուց ցավացող աչքե՛րն ու վերջապես առանց որևէ հույսի պարանը քաշեց...

Մի երկու մետր քաշելուց հետո պարանը ձգվեց ու այլևս մոտ չեկավ: Վանիկը ծառս եղավ տեղում: Մի՞թե օղակն արդեն ընկել է ցցաքարին: Մեծ զգուշությամբ նա պարանը ձգեց: Այո, օղակը ընկել էր ցցաքարի գլխին:

— Ուռա՛...— գոռաց Վանիկն ու անզուսպ քրքջաց:

Ղափլանը վարակվեց նրա ուրախությունից ու իր հաչոցով զնգացրեց մթին քարանձավը...

Այժմ արդեն լամպը պետք է վառել: Երբ գետակի ջրերը լուսավորվել էին, Վանիկը նայեց մյուս ափին: Պարանի օղակն ընկել էր բարձր ցցաքարերից մեկին: Ամենադժվարին խնդիրը լուծված էր: Այժմ պետք է դիմել հաջորդ քայլին:

* * *

Իսկ հաջորդ քայլը դժվար չէր: Պետք է պարանի մյուս ծայրը կապել «մառանի» մոտ եղած ժայռի ցցվածքին, ու այդպիսով ճոպանուղին պատրաստ կլինի: Վանիկը քարեր դարսեց ժայռի տակ, բարձրացավ դրանց վրա, ձեռքը հասցրեց մի կեռ ցցվածքի ու պարանն ամուր կապեց նրանից: Ճոպանուղին պատրաստ էր: Վանիկը կախվեց նրանից, ճոճվեց ու համոզվեց, որ թոկն ամուր է և կարող է պահել ոչ միայն իր, այլև իր նման մի երկու հոգու ծանրություն ևս:

Նա վճռեց անհապաղ սկսել իր հեռավոր ճանապարհորդությունը: Դրա համար հարկավոր է վերցնել հրացանը, լամպը, մի երկու բաժին հաց և ապա կախվելով ճոպանուղուց՝ անցնել գետակի մյուս ափը: Նա հրացանը գցեց մեջքին, հացի բրդուճները խոթեց գրպանը, մի տուփ լուցկի վերցրեց և լամպը վառելով՝ կախեց վզից: Թեև լամպից ելնող թույլ ծուխը անախորժության էր պատճառում նրան, բայց լամպն ուրիշ կերպ չէր կարող տանել: Երկու ձեռքով պիտի կախվեր ճոպանուղուց ու շարժվեր առաջ...

Արդեն պատրաստ էր ճամփա ընկնելու:

— Դե՛, Ղափլան ջան,— դիմեց նա շանը:— Սկսում ենք մեր նոր ճանապարհորդությունը: Պետք է խիզախ ու անվհատ լինել, հասկանո՞ւմ ես: Հենց որ ես հասնեմ գետակի մյուս ափը, դու էլ իսկույն մտիր ջուրն ու լողալով եկ: Ճիշտ է, ջուրը հիմա բավականին սառը կլինի, բայց ի՞նչ արած, հո ինձ մենակ չե՞ս թողնելու այնտեղ: Դե, ես գնացի...

Նա երկու ձեռքով բռնեց հորիզոնական կապած պարանը, կախվեց, մի քանի անգամ մարմինը թափահարեց՝ նորից ստուգելու համար նրա ամրությունը, և ձեռքերը փոխելով՝ առաջ շարժվեց...

Պարանը հետզհետե պրկվում էր: Քանի դեռ ոտքերը հասնում էին գետնին, Վանիկը գնում էր համարձակ, բայց երբ զգաց, որ արդեն կախվել է ջրի վրա՝ ահը նորից գլուխ բարձրացրեց: Բայց ինչ էլ լինի, այլևս ետ չի դառնալու: Աշխատում էր չնայել ներքև, նույնիսկ մոռանալ, չմտածել, որ ինքը կախված է ջրի վրա: Մի քիչ էլ առաջ գնաց, և զգաց, որ ոտքերի թաթերը հասել են ջրի վրա: Ծնկներն արագ ծալեց՝ կոշիկները չթրջելու համար: Բայց և այնպես, նրա ոտքերն արդեն ընկել էին ջրի մեջ, ծանրացել և մրսում էին: Ինչքան էլ ոտքերը վեր էր քաշում, բարձրացնում, այնուամենայնիվ, ջրից չէր կարողանում հանել: Վերջապես նա զգաց, որ ոտքերը դիպչում են գետնին: Մի երկու անգամ էլ ձեռքերը փոխեց և համոզվելով, որ իսկապես իր տակը մյուս ափն է, գետինն է, ուրախ կանգնեց նրա վրա: Ղափլանն արդեն իր մոտ էր ու թրջված մարմինը թափահարելով՝ ջրի ցայտեր էր շաղ տալիս չորս կողմ: Շան մազերը ցցվել էին վատ շինած խոզանակի պես, փորն այնպես էր կպել մեջքին, որ կարելի էր մեկ-մեկ համրել

կողաճաղերը:
— Մրսո՞ւմ ես, Ղափլա՜ն,— հարցրեց Վանիկը՝ զգալով, որ ինքն էլ է մրսում:— Բան չկա,— ոչ այնքան Ղափլանին, որքան իրեն սիրտ տալու համար՝ շարունակեց նա:— Կմեծանաս՝ կմոռանաս: Դու քեզ մի լավ թափահարիր:
Վանիկը նստեց ավազի վրա, կոշիկները հանեց ու քամեց միջի ջուրը: Հետո գուլպաները մզեց և դրեց գրպանը: Կոշիկները հագավ բոբիկ ոտքերին, ապա հրացանը իջեցրեց ուսից և համոզվելով, որ նրա մեջ փամփուշտ կա, զգուշությամբ գնաց ավազի վրայով:
Ձախափնյա քարանձավը նախկինի շարունակությունն էր: Սակայն սա տեղ-տեղ լայնանում էր, իսկ տեղ-տեղ այնքան նեղանում, որ Վանիկը ձեռքերը տարածում էր ու բռնում նրա երկու պատերը:
Այս քարանձավում ավազ չկար, գետինը պինդ էր ու հաճախ մեծ ու մանր քարեր էին հանդիպում: Շուտով Վանիկը նկատեց, որ քարանձավի հատակն աստիճանաբար բարձրանում է: Երբեմն առաստաղը շատ էր ցածրանում, երբեմն էլ այնքան բարձրանում, որ լամպի լույսը չէր հասնում նրան: Վանիկը գետակի ափից սկսած համրել էր իր քայլերը:
Արդեն հարյուր հիսուն քայլ էր արել, բայց թունել-քարանձավում դեռ ոչ մի նորություն չէր տեսնում: Այնուամենայնիվ, պետք է առաջ գնալ: Վեց հարյուր քայլը անելիս նրան թվաց, թե խավարը նոսրանում է: Մտքում ծիծաղեց իր միամտության վրա ու շարունակեց ճանապարհը: Բայց նույն զգացումն ունեցավ ինը հարյուր քայլը գցելիս ևս... Նա իջեցրեց լամպի պատրույգը, սակայն խավարն առաջվա պես թանձր էր ու անթափանցելի:
Արդեն հազարերորդ քայլն էր արել: Թեև ոչ մի նորություն չկար, բայց Վանիկին համառորեն թվում էր, թե խավարը նոսրանում է, և ինքը զգում է դրսի աշխարհի հոտը:
Հազար յոթանասուներեք քայլն անելիս հանկարծ նրա աչքին լույսի մի փոքրիկ շերտ երևաց, ու նա կանգ առավ... Սիրտն սկսեց տրոփել: Բայց մի՞թե իրոք դիմացը լույսի շերտ է: Ոչ, իհարկե, լույսի հետք անգամ չկա: Իրեն է այդպես թվամ: Նա ձեռքը թափ տվեց ու շարունակեց ճանապարհը: Սակայն մի հարյուր քայլ ևս գնալուց հետո ստիպված եղավ նորից կանգ առնել: Դիմացը ինչ-որ կաթնավուն մշուշ էր երևում: Մի՞թե լույս է դա: Այժմ Վանիկի սիրտն սկսեց այնպես բաբախել, որ թվաց, թե հիմա դուրս կթռչի իր կրծքից:
Եղավ մի պահ, որ կարծեց, թե կորցրել է աչքերի բնական տեսողությունը և խավարն իրեն կաթնավուն է երևում: Բայց երբ աչքերը փակեց, կաթնավուն մշուշը կորավ և խավարն ավելի խտացավ: Այժմ արդեն չէր կասկածում, որ իրոք իր դիմացը մի փոքրիկ կաթնավուն մշուշ է երևում... Այդ բանից ոգևորվելով և մի փոքր էլ վախենալով՝ Վանիկը կորցրեց քայլերի հաշիվը ու սկսեց գնալ արագ, հաճախ ոտքերը քարի կպցնելով: Քիչ հետո նա սկսեց վազել: Եվ քանի առաջ էր գնում, դիմացի կաթնավուն շերտն այնքան ավելի էր մեծանում ու մոտենում:
Նա վազում էր ինքնամոռացության մեջ, ինչպես գառն է վազում լեռնալանջով իջնող իր մորն ընդառաջ: Սայթաքում էր, ոտքերը դիպչում էին քարերին, մի անգամ նույնիսկ վայր ընկավ, սակայն վեր կացավ ու շարունակեց վազել: Շուտով նրա հևոցը բռնեց: Հոգնել էր: Ո՞վ գիտե, գուցե վազել է մի ամբողջ կիլոմետր, գուցե ավելի: Բայց ինչո՞ւ չի հասնում կաթնավուն մշուշին: Ինչո՞ւ: Եթե հանկարծ պարզվի, որ դա լույս չէ, այլ իր բորբոքված երևակայության պատրանքը, ապա ինքն անպայման կխելագարվի, սրտաճաք կլինի ու անշնչացած կտարածվի գետնին:
Քանի գնում, քարերն այնքան ավելանում էին: Այժմ Վանիկը դժվարությամբ էր փոխում ոտքերը, իսկ Ղափլանը գնում էր գրեթե քարերի վրայով: Նա էլ էր հևում: Նշանակում է երկար տարածություն են վազել: Հանկարծ Վանիկն այնպես վայր ընկավ, որ լամպը հանգավ ու նավթը թափվեց: Վեր կենալով՝ նա աղոտ կերպով նկատեց իր ոտքերի տակ ընկած քարերը: Նկատեց առանց լամպի լույսի օգնության... Եվ անսպասելի ուրախությունից քիչ մնաց

խելագարվի:
— Լո՛ւյս, լո՛ւյս,— խեղդված ձայնով գոչեց նա:— Ղափլան, խավարից դո՛ւրս ենք եկել... Հրե՜ն լույսը, լո՛ւյսը... Ուռա՛...
Եվ քար ու փոսի չնայելով՝ վազեց ամբողջ ուժով...
Լույսը գալիս էր նրան ընդառաջ:

Գլուխ ութերորդ

ՀՈՒՅՍ ԵՎ ՀՈՒՍԱԽԱԲՈՒԹՅՈՒՆ

Վանիկը խելակորույս վազում էր դեպի լույսը, և քանի գնում, շրջապատի քարերն այնքան ավելի պարզ ու հստակ էին երևում: Անասելի ուրախությունից թուլացած՝ նա նստեց մի քարի, աչքերը փակեց ու քրքջաց: Չէ՞ որ արդեն դուրս է եկել ստորերկրյա որջից և ահա աչքերը կբանա ու կտեսնի երկինքը, սարերը, ձորերը, կտեսնի լույս աշխարհը... Բայց երբ աչքերը բաց արեց ու նայեց շուրջը, ծիծաղը թռավ երեսից և տարակուսանքով վեր կացավ... Հուսախաբությունը մեծ էր:
Ինքն ամենևին էլ դուրս չէր եկել գետնի տակից, այլ գտնվում էր մի նոր ու վիթխարի քարե արկղի մեջ, որտեղ վերջանում էր թունել-քարանձավը: Նրա չորս կողմը քարանձավի բարձր ու լերկ պատերն էին, իսկ գլխավերևը՝ ծանր առաստաղը, որի ձախ կողմին մի բավականին երկար ու նեղ անցք կար միայն: Դրսի լույսը թափանցում էր հենց այդ անցքի միջով: Անցքն ահագին բարձր էր ու իր ձևով նմանվում էր գյուղական հին տների երդիկներին: Բայց եթե գյուղական հին տների երդիկները գտնվում են առաստաղի կենտրոնում, ապա այս քարանձավի անցքը առաստաղի եզրին էր, առաստաղի ու ժայռապատի անկյունում: Նրա միջով երևում էր երկնքի մի պատառը և այնքան լույս էր թափանցում քարանձավը, որ այլևս լամպ վառելու հարկ չկար:
Բերանը բաց արած՝ Վանիկը այնպիսի ագահությամբ էր նայում լույսի այդ փոքրիկ աղբյուրին, որ կարծես իր կյանքում առաջին անգամ էր նման մի հրաշք տեսնում: Շուտով նա զգաց, որ աչքերը ջրակալվում են, կկոցվում իրենք իրենց: Երկար ժամանակ խավարի մեջ մնալով՝ աչքերը լույսին խորթացել էին: Վերևի անցքից երևացող երկնքի պատառը պարզ էր ու զարմանալի կապույտ: Դրանից Վանիկը եզրակացրեց, որ օրը նոր է բացվել...
— Հա՛ֆ, հա՛ֆ,— հանկարծ կամաց, ասես ինչ-որ բանից զգուշանալով՝ հաչեց Ղափլանը:
Վանիկը, որ մոռացել էր շան գոյությունը, զարմացած նայեց նրան: Ղափլանը պպզել էր քարերի արանքում, դունչը ցցել դեպի անցքը և ուրախ շարժում էր կարճ պոչը: Երևում էր, որ լույսը նրան էլ է սաստիկ զարմացրել:
Հետզհետե երկնքի կապույտը գունատվեց ու դարձավ կաթնավուն: Արևը բարձրանում էր դեպի երկնակամարը: Ահա վերջապես անցքի վերևի եզերքը ոսկեզօծվեց նրա շողերից: Երկնքի վրայով ճերմակ ամպի մի քուլա անցավ... Վանիկի աչքերը լցվեցին արցունքով: Ա՜խ, ի՜նչ թանկագին բաներ են արևը, օդը, լույսը, ամպի փոքրիկ ծվենը: Ինչքա՜ն գեղեցիկ է հեռավոր, անհասանելի ու անշոշափելի երկինքը, նրա փիրուզե հայելին: Վանիկը ձեռքերը մեկնեց դեպի անցքը և ուրախությունից խզված ձայնով գոռաց.
— Լո՛ւյս... լո՛ւյս...
Էլի ինչ-որ բան ուզեց ասել, սակայն միայն այդ բառն էր դուրս գալիս նրա բերանից: Նա երկու ձեռքով փակեց աչքերն ու հեկեկաց: Մի տարօրինակ տխրությամբ լցվեց նրա հոգին, մի մեծ, շատ մեծ կարոտ զգաց նա: Ինչ ահավոր բան է խավարը և ինչպիսի՜ թանկագին բան՝ լույսը:
Թեև իր գլխավերևը գտնվող աշխարհի անհամար բարիքներից լույսի մի փոքրիկ պատառ էր միայն բաժին հասել Վանիկին, բայց դա այնպիսի մեծ ուրախություն պատճառեց նրան, որ կարծես ողջ տիեզերքը իրենը լիներ: Միայն այժմ նա լիովին հասկացավ, թե ինչպիսի

զարհուրելի տառապանքի մեջ է եղել ինքը: Ուրախությունից նա չէր կարողանում զսպել արցունքները: Այնինչ Ղափլանը թազնել էր նրա ոտքերի տակ ու դունչը վեր ցցած՝ զարմացած նայում էր դրսի աշխարհի գոյությունը հիշեցնող քարանձավի բնական պատուհանին:
Երկու բարեկամներն ուրախ էին: Նրանք հիմա լույս ունեն, ջուրն այնքան էլ հեռու չէ, իսկ ջրի մեջ որքան ասես ձուկ կա: Բացի այդ, այստեղ Վանիկը կարող է անսխալ որոշել գիշերն ու ցերեկը, և, որ ամենից կարևորն է՝ որևէ կերպ բարձրանալ մինչև վերևի անցքը, դուրս գալ այս տանջարանից:
Իսկ կարո՞ղ է արդյոք հասնել փրկության անցքին: Բայց ավելի լավ է, այդ մասին դեռ չմտածել: Չէ՞ որ անցքին հասնելու միջոց չգտնելու դեպքում սաստիկ կհուսախաբվի ու նորից կընկնի տառապանքի մեջ: Ավելի լավ է ահա այսպես անշարժ մնալ, ագահությամբ նայել այն անցքին, որն այս անիծված քարանձավը կապում է բովանդակ աշխարհի հետ...
Բայց ամբողջ օրը հո չի կարելի մնալ արևի լույսով կախարդված կանգնած: Պետք է որևէ գործ անել: Եվ ինչպես միշտ, այս անգամ էլ Վանիկն իր գործը սկսեց նոր «բնակավայրի» ուսումնասիրությունից:
Այն թունել-քարանձավը, որի միջով նա եկել էր մինչև «Լույս աշխարհ» (այսպես նա անվանեց իր նոր քարանձավը), գտնվում էր պատուհանի աջ կողմում:
Լույսի աշխարհում ահագին մանր ու մեծ քարակույտեր կային, իսկ հատակը ծածկված էր չոր հողով: Այստեղ էլ բուսականության հետք չէր երևում: Աչքի չափով հաշվելով՝ Վանիկը գտավ, որ գետնից մինչև լուսամուտն այնքան էլ բարձր չէ, հազիվ տասնհինգ մետր լինի: Բայց ցավալին այն էր, որ ոչ մի կերպ հնարավոր չէր ժայռի լանջով մագլցել ու հասնել անցքին:
«Հապա ինչպե՞ս պիտի բարձրանամ վերև»,— նայելով ժայռին՝ ինքն իրեն հարցրեց Վանիկը և երկար գլուխ պայթեցնելուց հետո եկավ այն համոզման, որ քարանձավից դուրս գալու միակ միջոցը հատակից մինչև անցքի բերանը պատ շարելն է: Պետք է քարե մի բուրգ շինել ու նրա վրայով հասնել անցքին: Այս էր փրկության միակ ելքը:
Վանիկը վճռեց իր ունեցվածքը գետակի մոտից տեղափոխել լույս աշխարհ և անմիջապես սկսել պատը շարելու գործը: Նա լամպը կանոնավորեց, հրացանը թողեց պատի տակ ու շանը ձայն տալով՝ գնաց դեպի իր հին բնակարանը:
Իր ունեցվածքը լույս աշխարհ տեղափոխելու համար նա երկու անգամ ճանապարհորդություն կատարեց քարանձավում: Երբ արդեն ամեն ինչ բերել էր, մութը վրա հասավ:
Այդ օրվա բաժին ուտելիքը խժռելուց հետո, նա որոշեց քնել և վաղ առավոտյան սկսել պատ շարելը: Կարպետից մնացած կտորները փռեց երկու մեծ քարակույտի արանքը, ջրշան մորթին գցեց նրա վրա ու գլուխը մոր շալով փաթաթելով՝ աշխատեց որքան կարելի է շուտ քնել:
Անցքից երկու աստղ ժպտում էին նրան: Երկինքը պարզ էր, ամպի ոչ մի ծվեն չկար նրա վրա: Թեև Վանիկը որոշել էր շուտ քնել, բայց քունը դժվարությամբ էր մոտենում աչքերին: Շուտով նա մարմնում տարօրինակ սարսուռ զգաց, ոտքերն սկսեցին այրվել: Ավելի պինդ շուլալվեց շալի մեջ: Բայց սարսուռը չանցավ: Մեջքի վրա կարծես սառույց էին դրել: Ծնոտը դողում էր: Վանիկը հասկացավ, որ սաստիկ մրսել է, երբ գետակն անցնելիս ոտքերն ընկել էին ջուրը:
«Հիվանդացել եմ»,— ցավով մտածեց նա ու զգաց, որ ջերմությունն արագ բարձրանում է: Գլուխն սկսեց ցավել, ոտքերը կարծես կրակի մեջ էին: «Ա՜խ, մամի՜ ջան,— մտովի դիմեց նա,— ես հիվանդացել եմ: Հիմի ո՞վ պիտի ինձ խնամի: Ինչպե՞ս պիտի առողջանամ այս գետնախորշում»:
Ամբողջ գիշեր նա տապակվում էր տաքության մեջ, ընկնում ինքնամոռացության գիրկը, զառանցում: Երբեմն զարհուրելի պատկերներ էր տեսնում, իսկ հաճախ բոլորովին մոռանում,

թե որտեղ է գտնվում: Երբեմն էլ բարձրաձայն խոսում էր մոր հետ, բարկանում նրա վրա: «Մամի՛ ջան, ջո՛ւր եմ ուզում, ջո՛ւր... Ինչի՞ չես ջուր տալիս»:
Միայն լուսադեմին կարողացավ բացել աչքերը ու հասկանալ, թե որտեղ է գտնվում... Թեև գիտակցությունը տեղն էր եկել ու այլևս չէր զառանցում, սակայն ցավից գլուխը քիչ էր մնում պայթեր: Իսկ աչքերն ասես ուռել, ճաքել էին: Լեզուն այնպես դառն էր, որ եթե հնար լիներ, կպոկեր, դեն կշպրտեր:
«Մի՞թե հիվանդությունից պիտի մեռնեմ,— դառնորեն մտածում էր Վանիկը,— ախր հիմա վերջապես ես արևի լույսից բաժին ունեմ, քարե բուրգ պիտի շինեմ մինչև անցքը, որպեսզի դուրս գամ, փրկվեմ կորչելուց»:
Շուտով քարանձավն այնքան լուսավորվեց, որ Վանիկն արդեն տեսնում էր ոչ միայն իր շանը և ուտելիքի տոպրակը, այլև մոտիկ քարերն ու պատուհանի ատամնավոր եզրերը: Եթե հիվանդ չլիներ, հիմա արդեն ահագին քար էր հավաքել ու սկսել պատը շարել: Մի տասը-տասնհինգ օրում կարող է պատը հասցնել լուսամուտի եզերքին: Տասնհինգ օր հետո դուրս կգա գետնի տակից... Բայց հակառակի պես այնպես է հիվանդացել, որ գլուխը նույնիսկ չի կարողանում բարձրացնել: Ե՞րբ կլավանա, և արդյո՞ք կլավանա, թե՞ այսպես պառկած էլ կմեռնի:
Ամբողջ օրը նա մնաց անշարժ: Հետզհետե ավելի էր թուլանում: Գիշերը սաստիկ ծարավ զգաց, իսկ առավոտյան ծարավն այնքան սաստկացավ, որ այլևս համբերելու ուժ չմնաց: Լեզուն այրվում էր, շրթունքները ճաքճքել էին, կարծես թոքերը կրակ էր ընկել: «Ջո՛ւր»,– երբեմն թույլ ձայնով կանչում էր նա: Բայց ո՞վ ջուր կբերի: Ո՞վ կա մոտը: Շո՞ւնը... Վանիկը մի կերպ բարձրացրեց գլուխը ու նայեց ընկերոջը: Ղափլանը թազնել էր իր կողքին, գլուխը քիչ բարձրացրել և տխուր-տրտում նայում էր իրեն: Հասկանո՞ւմ էր, որ իր բարեկամին ծանր բան էր պատահել: Ինչ իմանաս...
— Ղափլա՛ն ջան, վախենո՞ւմ ես, որ ես մեռնեմ,— հարցրեց Վանիկը հազիվ շրթունքներն անջատելով:— Է՛հ... սիրելիս, ոնց որ տեսնում եմ, մեր բախտը չի բանում, չէ՛... Թե չէ ինչո՞ւ պիտի հիվանդանայի, երբ արդեն փրկության դռանն ենք... Ա՛խ, Ղափլան ջան, ծարավ մեռնում եմ...
Իր անունը լսելիս Ղափլանի աչքերը լայնանում էին, պոչը ծուլորեն շարժում էր, ուրիշ ոչինչ: Դե նա ինչպե՞ս հասկանար, որ իր տերը ծարավ է: Հասկանար էլ, ինչպե՞ս կարող էր ջուր բերել:
Ծանր տառապանքների մեջ անցավ այդ օրը: Երեկոյան Վանիկը նորից գիտակցությունը կորցրեց և նորից սկսեց զառանցել: Ջերմությունը երևի քառասունից անց էր: Ամբողջ գիշեր նա այրվում էր տաքության մեջ: Երբեմն միայն բացվում էին նրա ցամաքած շրթունքները, ու նա «ջո՛ւր» էր կանչում:
Առավոտյան թեև ջերմությունը մի քիչ իջել էր, սակայն ավելի թույլ էր զգում, քան երեկ: Իսկ ծարավն ուղղակի սպանում էր: Երբ լույսը լրիվ բացվեց, նա վճռեց գնալ ջրի: Վճռելը հեշտ է: Սակայն ինչպե՞ս գնա: Առանց այդ էլ պառկած տեղը գլուխը պտտվում էր, ուշքը գնում: Բացի այդ, սաստիկ մրսում էր: Հենց որ դուրս գար ջրշան մորթու տակից, իսկույն կսառչեր: Հուսահատությունից նա լաց եղավ, հասկանում էր, որ եթե վեր կենա ու ջրի գնա, կարող է այլևս չվերադառնալ, մնալ կես ճանապարհին:
Եվ որոշեց դիմանալ ծարավին, վեր չկենալ: Բայց մարտի երեսունմեկի առավոտյան այլևս համբերելու ուժ չուներ: Ծարավն այնպես էր սաստկացել, որ Վանիկին թվաց, թե սիրտը ուր որ է կպայթի: Ճար չկար, պետք է գնար ջրի:
Տեղից մի կերպ վեր կենալով՝ նա մոր շալն ամուր փաթաթեց գլխին, ջրշան մորթին գցեց ուսերին, ծայրերը մոտեցրեց, խրեց գոտու արանքն ու մեծ դժվարությամբ նավթ լցրեց լամպը: Հենց որ կռանում էր, արյունը լցվում էր քունքերը և գլխի ծանրությունից քիչ էր մնում վայր ընկներ: Նա դատարկեց կաթսայիկն ու ճանապարհ ընկավ, սակայն ոտքերը չէին շարժվում,

յուրաքանչյուրն ասես հինգ փութ լիներ:
Առաջին քայլը կատարեց մեծ դժվարությամբ, քիչ մնաց գլորվեր: Ծնկները ծալվում էին, գլուխը պտտվում, ողնաշարը ջարդվում: Բայց և այնպես ծարավը ստիպում էր գնալ, թեկուզ տեղ չհասներ ու մնար կես ճանապարհին: Ու գնաց: Գնում էր ծանր, տառապանքով: Երբեմն չորեքթաթ էր տալիս, նույնիսկ սողում:
Հազիվ հարյուր քայլ էր խորացել թունել-քարանձավի մեջ, երբ հանկարծ լամպը հանգավ: Պատրույգն այրվել, սպառվել էր: Վանիկը լաց եղավ, բայց և այնպես առաջ գնաց: Ճանապարհը ծանոթ էր: Բացի այդ, Ղափլանը այնպիսի ուղեկից էր, որ հետը չես մոլորվի: Ուրեմն պիտի շարունակել ճանապարհը, գնալ դեպի ջուրը՝ փրկարար ջուրը...
Տանջանքով լի այդ ճանապարհը նա անցավ երևի երեք ժամում: Երբ ջրի ձայնը լսվեց, քիչ մնաց ուշաթափվեր: Հասնելով գետակին՝ մեկնվեց ավազի վրա և սկսեց ագահաբար խմել քաղցրահամ ջուրը...
Երբ ծարավը հագեցրեց, թուլացած տարածվեց ջրի մոտ ու սկսեց հևալ... Մտածում էր, որ հիմա կպայթի շատ ջուր խմելուց: Մի քանի րոպե անշարժ պառկելուց հետո կաթսայիկը ջրով լցրեց ու վեր կացավ:
Վերադարձն ավելի դժվար էր: Պետք է զգույշ գնար, որպեսզի չսայթաքեր ու ջուրը չթափեր: Ուշքը նորից չկորցնելու համար նա ատամները սեղմեց իրար ու համրում էր իր քայլերը, ապա շուտ-շուտ ձայն էր տալիս Ղափլանին, որ շատ հեռու չգնա ու ճիշտ առաջնորդի իրեն:
Արևն արդեն մայր էր մտնում, երբ հասավ «տուն»:
Ջրամանն «անկողնու» մոտ դրեց ու որոշեց մի բան ուտել: Թեև բոլորովին ուտելու ախորժակ չուներ, բայց հասկանում էր, որ ուժերը պահպանելու համար սնվել է հարկավոր: Նա մեղր կերավ: Պատառները զզվանքով էր տանում բերանը, դժվարությամբ էր ծամում, կուլ տալիս: Սակայն իրեն ստիպում էր ուտել:
Նա հիշեց, թե ինչ տառապանքներ էր քաշում մայրը, երբ ինքը հիվանդանում էր: Խեղճ մայրը հազիվ էր կարողանում մի բաժակ թեյ խմեցնել կամ մի յուղապատառ ուտեցնել իրեն: Ինքը համառում էր ու հրաժարվում որևէ բան ուտելուց: Բայց մայրը չէր հեռանում նրա մոտից, աղաչում, պաղատում էր, որ կես բաժակ թեյ խմի կամ մի կտոր խնձոր ուտի: Երբեմն լաց էր լինում, մի թանկագին նվեր խոստանում, մինչև կարողանում էր մի բան ուտեցնել իրեն: Իսկ այժմ թեև ուտելու ոչ մի ախորժակ չուներ Վանիկը և ոչ ոք նրան թանկագին նվեր չէր խոստանում, բայց և այնպես նա ահագին մեղր ու հաց կերավ: Ճարն ինչ: Ինքը պետք է խնամի, բժշկի իրեն:
Ամբողջ գիշերը նա չկարողացավ աչք բաց անել: Վիճակը ոչ մի կերպ չէր լավանում: Գլուխն առաջվա նման պայթում էր, ջերմությունը մերթ բարձրանում էր, մերթ իջնում:
Լուսացավ: Ապրիլի մեկն էր:
Հենց որ լույսը բացվեց, Վանիկը ագահորեն խմեց կաթսայիկում մնացած ջուրը: Ուտելու ախորժակ չուներ: Սիրտը միայն ձավարով սպաս էր ուզում: Եթե լիներ, կուտեր մի ամբողջ պնակ: Բայց ո՞վ նրան սպաս կտար, որտեղի՞ց: Ավելի լավ է չմտածել սպասի մասին, հարկավոր է նայել լուսամուտին ու տեսնել, թե ինչպես է օրը բացվում:
Շուտով արևը ոսկեզօծեց լուսամուտի եզրերն, ու քարանձավը պայծառացավ: Բայց շատ քիչ էր արևը մնում լուսամուտի եզրին, իսկ նրա շողերը երբեք չէին ընկնում քարանձավը: Վանիկն անթարթ նայում էր երկնքի մի պատառիկին ու աշխատում որոշել՝ չի՞ վերջանում արդյոք ձմեռը և դեռ շա՞տ ժամանակ կա մինչև գարուն: Իր հաշվով այդ օրը ապրիլի մեկն է, բայց ինչո՞վ համոզվես, որ այդպես է: Գուցե դեռ մարտի տասն է: Չէ՞ որ հին ու նոր աշխարհներում հավիտենական խավար էր և անհնարին՝ ցերեկն ու գիշերը սահմանագծել: Նույնիսկ դժվար էր որոշել՝ թե հիմա որ ամիսն է: Իսկ պատուհանից երևացող երկնքի պատառիկն այնպես

պարզ էր ու այնպես կապույտ, որ դժվար էր կռահել՝ ձմեռվա երկինք է դա, թե գարնանամուտի:
Սարսափելին այն էր, որ ուտեստն արդեն պակասում էր: Եթե չլիներ ձուկն ու ջրշան միսը, հիմի երևի հացի ոչ մի փշուր չէր մնացել: Մի քանի օր ինքը խնայել էր հացը ու եփած ձկով բավարարվել միայն: Ղափլանն արդեն երկար ժամանակ է, որ յոլա է գնում ձկնեղենով ու ջրշան մսով:
Երեք օր շարունակ նա միևնույն, անփոփոխ վիճակում էր: Սոսկալի տառապանքներ կրելով՝ երեք անգամ ջրի գնաց և հայ գրականության ու ռուսաց լեզվի դասագրքերը զոհելով՝ ջուրը եռացրեց, թեյ գցեց և մի կերպ հագեցրեց ծարավը: Շաքարը վերջացավ, իսկ մեղրից շատ քիչ բան մնաց:
Ապրիլի հինգի երեկոյան Վանիկն սկսեց քրտնել: Դա ուրախացրեց նրան, նա գիտեր, որ մրսածի փրկությունը լավ քրտնելն է: Հիշում էր, թե մայրն ինչպիսի՜ տառապանքով էր իրեն քրտնեցնում, երբ ինքը հիվանդանում էր. «Ձեռքդ մի հանի վերմակի տակից, Վանիկ ջան,– աղաչում էր մայրը:— Ախր որ մի քիչ քրտնես, տեղնուտեղը կլավանաս: Մամին քեզ մատա՛ղ, բա ես քո վատը կուզե՞մ, լսի՛ր ինձ»:
Մոր ասածները հիշելիս Վանիկի կոկորդը սեղմվում էր ու լացը գալիս. «Ա՛խ, մամի՜ ջան, հիմի դու էստեղ չես, որ ինձ ծածկես, ղանթիփի ծաղկով եփած թեյ կամ հոնի թթու տաս,— մտովի մորը դիմելով՝ սկսեց խոսել նա:— Բայց տես, մամի ջան, ես քո խորհուրդները կատարում եմ: Ա՛յ, ամուր փաթաթվել եմ իմ ունեցած շորերով, ուզում եմ քրտնել, լավանալ, որ գամ գյուղ, որ դու այլևս լաց չլինես... Ա՛խ, մամի ջան...»
Նոր սկսած քրտինքը կսկծացրեց նրա աչքերը, մեջքը սկսեց քոր գալ, բայց նա զսպում էր իրեն, ոչ մի շարժում չէր անում, որ հանկարծ քրտինքը չփախչի:
Բաց աչքերով նա շարունակում էր նայել «պատուհանին»: Ինչո՞ւ մի թռչուն չի երևում երկնքում: Գոնե մի անգղ, մի արծիվ կամ մի ճնճղուկ հայտնվեր, թե չէ մարդ տխրությունից կխելագարվի: Մի՞թե այս կողմերի բոլոր թռչունները կոտորվել են: Չէ՞ որ ամռանը նրանք այնքա՜ն շատ են լինում, որ ուղղակի զահլա են տանում: Իսկ հիմա ինչո՞ւ չեն երևում: Բայց ինչպե՞ս երևան, երբ դեռ գարունը չի եկել, դեռ ձմեռ է: Աշնանը, երբ սարերին ձյուն է նստում, բոլոր թռչուններն իջնում են ձորերը, ոչխարի հետևից գնում են գյուղ կամ Գայլաբնի ձորը, որտեղ կարելի է կեր հայթհայթել: Ոչ միայն թռչունները, այլև գայլերն անգամ ոհմակներով հեռանում են սարերից ու թափառում ձորերում գտնվող գյուղերի շրջակայքում:
Մինչև երեկո Վանիկը լողում էր քրտնքի մեջ: Գիշերը դարձյալ չկարողացավ քնել, իսկ մյուս առավոտ իրեն ավելի վատ զգաց: Ծարավը նորից տանջել: Ի՞նչ անել: Նորի՞ց գնալ ջրի: Ուժերը կհերիքե՞ն, որ հասնի գետակին ու ետ դառնա... Մինչև կեսօր մի կերպ համբերեց, իսկ կեսօրին թվաց, թե ծարավից մեռնում է: Եվ նա նորից գնաց ջրի: Անհնար է պատմել այն տառապանքը, որ այդ անգամ կրեց նա: Բավական է ասել, որ երբ ետ եկավ, չկարողացավ ոտքի վրա մնալ ու ջուրը եռացնել: Հում ջրից մի քանի կում խմեց ու գրեթե անշնչացած ընկավ անկողին...
Երեք օր նա չկարողացավ տեղից շարժվել: Չորրորդ օրն աչքերը մի կերպ բաց արեց ու նայելով ի ոտքերի մոտ պպզած Ղափլանին՝ զարհուրեց: Շունը կմախք էր դարել, նրա փոս ընկած աչքերը պղտորվել էին, ոտքերը բարակել, կողաճաղերը ցցվել, իսկ վերին շրթունքն այնպես էր ետ քաշվել, որ ատամները բացվել էին:
— Այդ ի՞նչ է պատահել քեզ, Ղափլա՜ն,- մի պահ իր վիճակը մոռանալով՝ հարցրեց Վանիկը:— Այդ ի՞նչ օրի ես ընկել, Ղափլա՜ն ջան:
Ղափլանը միայն գլուխը ծուլորեն թափահարեց:
— Հիվա՞նդ ես, — նորից հարցրեց վանիկն ու ակամա նայեց ջրշան մսի կողմը: Նայեց ու ամեն

ինչ հասկացավ: Իր հիվանդության օրերին Ղափլանը մսին ձեռք չէր տվել, ոչինչ չէր կերել:
— Ա՛յ քեզ հիմար, — դառնացած գոչեց Վանիկը:- Ինչո՞ւ ես սոված մնացել: Ինչո՞ւ չես մսից լափել, հը՞: Բա որ սովից սատկեի՞ր:
Նա մի կերպ սողաց դեպի ջրշան միսը ու մի մեծ կտոր կտրելով՝ գցեց Ղափլանի առաջ: Շունն ագահորեն սկսեց միսը լափել...
Այդ օրն էլ Վանիկը պառկած մնաց: Թեև իրեն մի փոքր լավ էր զգում, սակայն տեղից վեր կենալու ուժ չուներ: Միայն կարողացավ մի քիչ մեղր ու հաց ուտել, մի կես ժամ քնել:
Հիվանդության տասներորդ օրը նա իրեն բավականին կազդուրված զգաց: Նույնիսկ կարողացավ տեղից վեր կենալ ու երթևեկել քարանձավում: Սակայն այնքան էր թուլացել, որ հազիվ էր կարողանում ոտը ոտքի առջև դնել... Ամբողջ ցերեկը չքնեց, որպեսզի գիշերն արթուն չմնա: Բայց դա էլ չօգնեց: Գիշերը նորից չկարողացավ աչք կպցնել: Գլուխը ցավում էր, մարմնում թուլություն էր զգում: Երբեմն հուսահատությունից ամբողջ ձայնով մորն էր կանչում ու լալիս...
Նրա հուսահատությունը սաստկացավ առավոտյան: Թմրությունից փակված աչքերը բաց անելով՝ նա իր կողքին պպզած գտավ Ղափլանին: Շունն այնպե՛ս էր տխրել և այնքա՛ն վիշտ կար նրա աչքերում, որ կարծես ամբողջ գիշեր լաց էր եղել: Այդ բանը վախեցրեց Վանիկին: Այդպիսի տխուր ու տագնապալի հայացք են ունենում միայն անհույս պառկած հիվանդի հարազատները: Իսկ այստեղ իր միակ հարազատը Ղափլանն էր, որ ահա թախծոտ նայում էր իրեն:
Վանիկը լսել էր, որ շները մեկ-երկու օր առաջ են զգում իրենց հիվանդ տիրոջ վերահաս մահը: Պապը բացատրել էր, թե նրանք մեռնողի մարմնի հոտից կռահում են նրա մահը և դունչները երկինք ցցած՝ ոռնում: Այդ բանը հիշելով՝ Վանիկը սարսափեց: Նրան թվաց, թե հիմա Ղափլանը դունչը կցցի դեպի քարանձավի պատուհանը ու կոռնա...
— Չէ՛, Ղափլա՛ն ջան, չոռնա՛ս,— աղերսագին դիմեց նա շանը:— Չոռնա՛ս, մեղք եմ: Մի ոռնա, թեկուզ և մեռնեմ: Չե՛մ ուզում, չէ՛...
Ղափլանը գլուխը բարձրացրեց ու բերանը լայն բաց անելով՝ վարդագույն լեզուն քսեց դնչին:
— Ասում եմ՝ չոռնա՛ս...— բորբոքվեց Վանիկը:— Չոռնա՛ս, թե չէ... հրացանս կվերցնեմ ու այս անգամ չես պրծնի ինձնից...
Շունը կարծես զգաց, որ իր տիրոջ հետ վատ բան է կատարվում, ուստի սկսեց լիզել նրա վտիտ ձեռքը: Նրա արարքը սաստիկ խղճահարություն պատճառեց Վանիկին, ու նա նորից լաց եղավ:
Տխուր-տխո՛ւր օր էր:
Կարծես ամբողջ քարանձավը լցված էր վշտով ու դառնությամբ: Ամեն ինչ զզվեցնում էր Վանիկին: Ատելի էին նույնիսկ սեփական ձեռքերը, ոսկորները ցցվել ու մորթին սմքել էր...
Այնուամենայնիվ, այդ գիշեր Վանիկը քնեց:

Գլուխ իններորդ

ԱՊԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՌԱՊԱՆՔ

Արթնացավ, երբ լուսամուտի եզրերն արդեն ոսկեզօծվել էին: Արևը ծագել էր: Մոր շալով փաթաթվելով՝ Վանիկը կաթսայիկը վերցրեց ու գնաց ջրի: Պետք է լվացվել, միս եփել, ուտել ու սկսել պատը շարել:
Վերադարձավ արդեն բավականին առույգ: Զգում էր, որ հյուծված մարմինն սկսել է ապաքինվել: Վառելիքի հերթական զոհը աշխարհագրության դասագիրքն էր: Դրա կեսն այրելուց հետո միայն ջրշան միսը եփվեց: Թեև կաթսայիկի ջուրը բավականին պղտոր էր, սակայն Վանիկը չթափեց և ամբողջը խմեց: Եփած ջրից մսի համ էր գալիս: Ծանր էր խմելը,

բայց ավելի օգտակար էր, քան հում ջուրը:
Արդեն պետք է բուրգը շարել: Բայց մինչ այդ հարկավոր է որոշել, թե ինչպիսին պիտի լինի այն բուրգը, որի վրայով ինքն ու շունը կարողանան բարձրանալ վեր:
Վանիկն իր կյանքում երբեք պատ չէր շարել, իսկ հիմա ստիպված էր ոչ միայն որմնադիրություն, այլև ինժեներության էլ անել: «Ինժեներությո՛ւն,— մտքում ասաց նա ու քմծիծաղեց:— Ախր ես ո՞ր օրվա ինժեներն եմ»:
Բայց մի հասարակ բուրգ շինելու համար պարտադիր չէ, որ մարդ ինժեներ լինի: Հարկավոր է քարանձավում եղած քարերը հավաքել, բրգաձև դարսել իրար վրա ու աստիճանաբար բարձրացնելով՝ հասցնել մինչև առաստաղի անկյունի անցքը: Միանգամայն հեշտ ու հասարակ բան է դա: «Ես այդ գործը կանեմ ամենաուշը երկու շաբաթում»,— ինքն իրեն հուսադրեց Վանիկը: Այն մտքից, որ երկու շաբաթ հետո գետնի տակից դուրս է գալու, նա սաստիկ ոգևորվեց ու սկսեց անձավում եղած խոշոր քարերը գլորել, հավաքել անցքի տակ: Նախ պետք է շարել մեծ, հետո մանր քարերը:
Բայց շուտով պարզվեց, որ առանց ինժեներության յոլա չէր կարող գնալ: Տասնհինգ մետր բարձրությամբ բուրգ կառուցելու համար հարկավոր է բուրգի հիմքը դնել ժայռից առնվազն տասը մետր հեռու: Երբ Վանիկը մոտավորապես նշեց, թե որտեղից պիտի սկսի կառուցել բուրգը, պարզվեց, որ ահագին տարածություն պիտի քարով լցվի: Շուտով նա համոզվեց, որ տասնհինգ օրում չի կարող ավարտել բուրգը: Դա վշտացրեց նրան: Սակայն ուրիշ կերպ չէր կարող բարձրանալ մինչև «փրկության դուռը», ուստի առանց ժամանակ կորցնելու շարունակեց իր սկսած գործը:
Այնքան էլ հեշտ չէ խոշոր քարեր գլորել: Մեջքը ցավում էր, մատների կաշին պլոկվում, աչքերը չռվում էին: Ամբողջ օրը նա աշխատեց գլուխը կախ, իսկ երբ մթնեց, տեսավ, որ դեռ պատի առաջին շարվածքը չի ավարտել: Նորից մի ծանր հուսահատություն համակեց նրան: Եթե մի օրում չի ավարտել բուրգի առաջին շարվածքը, ապա ե՞րբ կավարտի ամբողջ բուրգը: Իսկ քանի՞ շարք քար պիտի դարսի իրար վրա, մինչև հասնի լուսամուտին:
Վանիկը փորձեց որոշել, թե մինչև լուսամուտի եզերքը քանի՞ շարք պատ պիտի դնի: Առաջին շարքի քարերը մեծ-մեծ են և երեսուն-երեսանհինգ սանտիմետր բարձրություն ունեն: Հետո քարերը կմանրանան: Համենայն դեպս, պատը մի մետր բարձրացնելու համար պետք է երեք շարք քար շարել: Տասը մետրի համար երեսուն... Իսկ ամբողջ բուրգի համար՝ քառասունհինգ:
Վանիկի մազերը փշաքաղվեցին: Ամբողջ օրն աշխատել էր, բայց դեռ մի շարք էլ չէր վերջացրել: Այդպես ո՞ւր կհասնի: Նշանակում է քառասունհինգ օր պիտի պատի՞: Լավ, ասենք վերևի շարքերի համար քիչ քար է պետք, այնտեղ պատը նեղանալու է, իսկ չէ՞ ոը բուրգի վերևի մասի համար քարերը պետք է շալակով բարձրացնել:
Վանիկը նստեց կարպետի վրա ու գլուխն առավ ափերի մեջ: Ի՞նչ աներ, հրաժարվե՞ր սկսած գործից, թե շարունակեր: Բայց ինչպե՞ս կարելի է հրաժարվել: Եթե հրաժարվի, հապա ո՞նց պիտի դուրս գա քարանձավից: Ո՛չ, հարկավոր է գործը շարունակել, անպայման շարունակել: Քարանձավն արդեն մթնել էր: Ջրշան եփած մսից մի պատառ հացի հետ ուտելուց հետո նա պառկեց քնելու:
Արթնացավ, երբ քարանձավի խավարը նոր էր սկսել ցրվել: Համեմատաբար ցուրտ էր: Երևի դրսում ձյուն էր եկել: Ջրի գնալուց հետո Վանիկն սկսեց աշխատել: Բայց մի տասնյակ քար հազիվ էր իրար կողք շարել, երբ զգաց, որ քաղցը նեղում է: Անցած օրերին այդպիսի սրությամբ ուտելու պահանջ չէր զգացել: Իսկ հիմա սկսել էր ծանր աշխատանք կատարել և դրանից ուտելու պահանջը մեծացել էր:
Նա մոտեցավ «մառանին», սակայն հացի բրդուճներին ձեռք չտվեց: Ջրշան մսից մնացած բաժինը վերցրեց ու երբ տարավ բերանը, հիշեց, որ իր մոտ մնացել է միայն կես կտոր աղ դրած

վարունգ:
Մի նոր դժբախտություն էր մոտենում նրան:
Վանիկը հանեց շորում փաթաթած վարունգի կտորն ու գլուխը տարուբերեց: Աղի վերջին պաշարն էր դա: Աղը խնայելու համար Վանիկը միայն լիզեց վարունգի սմքած կեղևը և դրանով մի կերպ կերավ մսի կտորը: Քաղցը մեղմացավ: Նա աշխատեց ավելի եռանդով: Սակայն երեկոյան ցավով տեսավ, որ այդ օրը կարողացել է ավարտել միայն պատի առաջին շարքը:
Մյուս օրը ջրի գնալիս Վանիկը վերցրեց նաև հրացանը: Չորս ձուկ որսաց, չորսն էլ եփեց՝ սպառելով աշխարհագրության դասագրքի մնացած թերթերը: Այլևս վառելիք չկար: Ջրշան միսը Ղափլանի բաժինն էր, ինքը պետք է բավականանա տոպրակում եկած չնչին ուտելիքով:
Աղ չկար, վառելիք չկար, իսկ ուտելիքը վերջանում էր:
Պետք է արագացնել պատի գործը:
Ապրիլի տասնհինգին Վանիկը մի ամբողջ շարք պատեց: Դա ահագին ոգևորություն պատճառեց նրան: Երեկոյան, երբ օրվա աշխատանքից հոգնած «տուն» եկավ, ուտելու անհամեմատ ավելի մեծ պահանջ զգաց, քան մյուս օրերին: Սակայն այդ օրվա բաժին հացն արդեն կերել էր և ոչ մի պայմանով ձեռք չէր տա մյուս օրվա պաշարին:
Ինչ սոսկալի բան է քաղցը: Մարդ ամեն տառապանքի կարող է դիմանալ, բացի այդ անիծված քաղցից: Ինչպես դիմանաս, երբ աղիքներդ գալարվում ու բերանիդ ջրերը վազում են...
Երկար տառապանքից հետո միայն նա կարողացավ աչքերը փակել:
Մյուս օրը ևս նա մի շարք պատեց: Արդեն սանդուղքի երկու աստիճան ուներ դեպի փրկության դուռը: Երկու աստիճան դեպի լույս աշխա՛րհ, դեպի մա՛յրը... հայրը... Քարերն իրար այնպես էր հարմարեցրել, որ դրանք կարողանան պահել ամբողջ բուրգի ծանրությունը:
Հաջորդ օրը, երբ նա արթնացավ ու արագ կերավ այդ օրվա բաժին ուտելիքը, նկատեց, որ անցքից երևացող երկինքը պատված է թեթև մշուշով, իսկ օդը համեմատաբար խոնավ է: Վանիկը լավ գիտեր, որ երկինքն այդպիսի գորշ գույն է ստանում գարնանամուտին:
Երկար նայելով անցքին, նա աշխատում էր պարզել՝ գարնան շունչը ձորերից հասե՞լ է սարերին, թե ոչ: Բայց ոչ մի արդյունքի չհասնելով՝ գնաց իր գործին: Երեկոյան դեմ օդի խոնավությունն ավելի զգալի դարձավ: Վանիկը նորից երկար նայեց պատուհանին ու վերջապես նկատեց, որ դրսում ձյուն է գալիս: Դա սաստիկ վշտացրեց նրան: Գարնան թույլ նշանները, որ զգացել էր առավոտյան, խաբուսիկ դուրս եկան:
Ութ օր հետո բուրգը բավականին բարձրացել էր: Այդ օրը Վանիկի հաշվով պետք է ապրիլի քսանհինգը լիներ: Հիմա ինչ լավ օրեր են սկսել գյուղում: Մոտենում է մայիսի մեկը: Առաջին սոթեցին ինքն էր լինում, որ այդ օրերին գյուղից ներքև գտնվող ձորակից ձնծաղիկ էր բերում դպրոց ու բաժանում ուսուցիչներին: Հետո հալվում էին գյուղի ու նրա շրջակայքի ձյունները, և նորածին ուլիկի ականջների պես հողի միջից ցցվում էին եղինջի ցողունները: Գետը վարարում էր: Ամեն ինչից գարնան թարմությունն էր բուրում: Այդ օրերին հայրը հաճախ էր գալիս տուն ու մորն ասում. «Աղջի , հոգսդ քաշիր, շուտով սար ենք գնալու»:
Գարունը մոտենում էր, այնինչ Վանիկի բուրգը դեռ երկու մետր էր բարձրացել: Այժմ դժվար էր քարը գրկելով գետնից բարձրացնել, դնել պատին: Ստիպված էր իր կարպետի մնացած մասը քանդել, նորից միաչքանի պարկ շինել: Այդպես էլ արեց և քարերը լցնելով պարկը՝ սկսեց շալակով բարձրացնել մինչև պատի գլուխը:
Որտե՞ղ ես այս գիրքը կարդում, ընթերցող: Տաք սենյակո՞ւմ, թե ծառի հովասուն ստվերի տակ: Սակայն որտեղ էլ լինես, մի պահ սպասիր ու ինքդ քեզ պատկերացրու Վանիկի վիճակում: Բայց դու ոչ կարող ես լիովին պատկերացնել այն զարհուրելի տանջանքը, որ քաշում էր Վանիկը, ո՞չ էլ ես կարող եմ պատմել ամեն ինչ: Ինչպե՞ս կարող ես դու կռահել այն

տառապանքը, որ կրում էր հիվանդությունից ու քաղցից հյուծված Վանիկը: Ահա նա շալակելով ծանր բեռը, բարձրացնում է կիսատ բուրգն ի վեր: Մինչև պարկը հասցնում է պատի գլուխը, հոգին դուրս է գալիս:
Թեև բուրգի պատը օր-օրի նեղանում էր ու այժմ ավելի քիչ քար էր հարկավոր մի շար պատի համար, բայց այդ քիչը ավելի տառապանքով էր Վանիկը բարձրացնում վեր: Քարով լցված պարկը սեղմում էր մեջքը, թոկերը կտրտում էին ուսերը, վզի երակները լարվում էին: Երբ բեռը հասցնում էր պատի գլուխը, նրա մեջքը երկտակվում էր, քրտինքը հեղեղում մարմինը, իսկ ոտքերն այնպես էին ցավում, ասես քարի տակով էին ընկել:
Նրա մատներն սկսեցին մաշվել, եղունգները պոկվել: Երբեմն նա նստում էր պատի գլխին, նայում ներքև և քիչ էր մնում հուսահատությունից իրեն նետեր ցած:
Պատը բարձրանում էր, իսկ ուտելիքը օր-օրի հալվում, սպառվում: Վանիկի աչքերն անվերջ հացի վրա էին: Երբեմն մոտենում էր «մառանին»՝ պարկը բաց անելու և նրա մեջ եղած հացը խժռելու մտադրությամբ, սակայն նորից էր դնում տեղը և արցունքն աչքերին՝ շարունակում տաժանակիր աշխատանքը: Օր-օրի վրա նա պակասեցնում էր նաև Ղափլանի կերը: Ջրշան միսն արդեն վերջանում էր, և Վանիկն ստիպված էր շատ քիչ բան տալ շանը:
— Հիմա էլ քչով յոլա գնա, Ղափլա՛ն, հո դու էլ ինձ նման մեջքովդ քար չե՞ս կրում: Համբերի՛ր:

* * *

«Մառանում» մնացել էր ընդամենը չորս բաժին հաց, իսկ բուրգը դեռ չէր հասել պատուհանին: Պատն առնվազն երեք մետր էլ պետք է բարձրացվեր: Ջրշան միսը Ղափլանին կհերիքի միայն մի օր: Բայց Ղափլանի բանը հեշտ է: Վանիկը դեռ փամփուշտ ունի, կարող է ձուկ որսալ ու տալ նրան: Իսկ ինքն ի՞նչ պիտի ուտի: Կրակ անելու բան չունի, չի կարող ձուկ եփել: Դարձյալ մնում էր նույն միջոցը՝ արագացնել բուրգի կառուցումը:
Վանիկը դատարկ տոպրակը վերևից նետում էր ցած, իջնում, մեջը քար լցնում, ինքը բարձրանում պատի վրա ու պարանով տոպրակը քաշում վեր:
Շուտով մառանում մնաց հացի երկու բաժին միայն: Երբ ջրշան մսի վերջին կտորը տվեց շանը՝ թուլացած նստեց նրա մոտ ու սկսեց նայել, թե ինչպես է Ղափլանը լափում միսը:
— Վերջացա՛վ, Ղափլա՛ն, դու այլևս այդպիսի պատվական կերակուր չես ուտելու,— ասաց Վանիկն ու չգիտես ինչու, դառնորեն ժպտաց:
Հաջորդ օրը ջրի գնալիս հրացանը վերցրեց հետը: Գետակի մեջ երկու փամփուշտ կրակեց, բայց միայն կարողացավ երեք ձուկ բռնել: Վերադարձավ ջրով լի կաթսայիկն ու ձկները ձեռքին: Շանը կես ձուկ տվեց, ջրի կեսը պահեց վաղվա համար, որպեսզի նորից ժամանակ չկորցնի, ջրի չգնա:
Երեկոյան, երբ մի շարք էլ էր պատել ու բուրգի գլխին նստած, ձեռքերը խաչած՝ նայում էր մթնող քարանձավին, հանկարծ ծանոթ ձայներ լսեց: Զարմանքից այնպես արագ կանգնեց տեղը, որ քիչ մնաց բուրգի գլխից վայր ընկներ: Երեսը շուռ տալով դեպի անցքը՝ ականջ դրեց: Ծանոթ ձայները նորից կրկնվեցին: Վանիկի դեմքը պայծառացավ: Ինքն ահա ագռավի կռավոց է լսում: Մի՞թե արդեն դրսում գարուն է և ագռավները ձորերից եկել են Կապուտանի ափերը:
Վանիկը գիտեր, որ գիշակեր թռչուններն այս կողմերն են գալիս այն ժամանակ, երբ ձյունն սկսում է հալվել ու նրա տակից դուրս են գալիս աշնանը սատկած կենդանիների լեշերը: Սկզբում այստեղ են գալիս ագռավները, հետո բազեներն ու արծիվները, իսկ երբ համատարած կանաչ է լինում և ոչխարի հոտերը բարձրանում են սար, նրանց հետ գալիս են նաև ճնճղուկները, կաչաղակներն ու գայլերը:
— Գարունը եկե՛լ է,— բղավեց Վանիկը ու ձեռքերն սկսեց թափահարել:— Գարունը, Ղափլան, գարունը եկե՛լ է...

Բայց գարունը բերել էր միայն ագռավներին: Իսկ մարդիկ՝ երկու-երեք շաբաթ հետո են երևալու սարերում՝ ֆերմաների համար արոտի տեղ ընտրելու և քանդված ոչխարանոցները վերանորոգելու համար:
Երկու-երեք շաբաթ, այսինքն՝ ամենաքիչը տասնհինգ–քսան օր հետո: Այնինչ Վանիկի մոտ մնացել էր ընդամենը երկու օրվա ուտելիք: Դա երկու կտոր լավաշ էր, երկու բուռ չոր թութ ու չորս ընկույզ: Ուրիշ ոչինչ: Ահա այն ամենը, որ մնացել էր «մառանում»: Այնինչ Վանիկը այնպես էր քաղցած, որ այդ բոլորը կարող էր խժռել միանգամից:
Հաջորդ առավոտյան Վանիկը դժվարությամբ բարձրացավ տեղից, բայց երբ նորից լսեց ագռավների կռավոցը, ուժերը ետ եկան... Երբեք այդքան սիրելի չէին եղել ագռավները: Մինչև կեսօր աշխատելուց հետո որոշեց մի փամփուշտ կրակել: Ո՞վ գիտե, գուցե իրենց գյուղացիներից մեկնումեկը սար է եկել, գուցե ֆերմայի վարիչն իր հոր հետ եկել է արոտատեղերը տեսնելու:
Վեց փամփուշտից մեկը դրեց հրացանի մեջ, փողը մեկնեց դեպի պատուհանն ու կրակեց: Ագռավներն ահագին աղմուկ հանեցին: Դրանից եզրակացրեց, որ շատ են, գուցե հարյուրից ավելի: Վանիկը լսեց նրանց թևաբախումն ու սկսեց գոռալ.
— Է՛, հե՛, հե՛յ...
Բայց ոչ մի պատասխան չստանալով՝ իջավ ներքև ու դառնացած սրտով վերցրեց հացի երկու բաժիններից մեկը և ս: Հացն արդեն ծաղկել էր: Օրվա պաշարն ուտելուց հետո քաղցն ավելի սաստկացավ: Ախ, եթե մի քսան հատ եփած կարտոֆի՛լ լիներ... Վանիկը Ղափլանին կես ձուկ տվեց ու շուռ եկավ, որպեսզի չտեսնի շան հարուստ «ճաշը»:
Հաջորդ օրը քսան պարկ քար հազիվ կարողացավ բարձրացնել բուրգի գլուխը: Այդ օրը կերավ երկու ընկույզ ու մի քանի չոր թութ: Մեծ համառությամբ հրաժարվեց հացին ձեռք տալուց: Քանի դեռ ուժ ուներ, ուզում էր մի կերպ դիմանալ, խնայել վերջին օրվա պաշարը:
Ապրիլի քսանի կեսօրին Վանիկը չկարողացավ իջնել պատի գլխից: Այնպես ուժասպառ էր, որ վախեցավ ներքև իջնի և այլևս չկարողանա բարձրանալ վերև: Բայց զարմանալին այն էր, որ մի տարօրինակ հանդգնություն էր զգում: Հոգին ավելի խաղաղ էր, քան երեկ, մյուս օրը: Որտեղի՞ց նա իմանար, որ այդ հոգեկան անդորրը շրջապատի, աշխարհի ու կյանքի նկատմամբ ծագած այն ճակատագրական անտարբերությունն էր, որ երևան է գալիս հույսն ամեն բանից կտրած, մահվան հետ հաշտվող մարդու մոտ:
Բուրգի գլխին երկար մնալուց հետո, վերջապես նա իջավ և դանդաղ մոտեցավ «մառանին», ուտելիքի վերջին բաժինը ընկած էր քարին: Վանիկը հացը, չոր թութն ու վերջին երկու ընկույզը դրեց գրպանը, որից կարծես նրա ուժերը տեղը եկան: Չէ՞ որ գրպանում դեռ ուտելու բան ունի: Նա որոշեց մի փամփուշտ էլ կրակել: Բարձրանալով բուրգի գլուխը, հրացանը մեկնեց վերև: Հրացանի փողն արդեն հասնում էր անցքի եզրին: Այդ ուրախացրեց տղային: Նա կրակեց զայրույթով: Սպասեց: Ոչ մի արձագանք, անգամ ագռավները ձայն չհանեցին: Հեռացե՞լ են, ի՞նչ է:
Դատարկ պարկուճը դեն նետելուց, հետո Վանիկը նայեց բուրգին: Եթե կարողանա երեք շարք էլ դարսել իրար վրա, ապա ձեռքը կհասցնի անցքի եզրին: Այո, անպայման կհասցնի: Նա ոտքերի թաթերի վրա կանգնեց վերջին քարին ու հրացանը նորից պարզեց դեպի անցքը: Չի սխալվել, հրացանի փողը հասնում էր անցքի եզրին:
«Հիմա իմ կյանքը կախված է երեք շար քարից»,— ինքն իրեն սկսեց խոսել Վանիկը,— Երեք շար,— կրկնեց նա:— Այսինքն եթե պատը մի մետր էլ բարձրացնեմ, կհասնեմ պատուհանին: Իսկ դրա համար հարկավոր է երեսուն քար հասցնել այնտեղ»:
Վանիկին թվաց, թե դա անհնարին է: Դանդաղ սահելով իջավ ներքև ու գոչեց.
— Կբարձրացնե՛մ:

Եթե այդ պահին մեկնումեկը կանգնած լիներ նրա կողքին, կսարսափեր, տեսնելով, թե ինչպես փայլատակեցին նրա աչքերը, ինչպես սեղմվեցին բռունցքները:
Ոտքերը հազիվ քարշ տալով՝ նա մոտեցավ կարպետին ու ընկավ՝ նրա վրա: Քնեց մեռածի պես: Առավոտյան, երբ արթնացավ՝ ակամա նայեց «մառանի» կողմը, սակայն այնտեղ այլևս ոչինչ չկար: Հիշեց, որ դեռ երեկ է եղած հացն ու մի բուռ չոր թութը լցրել պիջակի գրպանները: Նշանակում է դեռ ուտելու մի փոքրիկ պաշար ունի: Ընդամենը հինգ հատ թութ գցեց բերանն ու սկսեց դանդաղ ծամել: Նրա բերանի չմփչմփոցից Ղափլանն աչքերը բաց արեց և ագահորեն նայեց տիրոջը: Բայց շանը տալու ոչ մի բան չկար այլևս: Վանիկը խղճաց Ղափլանին: «Հարկավոր է գնալ ձուկ որսալու,— մտածեց նա:— Ղափլանին կկերակրեմ ե գուցե ես էլ փորձեմ հում ձուկը»: Նա հիշեց, որ ինքը մի քիչ նավթ ունի: Չի՞ կարելի նավթը թափել հոր փոխնորդի, մոր շալի ու հացի շորի վրա և դրանք վառելով՝ ձուկ եփել: Այդ անսպասելի միտքը այնքան սրտապնդեց նրան, որ նա նույնիսկ ահագին ուժ զգաց իր մեջ, իսկույն վերցրեց հրացանն ու կաթսայիկը և շանը կանչելով՝ վազեց թունելի սովոր ճանապարհով:
Մինչ այդ նա հազիվ էր շարժվում տեղում, բայց երբ սնունդ ունենալու հեռանկարը նորից երևաց, իսկույն հուսադրվեց: Ինչո՞ւ չհուսադրվել, չէ՞ որ մի կես ժամ հետո ինքը եփած կարմրախայտ է խժռելու: Վնաս չունի, թող անալի լինի, միայն թե մի բանով լցնի փորը:
Բայց հինգ հարյուր քայլ հազիվ էր հեռացել «տնից», երբ թափվող ջրի ահագին աղմուկ լսեց ու կանգ առավ: Այո՛, լսողությունը չի դավաճանել: Ահա ինքը ջրի շառաչ է լսում: Կարծես ջրվեժ է գոյացել թունել-քարանձավի մեջ: Վանիկը թուքը կուլ տվեց: «Այս ի՞նչ նոր երևույթ է: Մի՞թե Կապուտանի ջրերն այնքան են բարձրացել, որ հիմա շառաչելով թափվում են այս ստորերկրյա խորշերը»,— մտածեց նա և ակամա գնաց էլի մի հարյուր քայլ:
Այժմ ջրի ձայնը խլացուցիչ էր: Կարծես աներևույթ ջրվեժը հենց իր քթի տակ էր: Վանիկը լուցկի վառեց ու զարհուրեց...
Իրենից մի քանի քայլ հեռավորության վրա, հենց առաստաղից ահագին գոռում-գոչումով պղտոր ջուր էր թափվում քարանձավի հատակին ու արագ հոսում դեպի գետակը: Կապուտանի ջո՞ւրն է դա, թե Զմրուխտ սարի ձյուներն են արդեն հալվում ու հոսում դեպի ստորերկրյա քարանձավները:
Հիշելով, որ ինքը ապրելիս է եղել գետակի ափին, նրա մարմինը դող ընկավ: Եթե ժամանակին չանցներ գետակը ու բնակություն չհաստատեր Լույս աշխարհի քարանձավում, հիմա խեղդվել էր ջրի մեջ...
Այժմ ոչ մի կերպ չէր կարող շարունակել ճանապարհը: Մնաք բարո՛վ, համեղ կարմրախայտեր... Ի՜նչ հույսով էր Վանիկը գալիս դեպի ձեզ և ինչ ստացվեց... Արդեն բանը բանից անցել էր: Փշրված սրտով Վանիկը կաթսայիկը մեկնեց թափվող ջրին ու իսկույն հետ քաշեց, կաթսայիկն արդեն լցվել էր: Վանիկը փորձեց ջրի համը: Դրանից սառույցի, հալած ձյան ու հողի համ էր գալիս: Պարզ է, դա Կապատանի ջուրը չէր: Վերադարձին Վանիկը քայլում էր երերալով... Շուրջը խավար էր, բայց ավելի խավար էր նրա հոգին, նրա բախտը:
Այժմ արդեն բոլորովին պետք չէր ամանում մնացած նավթը: Իսկ Վանիկի գրպանում ընդամենը կես լավաշ կար ու մի քանի չոր թութ: Ուրիշ ոչինչ չուներ Վանիկն այս բովանդակ աշխարհի անբավ հարստություններից:
Ջուր խմելուց հետո նրա քաղցն անտանելի դարձավ: Ինչո՞վ կարող էր հագուրդ տալ այդ ամեհի գազանին՝ քաղցին, որ յոթգլխանի վիշապի պես պատրաստ էր նրան կուլ տալու: Որպեսզի այդ վիշապը ժամանակից շուտ կուլ չտա իրեն, Վանիկը ձեռքը խոթեց գրպանն ու այնտեղ եղած չոր թութն ամբողջովին հանելով՝ լցրեց բերանը: Պետք է ապրել, քանի դեռ միջոց կա: Իսկ վաղը գուցե ինքն այլևս կենդանի չի լինի: Կարող է պատահել, որ ջուրը վարարի և խեղդի իրեն: Հեղեղը այս քարանձավի գլխից ևս կարող է ներս խուժել հենց այն

անցքից, որին ինքը «փրկության դուռ» էր անվանել և որը, գուցե, մի ժամ հետո մահվան դուռ է դառնալու:
Այս մտքից զարհուրելով՝ Վանիկը վերցրեց պարկն ու գնաց դեպի քարանձավի հեռավոր անկյունում թափված քարերը: Պետք է մինչև վերջին շունչը դիմադրել, համառել: Պետք է քար տեղափոխել, բարձրացնել պատի գլուխը, որպեսզի ձեռքը կարողանա հասցնել փրկության անցքի եզրին ու դուրս գալ լույս աշխարհ: Քարանձավի այդ անկյունում ժայռը համեմատաբար փխրուն էր ու ճաքճքած: Նրա տակ ահագին քանակությամբ մանր-մունր քարեր էին թափված: Դրանցից մեծերն ընտրելով՝ Վանիկը լցրեց պարկն ու շալակելով՝ ետ եկավ: Պարանի ծայրը կապելով պարկին՝ նա արագ մագլցեց բուրգն ու թոկը քաշեց: Այս ամենը արավ զարմանալի արագ ու հեշտ:
Մի մեծ բարկություն էր եռում նրա սրտի մեջ: Կարծես բուռն վրեժխնդրությամբ էր լցվել ինքը իր դեմ և ցանկանում էր սպառել ուժի վերջին մնացորդները: Անվերջ կրկնվող հուսախաբությունից նա արդեն զզվել էր ու այլևս չէր ուզում խնայել իրեն: Պարկը բարձրացնելով վերև, արագ բաց արեց ու միջի քարերը թափեց: Երբ այդ քարերից մեկը վերցրեց պատին դնելու համար, նրա վրա ինչ-որ շողշողուն գծեր նկատեց և զարմացած, հետաքրքրությամբ նայեց նրան:
Այդ քարը նման չէր այն բոլոր քարերին, որոնցով նա շինել էր իր աստիճանավոր բուրգը: Անհարթ պրիզմայի ձև ունեցող այդ գորշ քարը բազմաթիվ ոսկեգույն երակներ ուներ: Հետաքրքրությունից Վանիկը նստեց, մի պահ մոռանալով իր անմխիթար վիճակը, ավելի ուշադիր սկսեց զննել քարը:
— Ախր սա պղնձի հանքաքար է,— վերջապես բարձրաձայն ասաց նա: Համոզված էր, որ չի սխալվել: Պղնձահանքի մի քանի բեկոր կար իրենց դպրոցի լաբորատորիայում, և բոլորը գիտեին, որ դա պղնձի հանքաքար է, որ բերել էին լեռնաշխարհում գտնվող հանքավայրերից:
Վանիկի նիհար կուրծքն սկսեց վերուվար անել: Սիրտը թրթռաց, քունքերն սկսեցին վառվել անսպասելի գյուտից: Ստորգետնյա քարանձավը հանկարծ նրա համար դարձավ սիրելի: Ոչ մի կասկած չունենալով, որ իր գտածը պղնձահանքի բեկոր է, նա արագ իջավ ներքև ու վազեց դեպի քարանձավի այն անկյունը, որտեղ գտել էր հանքաքարը: Լույսը քիչ էր թափանցում այդտեղ, և ժայռի լանջերը վատ էին երևում: Ուստի Վանիկը գնաց վառեց լամպն ու ետ եկավ: Երբ նայեց լուսավորված ժայռին, զարմանքից բերանը բաց մնաց: Իր ոտքերի տակ թափված բոլոր մեծ ու մանր քարերը ոսկեգույն երակներով պղնձահանքի բեկորներ էին: Կարծես ինքը կանգնած էր կրակի շեղջի մոտ: Նա բուռ-բուռ վերցրեց ոսկեգույն քարախիճն ու սկսեց զարմանալ նրա փայլից: Իսկ երբ ուշադիր նայեց ժայռին, նկատեց, որ այդ ոսկեգույն երակները մի քանի ճյուղերով ոլորվում են ժայռի գորշ լանջին ու գնում, կորչում ապառի մեջ: Նույնանման երակներ կային նաև ժայռի մյուս մասերում: Վանիկը տոպրակը լցրեց ոսկեգույն խճով և վերադարձավ «տուն»:
— Ի՞նչ ես շնթռել, Ղափլա՞ն,— կանչեց նա շանը,— վե՛ր կաց, է՛: Հա՛նք եմ գտել, հա՛նք:
Ղափլանը վեր կացավ, հորանջեց, մեջքն ուղղեց ու մի խղճալի ձայն հանեց: Կարծես ասում էր. «Ինչի՞ս է պետք քո հանքը, եթե կարող ես, ինձ մի կտոր ուտելու բան տուր ու գնա խաղաղությամբ վայելիր քո գանձը»:
Նայելով իր գտած հանքաքարին՝ Վանիկը նույնիսկ ժպտաց: Ինչե՛ր ասես, որ այդ պահին չանցան նրա մտքով... Միայն թե ինքը կարողանա լույս աշխարհ դուրս գալ, այն ժամանակ...
Ագռավները չարագուշակ կռավեցին վերևում: Վանիկը սարսռաց:
— Ձեր գլուխն ուտե՛ք, հա՛...– զայրացած գոչեց նա:– Ի՞նչ եք կռավում, ես դեռ մեռած չեմ, որ լեշս ուտեք: Եվ չեմ մեռնի, կապրեմ, այո՛, անպայման կապրեմ...
Բայց ագռավների կռավոցը սթափեցրեց նրան, ու նա իրեն գտավ մեն-մենակ կանգնած

կիսատ բուրգի տակ: Օրն արդեն անցել էր...
Մյուս առավոտյան նրա գլուխն սկսեց պտտվել: Ուշքը չկորցնելու համար գրպանում եղած հացը մանր-մանր կտրտեց ու սկսեց մեկ-մեկ գցել բերանը: Մի անգամ էլ, երբ ձեռքը տարավ գրպանը, այլևս հացի ոչ մի փշուր չէր մնացել...
Աղետը մոտենում էր:

Գլուխ տասներորդ

ՎԵՐՋԻՆ ՀՈՒՅՍԸ

Վանիկն արդեն կորցրել էր օրերի հաշիվը: Այդ օրը ամսի քանի՞սն էր, չգիտեր: Եվ դա մեծ դժբախտություն էլ չէր: Որ օրն ուզում է լինի: Ինքն այլևս ուտելիք չունի և եթե այդ օրը կամ ամենաուշը մյուս օրը չկարողանա դուրս գալ քարանձավից, ապա սովամահ կլինի... Համենայն դեպս նա որոշեց մի անգամ էլ հրացանը կրակել: Ո՞վ գիտե, գուցե իրենց ֆերման բարձրացել է սար: Սակայն այս անգամ էլ նրա կրակոցը միայն վախեցրեց ագռավներին: Ուրիշ ոչինչ:
Այդ օրը նա կարողացավ հինգ անգամ բուրգից իջնել ցած, քար լցնել պարկն ու վեր բարձրանալ: Բայց ամեն անգամ պարկը բարձրացնելիս գրեթե ուշաթափվում էր: Աղիքները ցամաքել, կպել էին մեջքին: Գլուխը հազիվ էր կարողանում ուսերի վրա պահել: Գիշերն անցկացրեց տառապանքի մեջ: Առավոտը երբ վեր կացավ, բերանը սարսափելի դառնահամ էր:
Սովն իր մագիլներով խեղդում էր Վանիկին:
Բայց և այնպես նա կարողացավ պարկը լցնել հանքաքարի խճով ու բարձրացնել բուրգի գլուխը: Երբ հրացանը մեկնեց դեպի անցքը, տեսավ, որ ոտքերի տակի հենարանը բավականին բարձրացել է: Հրացանի փողը հիմա ցցվում էր անցքի եզրից: Եթե ոտքի հենարանը կարողանա մի կես մետր էլ բարձրացնել, ապա անպայման ձեռքը կհասցնի անցքին:
Կեսօրին նրա ոտքերն սկսեցին ցավել, կարծես ուռել էին: Բայց Վանիկն այլևս ուշադրություն չէր դարձնում դրան: Որքան ուզում են, թող ցավեն, կդիմանա: Կդիմանա, որպեսզի գիտակցությունը չկորցնի, հանկարծ վայր չընկնի... Եվ քանի դեռ վայր չի ընկել, պետք է նորից աշխատել:
Նա իջավ ներքև: Պարանի ծայրը փաթաթեց մեջքին, հրացանը գցեց ուսը, շանը կանչեց, որ գա իր հետևից ու դժվարությամբ բարձրացավ սանդուղքի առաջին աստիճանները: Հետո սկսեց կուրծքը հենել քարերին ու մագլցեց... Մատները դժվար էին կպչում քարերին, ոտքերը հազիվ էին հենարան գտնում: Մինչև հասավ բուրգի գլուխը, եղունգներն արյունոտվեցին: Մի կերպ հրացանը հանեց մեջքից ու ընկնելով քարերին՝ հևաց: Արդեն գտնվում էր բուրգի գլխին, իսկ կարո՞ղ է տեղից վեր կենալ ու ներքև գտնվող պարկը ձգել, հասցնել վերև: Ուժերը կհերիքե՞ն արդյոք: Ուժ ունի՞, որ հերիքի: Ահա պառկած տեղը ձեռքերը հազիվ է կարողանում շարժել:
Հուսահատությունը համառորեն ընկճում էր Վանիկին ու մահվան ուրվականն ավելի պարզ էր երևում նրան:
Դրսում ագռավները նորից աղմկեցին: Հետո լսվեց արծվի սուր կռնչոց: Երկու ագռավ խելակորույս ընկան քարանձավն ու կորան նրա հեռավոր անկյուններում: Մի պահ անցքի գլխին երևաց արծիվը: Վանիկին թվաց, թե նա եկել է իրեն հոշոտելու: Մահվան սարսափից նա այնպիսի ուժ ստացավ, որ նույնիսկ վեր թռավ տեղից ու խելագարի նման աղաղակեց: Շունը նույնպես մի երկու բերան հաչեց: Արծիվը զարմացած նայեց ներքև ու շուռ գալով՝ թռավ, հեռացավ: Արծվի պատճառած վախը զգաստացրեց ու սթափեցրեց Վանիկին: Նա մեջքից քանդեց պարանն ու սկսեց քաշել ներքև թողած պարկը:

Սկզբում բեռը հեշտ էր բարձրանում, բայց շուտով Վանիկի ծնկները չդիմացան, ու նա պառկեց փորի վրա: Թոկն սկսեց քաշել պառկած վիճակում: Քաշում էր՝ կուրծքը քարերին հենած, ատամներն իրար սեղմած: Ձեռքերը երբեմն թմրում-թուլանում էին, ու նա գլուխը դնում էր սառը քարին՝ մի երկու վայրկյան հանգստանալու, շունչը հետ բերելու համար:
Մինչև մութն ընկնելը նա հազիվ կարողացավ չորս պարկ քար բարձրացնել: Քարերն իրար վրա դարսելով՝ տեսավ, որ անցքին հասնելու համար ոտքի հենարանն արդեն մի քիչ էլ է բարձրացել: Բայց այլևս որևէ շարժում անելու ուժ չուներ ու մնաց քարերի վրա պառկած:
Գիշերն անցավ տառապանքի մեջ:
Արևի շողերը կպան պատուհանի եզրերին: Հանկարծ Վանիկին թվաց, թե լսեց իր հոր ձայնը: Խելագարի պես վեր թռավ, չորացած մատներով կառչեց հրացանին ու չորս փամփուշտներից մեկը կրակեց... Կրակեց ու սպասեց... Հոր ձայնը նորից կրկնվեց: Այս անգամ արդեն շատ մոտիկից, ուղղակի անցքի մյուս կողմից:
— Ապեր, հե՛յ...— գոռաց Վանիկը և վախենալով, որ իր ձայնը չի հասնի հորը, մի փամփուշտ էլ կրակեց:
Ոչ մի պատասխան: Մի՞թե հայրը չլսեց իր կրակոցները, իր ձայնը: Բայց կանչողը արդյո՞ք հայրն էր: Եթե հայրն էր, ապա ինչո՞ւ է Ղափլանը լռել, ինչո՞ւ չի հաչում:
— Ղափլա՛ն,— դարձավ նա շանը,— դու լսեցի՞ր հայրիկի ձայնը: Հը՞, լսեցի՞ր: Հապա ականջ դիր:
Նա Ղափլանին մոտ քաշեց ու ինքն էլ ականջ դրեց:
Ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն:
Վանիկը հասկացավ, որ հոր ձայնը միայն տխուր պատրանք է եղել: Ուրիշ ոչինչ: Բայց այդ պատրանքը կյանքի էր կոչում նրա հյուծված մարմնի վերջին ուժերը: Նա վճռեց շանը բարձրացնել իր ուսերի վրա ու մի կերպ հասցնել պատուհանի եզրին՝ դուրս գցել:
Այս միտքը ուժ ներշնչեց նրան:
Պետք է մի երկտող գրել, կապել Ղափլանի վզին և ուղարկել գյուղ: Իսկ ինչի՞ վրա գրի երկտողը: Թղթի ոչ մի պատառ չի մնացել մոտը:
Բայց Վանիկը այս անգամ էլ ելք գտավ: Բլուզի փեշերը բարձրացրեց, ատամներով պատռեց սպիտակ շապիկը, մի լայն ծվեն պոկեց ու գրպանում մնացած քիմիական մատիտով գրեց. «Ես գտնվում եմ Կուխտու փոսում, Կապուտան լճի ափի քարանձավում: Դեռ ողջ եմ, բայց սովից շուտով կմեռնեմ, օգնեցեք: Վանիկ»: Գրությունն ամուր կապեց շան վզին:
— Դու այս գրությունը կհասցնես գյուղ,— խրատեց նա Ղափլանին:— Հենց որ ես քեզ բարձրացնեմ անցքի եզրը, դու թռիր, դուրս եկ ու վազիր դեպի գյուղ...
Վանիկը հաստատ համոզված էր, որ շունը կհասնի գյուղ և մարդիկ կփրկեն իրեն: Այս համոզմունքը նորից ուժ տվեց նրան, և նա իրեն նախատեց, որ հույսը բոլորովին կտրել էր:
Նա կանգնեց քարով լիքը պարկի վրա ու դարձավ շանը.
— Դե, արի՛, բարձրացիր ուսերիս, Ղափլա՛ն, բարձրացի՛ր, որ ես էլ քեզ բարձրացնեմ: Գլխի՞ չես ընկնում, անիծվա՛ծ, մո՛տ եկ:
Սակայն շունը չէր հասկանում, թե ինչ է իրենից ուզում իր տերը: Վանիկն ստիպված եղավ պպզել ու շան առջևի ոտքերից բռնելով՝ շալակն առնել, հետո վեր կացավ ու գոռաց.
— Դե, հիմա թռի՛ր դեպի անցքը: Հը՛: Դու հո ինձ չափ սով չե՞ս քաշել, որ չկարողանաս, թռի՛ր, է՛...
Շունը հասկացավ տիրոջ միտքը: Ետևի ոտքերը հարմարեցրեց նրա նիհար ուսերին, իսկ առջևինը հասցրեց անցքի եզրին: Վանիկը բարձրացրեց նրան: Շունը թափ առավ ու ցատկեց վեր...
Վանիկը նայեց անցքին: Ղափլանն արդեն գտնվում էր այնտեղ ու զարմացած նայում էր

հեռուներին: Անսպասելի հաջողությունից Վանիկը բարձրաձայն քրքջաց: Ինչո՞ւ չքրքջար: Շունն այստեղից գյուղ կհասնի ամենաշատը մի ժամում: Իսկ այնտեղից մարդիկ մի ժամում կհասնեն իրեն: Ուրեմն պետք է դիմանալ ընդամենը երկու ժամ ևս, և նա կլինի իր հարազատների գրկում: Երկու չէ, տասը ժամ էլ, երեք օր էլ կդիմանա, եթե հաստատ իմանա, որ կփրկվի: Ինչ խոսք, որ կփրկվի: Շունը հիմա լուր կտանի գյուղ:
Սակայն Ղափլանը կանգնել էր անցքի եզրին ու միայն պոչն էր ուրախ պտտում:
— Դե՛, վազիր, է՛, Ղափլան, ի՞նչ ես ցցվել: Վազիր գյուղ, շո՛ւտ...— գոռաց Վանիկը:
Բայց շունը պտտվեց կանգնած տեղը, գետինը հոտոտեց ու մնաց:
— Գնա՛,— նորից գոռաց Վանիկը:— Տո անխե՛լք, գնա, որ ինձ փրկես, է՛...
Դարձյալ ապարդյուն: Շունն անհանգիստ կաղկանձում էր, մերթ Վանիկին, մերթ էլ ներքև՝ ինչ-որ բանի նայելով:
— Ես քո տիրոջ հերն անիծե՛մ, գնա՛, է՛,— կատաղորեն գոռաց Վանիկը:
Շունն աչքից կորավ, բայց դա տևեց միայն մի վայրկյան: Նա նորից երևաց անցքի եզրին: Այս անգամ Վանիկի կատաղությունն արդեն գազանային էր: Նա ատամները կրճտացնում էր, հայհոյում շանը, սպառնում, խնդրում, բայց շունը միայն անհանգիստ կաղկանձում էր ու պտտվելով կանգնած տեղում՝ նորից նայում ներքև:
Գազազած Վանիկը վերցրեց հրացանը, վերջին երկու գնդակից մեկն էլ արձակեց անցքի մեջ՝ շան գլխավերևում: Բայց դա էլ չօգնեց: Շունը վախից կուչ եկավ, ոռնաց, սակայն մնաց տեղում:
Ինչպիսի՜ հայհոյանքներ ասես, որ չտվեց Վանիկն իր շանը: Հանքաքարի խճերով խփեց նրան, սակայն շունը համառորեն չէր շարժվում տեղից: Նրա արարքն այնպես սարսափեցրեց Վանիկին, որ սկսեց բռունցքներով ծեծել գլուխը...
Բայց ի՞նչ օգուտ դրանից: Գլուխը ծեծելով չես կարող դուրս գալ մահվան քարանձավից: Պետք է նորից տառապել, երկու պարկ քար էլ հանել վերև ու սեփական ուժերով փորձել ձեռքը հասցնել անցքի եզրին: Շան օգնությունից հույսը կտրելով՝ նա վերցրեց քարին գցած թոկը, իջավ ներքև, պարկը քարով լցրեց, բարձրացավ ու սկսեց քաշել: Ի՜նչ ծանր է անիծված պարկը, կարծես հարյուր փութ լինի: Վանիկը ատամներն ամուր սեղմել է իրար, ոտքերը հենել քարերին ու քաշում էր՝ օգնության կանչելով իր նիհար ու թույլ մարմնում մնացած վերջին ուժերը: Պարկը մի երկու մետր բարձրացնելուց հետո, թուլացած գլուխը դնում էր քարին և հևալով ու տնքալով, կտրվող շունչը մի կերպ ետ բերում՝ ուշքը չկորցնելու համար:
Մի անգամ էլ, երբ ատամներն ամուր սեղմեց՝ պարկը ձգելու համար, լեզուն մնաց նրանց տակ... Բերանում արյան համ զգաց ու հեկեկաց... Երբեք նա իր կյանքում այդպիսի սուր ցավ չէր զգացել: Փայտ ջարդելիս կացնով վիրավորել էր ոտքը, խոտ քաղելիս մանգաղով կտրել մատը, բայց ատամները սեղմել էր ու լացը զսպելով՝ ցավը տարել լուռ ու անմռունչ: Սակայն այս անգամ նա այնպես գոռաց լեզվի ցավից ու այնպես սկսեց լաց լինել, որ շունը վերևում անհանգստանալով՝ պտտվեց անցքի եզրին ու փորձեց ներքև թռչել:
Երբեք այդքան աղիողորմ լաց չէր եղել Վանիկը: Այնուամենայնիվ, նա պարկը բարձրացրեց, և մի խոր հառաչանք դուրս թռավ նրա կրծքից: Հարկավոր է բարձրացնել մի պարկ ևս: Իսկ դրա համար պետք է նորից լարել ուժերը: Ո՞ւժ է մնացել, որ լարի:
— Ա՞խ, եթե մի եփած կարտոֆի՛լ լիներ...— հազիվ բերանը բաց անելով ասաց նա ու իջավ ներքև...
Վերջին պարկը քաշելիս Վանիկի ուղեղում մի միտք ծագեց. «Իսկ չի՞ լինի, որ թոկը բաց թողնեմ ու մեռնեմ հենց այսպես պառկած... Իմ մահով այլևս նոր վիշտ չեմ պատճառի մորս ու հորս: Նրանք արդեն իրենց լացը սպառել են, իսկ ընկերներս վաղուց են մոռացել ինձ ու երևի հազվադեպ են տալիս իմ անունը: Մեծ բան է. աշխարհի վերջը չի գա, եթե Կուխտունց Վանիկը

մեռնի: Այնքա՜ն մարդ է մեռնում... Եվ վերջապես ավելի լա՞վ չէ մեռնել, քան թե ամբողջ էությամբ կարոտել մի բրդուճ հացի, մի եփած կարտոֆիլի կամ կաղամբի մի հում կոթի...»
Մտածում էր Վանիկն ու իրենից անկախ թոկը ձիգ տալիս:
Պարկը բարձրացնելուց հետո նրա գլուխը պտտվեց, և նա սկսեց լիզել քարերն ու հրացանի սառը փողը...
Այնինչ անցքը կապտում էր: Մոտենում էր ահավոր գիշերը...
Վանիկն ընկել էր չոր քարի վրա ու հևում էր: Մեկը մյուսից ավելի զարհուրելի պատկերներ էին անցնում նրա գլխով: Ամենից շատ նրա աչքերին երևում էր Կուխտու մարդակերպ հրեշը, որ գալիս էր իրեն լափելու: Վանիկն այնպես էր թուլացել, որ ոչ մի սոսկալի պատկեր այլևս ահ չէր պատճառում նրան: Իսկ երբ մի փոքր սթափվում էր պատրանքներից, դժվարանում էր զանազանել, թե դրանցից ո՜րն է երազ եղել, որը՝ իրականություն:
Ուտելու պահանջը մեղմացել էր, և դա մի տեսակ հանգստություն էր բերել Վանիկին: Սակայն նա չգիտեր, որ սովամահ լինողներն իրենց կյանքի վերջին րոպեներին այլևս քաղց չեն զգում և մեռնում են թեթև ու հանգիստ:
Լուսաբացին նրա քունը տարավ: Արթնացավ, երբ արևը դիպել էր անցքի եզրին: Նայեց վեր, շունը թազնել էր այնտեղ ու տխուր նայում էր իրեն... «Չեմ մեռել,— եղավ նրա առաջին միտքը,— եթե մեռած լինեի, շունը կոռնար ու ես չէի տեսնի արևի լույսը»: Ձեռքերը քարերին հենելով՝ նա մի կերպ վեր կացավ ու տեսավ, որ հանքաքարով լիքը վերջին պարկն արդեն բարձրացրել է վեր: Այդ բանը ուրախացրեց նրան: Մեծ ճիգ գործ դնելով՝ պարկը դատարկեց, քարերը շարեց մյուսների վրա ու նայեց անցքին:
Այլևս նոր միջոց մտածելու ոչ ուժ կար, ո՜չ ժամանակ: Քանի դեռ քունը լրիվ չի անցել գլխից ու զզվելի քաղցը չի բռնել կոկորդը, պետք է դիմել վերջին քայլին: Պետք է փորձել բարձրանալ վեր:
Բայց կարո՞ղ է ձեռքը հասցնել անցքի եզրին: Իսկ եթե հասցրեց, ուժերը կհերիքե՞ն, որ մարմինը ձգի, բարձրացնի վեր, թե՞ թուլացած վայր կընկնի...
Բայց և այնպես պիտի փորձել: Վճռական քայլի մոտիկությունը և ոգևորում, և սարսափեցնում էր Վանիկին: Ոգևորվում էր փրկության հույսից, սարսափում՝ այն մտքից, որ իր ուժերը չեն պատի՝ վերջին թռիչքը կատարելու համար և կընկնի քարերի վրա ու կջախջախվի...
Բայց ինչ էլ լինի, պետք է դիմել այդ քայլին:
Նա վրայից հանեց պիջակն ու կոշիկները, որ թեթև լինի և ոտքերը լավ հենվեն ժայռի լերկ լանջին, դրանք փաթաթեց, դրեց պարկի մեջ, որտեղ հանքաքարի մի քանի բեկոր էր թողել: Ապա պարանը կապեց պարկին և նայեց վեր... Եթե կարողանա բարձրանալ, ապա այնտեղից կնգի, կհանի շորերն ու հրացանը:
Այս նախապատրաստական աշխատանքը կատարելուց հետո նա կանգնեց ամենավերջին քարի վրա և աջ ձեռքը մեկնեց դեպի անցքը: Հրա՞շք է, ի՜նչ է... Ահա մատները հասել են անցքի եզրին և ամուր կառչել նրան...
Վանիկը խոր շունչ քաշեց, բարձրացրեց ձախ ձեռքը ևս: Ահա արդեն երկու ձեռքով բռնել է անցքի պռունկը: Իսկ ինչո՞ւ են մատները խուտուտ գալիս, կարծես ասեղներով ծակծկում են: Հա՜... արևից է: Ախր ինչքան ժամանակ է, որ իր մատները արևի երես չեն տեսել... Ամուր կառչելով անցքի եզրից, Վանիկը ձգվեց ու կախ ընկավ: Մի պահ նրա աչքերը մշուշվեցին: Ձեռքերը թուլացան և թվաց, թե այլևս ուժ չի ունենալու կախված մնալ: Բայց նա կարողացավ բոբիկ ոտքերը հենել ժայռին ու մի քիչ էլ ձգվել... Նրա ծնոտն արդեն հասել է անցքի եզրին... Մի՜ քիչ էլ, մի՜ քիչ էլ ձգվիր, Վանիկ... Այդպե՜ս... Ահա, տեսնո՞ւմ ես, հիմա էլ ուսերդ հասան փրկարար եզրին, եթե արմունկդ կարողանաս հենել ժայռին, ապա այլևս վայր չես ընկնի: Փորձիր: Մի վհատվի, փորձիր...

Բայց ո՞ւժ ունի, որ փորձի: Այլևս ոչ մի ուժ չկար նրա մարմնում: Պարկի պես կախվել էր անցքի եզրից...
Սակայն նա ձեռքերն այլևս չի պոկի բռնած տեղից: Ո՛չ, չի պոկի, թեկուզ մատը օձը կծի: Չէ՞ որ իր ձեռքերի վրա զգում է արևի ջերմությունը, որը ուժ է ներարկում նրա ցամաքած մարմնին:
Վանիկը զգուշությամբ փոխեց ոտքերը, փորձեց նորից ձգվել, բայց չհաջողվեց: Միայն կարողացավ ծնոտն ամուր հենել ժայռի եզրին: Ատամները ճարճատեցին: Այլևս ուժ չուներ, որ մի քիչ էլ ձգվեր և հազիվհազ էր կարողանում անարյուն մատներով, կապտած ծնոտով ու նիհար կրծքով կպած մնալ ժայռին:
Զարհուրելին այն էր, որ գլուխը նորից սկսեց պտտվել: Ուր որ է գիտակցությունը կկորցնի ու... Եվ այդ ճակատագրական պահին նրա լեզուն բացվեց, ու նա սկսեց աղաղակել...
Դա օգնեց:
Տիրոջ աղաղակից ցնցվելով՝ Ղափլանը վեր կացավ տեղից, մոտեցավ նրան, հոտոտեց նրա դեմքը և ամուր բռնելով նրա բլուզի օձիքը, սկսեց քաշել վեր...
Շան օգնությունը սրտապնդեց սարսափած Վանիկին, և նա կարողացավ երկու ձեռքերի արմունկները հենել ժայռին: Քիչ հետո նա կրծքով ևս հենվել էր գետնին:
— Ղափլա՛ն ջան, քաշի՛ր,— հազիվ կարողանում էր ասել նա ծոծրակին զգալով շան տաք շունչը:
Որքան ուժ ուներ, Ղափլանը քաշում էր նրան: Իհարկե, եթե առաջվա առողջ և ուժեղ Ղափլանը լիներ, մի վայրկյանում կթռցներ իր տիրոջը: Բայց նա էլ այնպես էր հյուծված, որ հազիվ էր կարողանում ոտքերը չռած պահել ու ամբողջ մարմինը լարելով՝ մի կերպ քաշել տղային:
«Ահա թե շունն ինչու չէր գնում գյուղ,— կիսով չափ արդեն ժայռին հենված մտածեց Վանիկը:— Մնացել է, որ ինձ օգնի, իսկ ես նրան հայհոյում էի, նույնիսկ քարկոծում: Դե, բան չկա, հիմա դուրս կգամ: Մի քիչ էլ ուժ արա, Ղափլան, մի քիչ էլ...»
Հանկարծ Վանիկն զգաց, որ ամբողջ մարմնով տարածվել է գետնին ու սողում է փորի վրա...
— Փրկվա՛ծ եմ,— գլուխը բարձրացնելով՝ գոչեց նա ու ոտքի կանգնեց...
Շուրջը լույս աշխարհն էր՝ արևոտ, սքանչելի աշխարհը: Վանիկի աչքերը կկոցվեցին, լցվեցին մշուշով: Ուրախությունից գլուխը կորցրեց ու դանդաղ չոքելով գետնին՝ սկսեց համբուրել խոնավ հողը, մաքուր, ասես լվացված ժայռը...

* * *

Արևը հաճելի ջերմություն էր լցնում Վանիկի մարմինը: Մաքուր օդից չէր կշտանում նա: Բայց միևնույն ժամանակ չէր կարողանում աչքերը լայն բաց անել: Նրանք երբեմն մշուշվում էին ու թվում էր, թե ինքը նորից անթափանց խավարի մեջ է: Բայց հետզհետե վարժվեց լույսին և ագահորեն սկսեց դիտել շրջապատը:
Առաջին բանը, որ տեսավ՝ Կապուտան լիճն էր: Ինչպիսի կախարդական գույներով էր ողողվել լիճը: Կարծես հազարավոր ծիածաններ էին փռվել նրա վրա: Լիճն արդեն ազատվել էր սառցե ծածկոցից: Շրջակա սարերի ձյունները հալվում էին ու աղմուկով թափվում նրա մեջ: Սարերը դեռ ծածկված էին ձյունով, բայց նրանց արևկող լանջերի հողը սևին էր տալիս: Կարծես լեռնաշխարհի սպիտակ զգեստը կարկատվել էր սև թավշի կտորներով: Նրանց վրա բեկբեկում էր ճերմակ շղարշը, իջնում դեպի լիճը, սլանամ նրա երփներանգ հայելու վրայով:
— Գարո՛ւնը...— անսպասելի ուժով ճչաց Վանիկը և ձեռքերն այնպես տարածեց, որ կարծես ուզում էր գրկել ողջ լեռնաշխարհը:
Մահվան քարանձավից դուրս գալուց հետո նրա տկար մարմինը մի նոր ուժ էր ստացել, նա պատրաստ էր ճչալ, երգել, նույնիսկ թռչկոտել փրկության անցքի առջև գտնվող հողապատառի վրա: Նա կռացավ դեպի անցքը, թոկը քաշեց, բարձրացրեց հրացանն ու

պարկը, որի մեջ հանքաքարի մի քանի բեկորի հետ գտնվում էին նաև կոշիկներն ու պիջակը: Նա արագ հագավ կոշիկներն ու պիջակը, հրացանն ու տոպրակը շալակեց, և շուռ գալով դեպի քարանձավը գոռաց.

— Է՛յ, մարդուսկե՛րպ հրեշ, ես հաղթե՛ցի քեզ, հաղթեցի՛... Ահա ես ազատ եմ, փրկվա՛ծ... և այլևս չե՛մ վախենում քեզանից, չէ՛...

Նա թքեց քարանձավի մեջ ու շուռ եկավ՝ ժայռի գլխից իջնելու համար:

Սակայն այստեղ ևս բախտը չժպտաց Վանիկին:

Անցքի մոտից մի տասը քայլ հեռանալուց հետո միայն տեսավ, որ ինքը Կապուտան լճի առափնյա վիթխարի ժայռի մեջտեղը գտնվող փոքրիկ, շատ փոքրիկ հարթության վրա է: Այդ փոքրիկ հարթության գլխին կախված էր լերկ ժայռը, իսկ մյուս երեք կողմերը ուղղահայաց իջնում էին մինչև լճի քարքարոտ ափը: Ո՛չ մի կերպ հնարավոր չէր ժայռի վրայից ցած իջնել:

Սակայն այս անգամ Վանիկը բոլորովին չհուսահատվեց: Ինչ հուսահատություն, երբ ինքն արդեն դուրս է եկել մթին քարանձավից ու իր սեփական աչքերով տեսնում է հայրենի լեռնաշխարհը, լիճը, ձյունից ազատվող հողը...

— Հե՛, հե՛, հե՛յ...— զարմանալի առույգ ձայնով կանչեց նա:— Դե, Ղափլա՛ն, հիմա ես ու դու պարանի օգնությամբ կիջնենք ներքև: Տեսնո՞ւմ ես, ժայռն այնքան էլ բարձր չէ, հազիվ տասը-տասներկու մետր լինի:

Նա հավաքեց անցքի մոտ թողած պարանը, իր գոտին էլ միացրեց նրան ու մի ծայրը կապեց անցքի մոտ եղած ցցաքարին: Հետո շալակի պարկը նետեց ներքև ու քրքջաց:

Այժմ արդեն ինքը կարող է բռնել պարանից և իջնել ներքև: Իսկ Ղափլա՞նը: Դե պարզ է, Ղափլանը չի կարող մարդու պես բռնել պարանն ու իջնել, ձեռք չունի, ոչ էլ կարող է ցատկել այդքան բարձրությունից՝ ուրեմն պետք է Ղափլանին պարանով կապել ու կախ տալով իջեցնել ներքև:

— Մո՛տ եկ, Ղափլա՛ն, հիմա ես քեզ պարանով կիջեցնեմ ներքև: Մի՛ վախենա, ոչ մի վատ բան չի պատահի: Մոտ եկ: Բայց չարության չանես, հա՛, թե չէ կթողնեմ այստեղ ու կգնամ...

Նա պարանի ծայրն ամուր փաթաթեց շան փորին ու հանգուցեց: Բայց երբ շանը հրեց դեպի ժայռի պռունկը, սա սարսափեց ու գլուխը թափահարելով՝ սկսեց աղեկտուր կաղկանձել, փաթաթվել Վանիկի ոտքերին:

— Ի՞նչ ես գժություն անում, այ անբան անասուն,— գոռաց Վանիկը:— Բա որ վախենում ես, ես ի՞նչ անեմ, քեզ ո՞նց իջեցնեմ: Հը՞:

Բայց ինչ արեց-չարեց՝ չկարողացավ համոզել շանը: Միշտ անվախ ու համարձակ Ղափլանը այնպես էր վախենում անդունդից, այնպես էր դողում, որ թվում էր, թե հիմա սրտաճաք կլինի: Դա դեռ ոչինչ, նա սկսեց ատամները կրճտացնել, քիթը վեր քաշել ու թշնամանքով նայել տիրոջը: Մի երկու անգամ էլ քիչ մնաց, որ կծեր Վանիկին:

Ծանր վիճակ էր: Վանիկը այնքան էր բարկացել, որ հրացանի կոթով խփեց շանն ու գոռաց.

— Դե ձայնդ կտրի՛ր, վախկոտի՛ մեկը, բա քեզ թողնեմ այստեղ, որ սատկե՞ս: Ձայնդ կտրիր, ասում եմ: Օրը տարի չէ, հրես կմթնի ու երկուսս էլ գայլի ու գազանի բաժին կդառնանք:

Որպեսզի կարողանա շանը խաբել ու իջեցնել ժայռից, Վանիկը մոր շալով ամուր կապեց նրա աչքերը: Հետո աննկատելի մոտեցրեց ժայռին ու հրեց... Ղափլանը կախվեց ժայռից, նրա աչքերի կապը բաց ընկավ, և խեղճը մի այնպիսի վայնասուն բարձրացրեց, որ ժայռերը դղրդացին: Վանիկը նստել էր ժայռի պռունկին և պարանը դանդաղ բաց էր թողնում: Երբեմն հռհռում էր շան աղեկտուր կլանչոցի վրա:

Երբ Ղափլանին հասցրեց գետնին, խոր հոգոց հանեց: Հրացանը գցեց ուսը, երկու ձեռքով բռնեց պարանն ու սկսեց իջնել... Իսկ երբ ոտքերը հասան գետնին, նա ուրախությունից թավալվեց խոնավ ավազի վրա ու դեռ դողացող շանը գրկելով՝ ասաց.

— Հանգստացի՛ր, Ղափլան ջան, պրծա՛նք..
Շան կապն արձակելով՝ Վանիկը պարկը շալակեց ու գնաց ավազի վրայով: Լիճը մեղմ ճողփում էր: Ալիքները զարնվում էին ափի քարերին ու փշրվում:
Վանիկը քայլում էր ծանր: Այդպես քայլում են երկարատև հիվանդությունից կմախքացած մարդիկ: Ոտքերն այդպես են փոխում զառամյալ ծերունիները:
Հետզհետե քայլելն ավելի դժվարացավ: Մինչև մի ոտքը փոխում էր, սիրտը քիչ էր մնում նվաղի: Ծնկները դողում էին, հաճախ ծալվում:
Ախ, եթե մի պատառ հաց լիներ...
Քարանձավից դուրս գալուց հետո Վանիկը քաղցը մոռացել էր: Նրա մարմնում նոր ուժեր էին հայտնվել, և նա կարողացել էր իջնել ժայռից: Իսկ այժմ, երբ արդեն ազատության մեջ էր, քաղցն իր ամբողջ ուժով զգալ տվեց իրեն և սկսեց սեղմել նրա սիրտը, թուլացնել ոտքերը:
Պարկն էլ մի կողմից էր ծանրանում, թոկերը սեղմում էին ուսը, քերում ոսկրացած մեջքը: Պետք է պարկը թողնել այստեղ: Հո չեն գողանա: Մի քանի օր հետո կգա նրա հետևից: Այդպես էլ արեց, պարկը հանեց մեջքից ու գցեց ավազի վրա: Քայլելը մի քիչ հեշտացավ, ուսը հանգստացավ: Բայց դա միայն մի քանի րոպե տևեց:
Շուտով նրա սիրտն սկսեց խառնել ու գլուխը պտտվել, աչքերը հազիվ էր կարողանում բաց պահել: Իսկ մինչև գյուղ դեռ ահագին ճանապարհ կար: Կկարողանա՞ բարձրանալ Սև սարի լեռնանցքը: Ինչո՞ւ չի բարձրանա: Ահա այսպես կքայլի ավազի միջով, կհասնի Սև սարի տակը, հետո կսկսի վեր բարձրանալ: Կբարձրանա և կհասնի լեռնանցքին: Իսկ այնտեղից թեկուզ գլորվելով կիջնի մինչև գյուղի դիմացի դաշտը:
Բայց ինչո՞ւ են աչքերը շաղվում: Կարծես չի քայլում, ոտքերը չեն շարժվում: Պարզ է, այլևս շարժվելու ուժ չանի: Չպառկի՞ ու սողալով գնա: Սողալո՞վ: Այդպես երեք օրում հազիվ տեղ հասնի: Մինչդեռ այլևս դիմանալու ուժ չունի: Եթե մինչև երեկո մի բան չուտի, անպայման կմեռնի:
Նա մոտեցավ լճին, մատները իրար կցեց, խմեց սառը, սաստիկ սառը ջուրը, որը կարծես եռաց ստամոքսի մեջ: Ապա ջրով շփեց ճակատն ու աչքերը և դառնալով շանը՝ գոռաց.
— Վազիր գյուղ, է՛, այ անպետք, չե՞ս տեսնում, որ մեռնում եմ: Վազիր մերոնց իմաց տուր, շուտ...
Ղափլանը պոչը պտտեց ու մնաց տեղում: Երևի չհասկացավ տիրոջ միտքը:
— Գնա՛, է՛...— լացակումած ճչաց Վանիկը:— Գնա՛, ա՛յ շան ցեղ, ախր ես եմ ուզում, որ գնաս, ես... Լավությո՞ւն ես ուզում անել, ուրեմն վազիր գյուղ, շուտ արա,..
Նա մի քար վերցրեց ու ամբողջ բարկությամբ խփեց անհնազանդ շանը: Ղափլանը ցավից կլանչեց, սակայն հաջորդ քարի հարվածն ավելի սոսկալի էր:
— Գնա՛,— ուժերը սպառելով՝ ճչում էր Վանիկը:— Գնա՛, թե չէ կսպանեմ...
Եվ նա քարերով այնքան խփեց շանը, որ նա պոկ եկավ տեղից ու սլացավ դեպի Սև սարը: Հասկացա՞վ տիրոջ միտքը, թե՞ վախից փախավ, դժվար էր կռահել: Հեռվից սպիտակին էր տալիս նրա վզի ճերմակ ժապավենը:
Վանիկը սրտատրոփ հետևեց շանը, մինչև սա բարձրացավ Սև սարն ու անհետացավ աչքից...
Այլևս ոչ մի ուժ չկար քայլելու: Մեջքը կոտրվում էր, և գետինը ձգում էր դեպի իրեն: Պետք է նստել, պառկել հողի վրա ու սպասել մինչև օգնության գան: Նա հրացանը տնկեց մի փոքրիկ ավազաթմբի մեջ, գլխարկը հագցրեց հրացանի ծայրին ու պառկեց նրա տակ: Պառկեց երեսը դեպի Սև սարի լեռնանցքը, որի վրա սևին էր տալիս ձյունից ազատված ճանապարհը...
Արևը տաքացնում էր նրա ձեռքերը, մեջքը, բայց ոտքերն ասես սառչում էին: Երբեմն նրա գլուխն այնպես էր պտտվում, որ ուշաթափվում էր և երբ գիտակցությանը տեղն էր գալիս՝ մահացողի մռայլ ու սարսափած հայացքով, բայց և հույսով նայում էր Սև սարի

ճանապարհին...
Մի անգամ էլ, երբ ուշքը կորցնելուց հետո աչքերը բաց արեց ու նայեց ճանապարհին, սարալանջով իջնող ձիավորներ նկատեց... Նրանց առջևից սլանում էր Ղափլանը:
— Օգնեցե՛ք,— փորձեց գոռալ, սակայն ձայնը դարս չեկավ բերանից: Մի կերպ չոքելով տեղը՝ նա վերցրեց հրացանը ու կրակեց վերջին փամփուշտը...
Հրացանը ընկավ ձեռքից, ու նա բոլորովին թուլացած փռվեց գետնին:

* * *

Ուշքի եկավ տեղացող համբույրներից: Աչքերը բաց արեց ու դժվարությամբ ճանաչեց հորը... Այնքան վիշտ ու տառապանք կար հոր խանձված երեսին, որ Վանիկը խղճաց նրան և թուլացած ձեռքերով գրկեց նրա վիզը.
— Ապի՛ ջան, վախիլ մի, ես ո՛ղջ եվ...
Քսան ձիավոր շրջապատել էին նրան: Վանիկը դժվար էր ճանաչում շատերին: Բոլորը խոսում էին բարձրաձայն, ինչ-որ խորհուրդներ տալիս միմյանց: Հայրը գրպանից թարմ պանիր հանեց, սեղմեց ու հյութը քամեց Վանիկի բերանի մեջ: Հետո նրան կարագ տվին և մի հում ձու խմեցրին:
Հետզհետե Վանիկի մշուշված աչքերը պարզվեցին, նա սկսեց տեսնել, թե ինչպես է պայծառանում հոր դեմքը: Հայրը նրան դրեց ձիու վրա ու մեջքը ամուր գրկեց:
— Մամին ո՞նց է, ապի՛,— վերջապես խոսեց Վանիկը:
— Լավ է, ցա՛վդ տանեմ, քու ճամփան է պահում...
— Բա ինչի՞ չի եկել:
— Չգիտի: Շունը Գայլաբնի ձորն էր եկել...
Շարժվեցին: Վանիկը ձեռքը պարզեց դեպի ժայռը:
— Խուրջինս այնտեղ է, ապի, նրա մեջ գանձ կա, բերեք:
Երեք ձիավոր սլացան նրա ցույց տված ուղղությամբ:
Այդ օրը 1956 թվականի մայիսի տասնհինն էր...
Ինսունմեկ օր Կուխտունց Վանիկը մնացել էր գետնի տակ:
Մի շաբաթ հետո Վանիկը գնաց դպրոց: Աշակերտները շարք կանգնած դիմավորեցին իրենց խիզախ ընկերոջը: Ուսուցիչները անվերջ համբուրում էին նրան: Աղջիկները լաց էին լինում: Ով ինչով կարողանում, հյուրասիրում էր Վանիկին:
Արդեն շրջկենտրոն էին ուղարկել նրա գտած հանքաքարը:
Տասնհինգ օր հետո, երբ կանաչել էին Զմրուխտ սարի լանջերը ու ֆերմաները գնացել էին յայլաղ, մայրաքաղաքից մի խումբ երկրաբաններ եկան Սոթ:
Նրանք Վանիկի ու Ղափլանի ուղեկցությամբ գնացին Կուխտու քարանձավները:
Երկրաբանները երկար մնացին Սոթի սարերում, իսկ երբ մեկնեցին, հետները տարան Վանիկի ու նրա շան լուսանկարը: Մի ամիս հետո այդ լուսանկարը տպվեց մայրաքաղաքի թերթերում: Թերթերն աշխարհով մեկ ազդարարեցին, որ լեռնային Հայաստանի Սոթ գյուղում ապրող տասնհինգամյա Վանիկ Կուխտունցը Կապուտան լճի ստորգետնյա քարանձավում ինսունմեկ օր ապրելով՝ հայտնաբերել է պղնձահանքերի վիթխարի պաշարներ:
Այնուհետև երկրի բոլոր ծայրերից Վանիկն սկսեց անհամար նամակներ ստանալ: Նամակների մեծ ու փոքր հեղինակները խնդրում էին պատմել, թե ինչպես է նա ինսունմեկ օր իր շան հետ ապրել ստորերկրյա քարանձավում և ինչպես է հայտնաբերել պղնձի հարուստ հանքերը:
Որպեսզի Վանիկը կարողանար պատասխանել հազարավոր հետաքրքրվողներին, ես հանձն առա օգնել նրան և գրեցի նրա պատմությունը:

1957—58
Գորիս—Երևան